ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

# ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

*ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

# ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

*МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ*

# JOURNAL OF YEREVAN UNIVERSITY

*INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE*

**№ 1(43)**
**2024**

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».
Three issues of "Journal of Yerevan University. International Relations, Political Science" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

**Խմբագրական խորհուրդ.**
**Редакционная коллегия:**
**Editorial Board:**
**Գլխավոր խմբագիր՝**
**Главный редактор:**
**Editor-in-chief:**
**Պետրոսյան Գեղամ** *(պ.գ.դ., պրոֆ., gegham.petrosyan@ysu.am)*
**Петросян Гегам** *(д.и.н., проф.)*
**Petrosyan Gegham** *(Sc. D. in History, Professor)*
**Ալթունյան Կատերինա** *(պատ. քարտուղար, ք.գ.թ., դոցենտ, katya.altunyan@ysu.am)*
**Алтунян Катерина** *(отв. секретарь, к.пол.н., доц.)*
**Altunyan Katerina** *(Executive Secretary, PhD in Political Science, Associate Professor)*
**Ազլյան Վահագն** *(պ.գ.թ., դոց., aglyan@ysu.am)*
**Аглян Ваагн** *(к.и.н., доц.)*
**Aglyan Vahagn** *(PhD in History, Associate Professor)*
**Ալեքսանյան Աշոտ** *(ք.գ.դ., պրոֆ., ashalex@ysu.am)*
**Алексанян Ашот** *(д.п.н., проф.)*
**Alexanyan Ashot** *(Sc. D. in Political Science, Professor)*
**Ավագյան Արսեն** *(պ.գ.դ., պրոֆ., a.avagyan@mfa.am)*
**Авагян Арсен** *(д.и.н., проф.)*
**Avagyan Arsen** *(Sc. D. in History, Professor)*
**Գալստյան Խաչիկ** *(ք.գ.դ., պրոֆ., khgalstyan@ysu.am)*
**Галстян Хачик** *(д.п.н., проф.)*
**Galstyan Khachik** *(Sc. D. in Political Science, Professor)*
**Ենգոյան Աշոտ** *(ք.գ.դ., պրոֆ., ashotyengoyan@ysu.am)*
**Енгоян Ашот** *(д.п.н., проф.)*
**Yengoyan Ashot** *(Sc. D. in Political Science, Professor)*
**Եփրեմյան Տիգրան** *(պ.գ.թ., tigran.yepremyan@ysu.am)*
**Епремян Тигран** *(к.и.н.)*
**Yepremyan Tigran** *(PhD in History)*
**Լեպեխին Վլադիմիր** *(ՌԴ, փ.գ.թ., info@i-eeu.ru)*
**Лепехин Владимир** *(РФ, к.ф.н.)*
**Lepekhin Vladimir** *(RF, PhD in Philosophy)*
**Կոմլևա Վալենտինա** *(ՌԴ, ս.գ.դ., պրոֆ., komleva@ranepa.ru)*
**Комлева Валентина** *(РФ, д.с.н., проф.)*
**Komleva Valentina** *(RF, Sc. D. in Sociological Sciences)*
**Կրյուչկով Իգոր** *(ՌԴ, պ.գ.դ., պրոֆ., ikriuchkov@ncfu.ru)*
**Крючков Игорь** *(РФ, д.и.н., проф.)*
**Kryuchkov Igor** *(RF, Sc. D. in History, Professor)*
**Կուրիլև Կոնստանտին** *(ՌԴ, պ.գ.դ., դոց., kurylev-kp@rudn.ru)*
**Курылев Константин** *(РФ, д.и.н., доц.)*
**Kurylev Konstantin** *(RF, Sc. D. in History, Associate Professor)*
**Մանուկյան Ժակ** *(պ.գ.թ., դոց., zhak.manukyan@ysu.am)*
**Манукян Жак** *(к.и.н., доц.)*
**Manukyan Zhak** *(PhD in History, Associate Professor)*
**Մարգարով Ալեքսանդր** *(ք.գ.դ., պրոֆ., amarkarov@ysu.am)*
**Маркаров Александр** *(д.п.н., проф.)*
**Markarov Alexander** *(Sc. D. in Political Science, Professor)*
**Մարուքյան Արմեն** *(պ.գ.դ., պրոֆ., mararmts@yahoo.com)*
**Марукян Армен** *(д.и.н., проф.)*
**Marukyan Armen** *(Sc. D. in History, Professor)*
**Պետրոսյան Վահրամ** *(պ.գ.թ., դոց., samuelson72am@yahoo.com)*
**Петросян Ваграм** *(к.и.н., доц.)*
**Petrosyan Vahram** *(PhD in History, Associate Professor)*
**Սաֆարյան Արամ** *(պ.գ.թ., դոց., aramsafaryan@yahoo.com)*
**Сафарян Арам** *(к.и.н., доц.)*
**Safaryan Aram** *(PhD in History, Associate Professor)*
**Սիլաև Նիկոլայ** *(ՌԴ, պ.գ.թ., n.silaev@inno.mgimo.ru)*
**Силаев Николай** *(РФ, к.и.н.)*
**Silaev Nikolay** *(RF, PhD in History)*
**Քերյան Գարիկ** *(ք.գ.դ., պրոֆ., g.keryan@ysu.am)*
**Керян Гарик** *(д.п.н., проф.)*
**Keryan Garik** *(Sc. D. in Political Science, Professor)*

**© Բանբեր Երևանի համալսարանի ❋ Вестник Ереванского университета ❋ Journal of Yerevan University**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
## INTERNATIONAL RELATIONS


*Գեղամ Պետրոսյան* – Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Համաձայնության պետությունների (Անտանտ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ (1919 փետրվար-1920 հունվար) ............ 5

*Гегам Петросян* – Отношения Республики Армения с государствами Антанты и Соединенными Штатами Америки (февраль 1919 г. - январь 1920 г.)

*Gegham Petrosyan* – Relations of the Republic of Armenia with the Entente States and the United States of America (February 1919-January 1920)

*Աշոտ Ենգոյան* – Ռուսաստանի «փափուկ ուժի» էությունը ԱՊՀ երկրներում (ռուս.) ............ 29

*Ашот Енгоян* – Сущность «мягкой силы» России в странах СНГ

*Ashot Yengoyan* – The Essence of Russia's Soft Power in CIS Countries (rus.)

*Փայլակ Ենգոյան* – Հնդկաստանի չմիավորման քաղաքականության դրսևորումները բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման պայմաններում............ 42

*Пайлак Енгоян* – Проявления политики неприсоединения Индии в условиях формирования многополярного мира

*Paylak Yengoyan* – The Manifestations of India's Non-Alignment Policy in the Conditions of the Formation of the Multipolar World

*Նորա Գևորգյան* – ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ռազմավարությունը Հայաստանի նկատմամբ............ 58

*Нора Геворкян* – Стратегия «мягкой силы» во внешней политике США в отношении Армении

*Nora Gevorgyan* – The Soft Power Strategy in the American Foreign Policy towards Armenia

*Նուշիկ Պետրոսյան* – Գերմանիայի դիրքորոշումը բոլշևիկյան հեղաշրջման հարցում (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. մարտ) ............ 71

*Нушик Петросян* – Позиция Германии по большевистской революции (октябрь 1917г. – март 1918 г.)

*Nushik Petrosyan* – Germany's Position on the Bolshevik Revolution (October 1917 - March 1918)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE

*Էդգար Քալանթարյան* – Կազմակերպությունների կառավարման արդյունարար ազդակը. բարեկիրթ առաջնորդություն .................................... 83
*Эдгар Калантарян* – Продуктивный импульс управления организациями: вежливое лидерство
*Edgar Kalantaryan* – The Productive Impulse of Management of Organization: Kind Leadership

*Մարիամ Գզողյան* – Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման արդիականացման հիմնախնդիրները.................................................................................................................. 93
*Мариам Гзогян* – Проблемы модернизации информационной безопасности Республики Армения
*Mariam Gzoghyan* – Problems of Modernization of Information Security of the Republic of Armenia

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), ապրիլ, 5-28
https://doi.org/10.46991/BYSU:D/2024.15.1.005

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆՏԱՆՏ) ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԵՏ (1919 փետրվար-1920 հունվար)

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում համակողմանիորեն ներկայացվում և ամբողջացվում են այն հիմնական պատճառները, թե ինչու Հայաստանի Հանրապետությունն իր գոյության առաջին փուլում (1918 թթ. հունիս-նոյեմբեր) չէր կարող ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն վարել և դիվանագիտական հարաբերություններ հաստատել Համաձայնության դաշինքի՝ Անտանտի մեծ դաշնակիցների և դաշինքին հարող պետությունների հետ:

Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների վերջնական պարտությամբ ստեղծված աշխարհաքաղաքական բարենպաստ նոր իրադրությունում Հայաստանի Հանրապետությունն այլևս ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքականությունը և կարող էր դիվանագիտական ավելի ակտիվ հարաբերություններ հաստատելու ջանքեր գործադրել Անտանտի պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների, Հայաստանի Հանրապետության համար ավելի քան կենսական և անվտանգային նշանակություն ունեցող Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների և այլ պետությունների հետ:

Քննության է առնվում քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը՝ հարաբերությունների հաստատումը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ: Բացահայտվում և ցույց են տրվում նաև այդ հարաբերությունների հաստատման քաղաքական, դիվանագիտական, տեխնիկական բազմաթիվ ու բազմաբնույթ դժվարությունները և խոչընդոտները:

* **Գեղամ Պետրոսյան** – պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի պրոֆեսոր
**Гегам Петросян** – доктор исторических наук, профессор кафедры международных отношений и дипломатии ЕГУ
**Gegham Petrosyan** – Sc. D. in History, Professor at YSU Chair of International Relations and Diplomacy.
Էլ. փոստ՝ gegham.petrosyan@ysu.am, ORCID: https://orcid.org/0000-0002-1603-8383.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 02.02.2024
Գրախոսվել է՝ 05.03.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

**Բանալի բառեր** – *Հայաստանի Հանրապետություն, Համաձայնության պետություններ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումներ, օսմանյան Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան*

1918 թ. մայիսի վերջին՝ երկարատև ընդմիջումից հետո, վերականգնվեց հայկական անկախ պետականությունը: Այն ձեռք բերվեց ազգամիջյան լարված հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման, դիվանագիտական և ռազմական դիմակայությունների բարդագույն պայմաններում:

Որպես կանոն՝ ամեն մի նորաստեղծ պետություն ձգտում է անմիջապես դուրս գալ միջազգային ասպարեզ՝ հասնելու իր անկախության ճանաչմանը և բազմաթիվ, բազմաբնույթ կապեր ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելու այլ պետությունների հետ դեսպանների մակարդակով: Հայաստանի պարագայում այդ խնդրի լուծումը կապված էր լուրջ դժվարությունների հաղթահարման հետ: **Օսմանյան Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը դրել էր շրջանակների մեջ՝ թույլատրելով նրան հարաբերությունների մեջ մտնել միայն անմիջական հարևանների և իր դաշնակից Քառյակ միության ու նրան հարող պետությունների հետ**[1]:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծումից մոտ մեկ շաբաթ անց՝ 1918 թ. հունիսի 13-ին, երբ հայկական պատվիրակությունն ուղևորվում էր Կոստանդնուպոլիս, Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի, Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունու և արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանի ստորագրությամբ, ինչպես ենթադրվում էր, **առաջին պաշտոնական նոտան** Թիֆլիսից ուղարկվեց Կոնստանդնուպոլիս՝ Իրանի, Շվեդիայի, Իսպանիայի, Դանիայի, Հոլանդիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Բուլղարիայի դեսպանությունների ներկայացուցիչներին՝ խնդրելով իրենց կառավարություններին տեղեկացնել անկախ Հայաստանի պետականության ստեղծման փաստի մասին[2]:

**Սակայն ամենևին էլ զարմանալի կամ պատահական չէր, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության իշխանությունները նման պաշտոնական նոտա չհղեցին Համաձայնության դաշինքի՝ Անտանտի գլխավոր տերություններին՝ Ֆրանսիային, Անգլիային, մեծ դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգներին և դաշինքին հարող պետություններին:** Դա կարող էր առիթ տալ օսմանյան Թուրքիային՝ ռազմական նոր գործողություններ սկսելու Հայաստանի

---

[1] Մանրամասն տե՛ս **Г. А. Петросян**, Закавказье в дипломатических перипетиях: становление Армянской независимой государственности (февраль 1917 – июнь 1918 гг.), Եր.: изд-во ЕГУ, 2019, էջ 249-298:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 1ա, 2ա, 5ա, 7ա, 9ա:

Հանրապետության դեմ: Բանն այն է, որ դեռևս Բաթումում հայ-թուրքական հաշտության դաշնագրի ստորագրման նախօրեին՝ հունիսի 3-ին, հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը օսմանյան Թուրքիայի պարտադրանքով ստորագրել էր մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ամբողջ ընդհանուր պատերազմի (Առաջին աշխարհամարտի – Գ. Պ.) ընթացքում ոչ մի դիվանագիտական հարաբերություն չունենալ Օսմանյան կայսրության հետ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ»[3]: Այդ փաստաթղթից ակնհայտորեն բխում էր, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից՝ Առաջին աշխարհամարտի ողջ ընթացքում դիվանագիտական հարաբերություններ չունենալ Համաձայնության պետությունների՝ Անտանտի, այդ թվում նաև Ռուսաստանի հետ, թեև վերջինս 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով դուրս էր եկել պատերազմից, **իսկ մյուս կողմից՝ հանրային կարծիքին ներկայացնել այդ փաստաթուղթը նշանակում էր փորձության ենթարկել Հայաստանի Հանրապետության կառավարության վարկը**, որովհետև, ինչպես գրում է Ա. Ջամալյանը, «ռուսահայերը երազում էին ռուսական տիրապետության վերադարձի մասին»[4]: Իրողությունն այն էր, որ հայ քաղաքական ու հասարակական լայն շրջաններին հայտնի չէր այդ փաստաթղթի (պարտավորագրի) գոյության մասին: Առավել ևս պատահական չէր, որ օգոստոսի 3-ի Խորհրդի երկրորդ նիստում Հովհ. Քաջազնունին, պայմանավորված հունիսի 3-ի Բաթումի պարտավորագրով, շրջանցեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Համաձայնության տերությունների (Անտանտի) և դաշինքին հարող այլ պետությունների վերաբերյալ[5]:

Իրականում Հայաստանի Հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր)՝ մինչև օսմանյան Թուրքիայի վերջնական պարտությունն Առաջին աշխարհամարտում, թե՛ հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը և թե՛ հունիսի 4-ի հայ-թուրքական հաշտության դաշնագիրն ու դրան կից լրացուցիչ հավելվածի 2-րդ հոդվածի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին երկրի համար՝ ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն վարելու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու Անտանտի տերությունների, մասնավորապես դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգների և դաշինքին հարող այլ պետությունների հետ:

Այդ դրությունը երկար չտևեց՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների վերջնական պարտությամբ: Նոյեմբերին ուժը կորցրին հունիսի 3-ի պարտավորագիրը և հայտնի

---

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 32, թ. 6:

[4] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 78:

[5] Մանրամասն տե՛ս **Գեղամ Պետրոսյան,** *Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ., գիրք առաջին,* Եր. 2023, ԵՊՀ հրատ., էջ 174-197, 287-314:

դաշնագիրը: Թեև դրանք ուժի մեջ էին մտել ստորագրման պահից, սակայն միջազգային իրավունքի տեսանկյունից իրավական ուժ չունեին, քանի որ դրանք չէին վավերացրել ո՛չ Օսմանյան և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունները, ավելին՝ չէին ճանաչվել նաև Քառյակ միության երկրների, Անտանտի, Խորհրդային Ռուսաստանի և այլ երկրների կողմից:

Ստեղծված աշխարհաքաղաքական բարենպաստ նոր իրադրությունում Հայաստանի Հանրապետությունն այլևս ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքականությունը և կարող էր դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ավելի ակտիվ ջանքեր գործադրել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Անգլիայի, Հայաստանի Հանրապետության համար ավելի քան կենսական և անվտանգային նշանակություն ունեցող՝ Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների և այլ պետությունների հետ: Սակայն առջևում նոր փորձություններ և դժվարին օրեր էին սպասվում:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը հարաբերություններ հաստատելն էր Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ: Այդ գործընթացը սկսվեց 1919 թ. սկզբներին՝ հանդիպելով քաղաքական, դիվանագիտական, տեխնիկական բազմաթիվ ու բազմաբնույթ դժվարությունների և խոչընդոտների:

1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի Խորհուրդը ընդունեց օրենք մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունուն Եվրոպա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղելու մասին՝ Հայաստանի Հանրապետության համար հաց, պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հայթայթելու նպատակով[6]: Հովհ. Քաջազնունու գլխավորած պատվիրակությանն իրավունք վերապահվեց նաև Հայաստանի Խորհրդի և կառավարության անունից բանակցություններ վարելու այլ պետությունների քաղաքական, պետական բարձրաստիճան պաշտոնյաների և այլ ներկայացուցիչների հետ:

Ուշագրավ է, թե ինչու անկախացման առաջին ամիսներին երկրում ստեղծված ներքին և արտաքին քաղաքական, տնտեսական, անվտանգային ծանրագույն պայմաններում Հայաստանի Խորհուրդը, որի մեծամասնությունը կազմում էր «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, ընդունեց օրենք՝ վարչապետ Հովհ. Քաջազնունու գլխավորությամբ պատվիրակություն գործուղելու Եվրոպա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Այդ ամենը նախապես ծրագրված էր և ամենևին պատահական չէր: Նպատակը վարչապետ Հովհ. Քաջազնունուն մեկուսացնելն էր պետական կառավարման գործընթացից:

Բանն այն է, որ դեռևս չէր ապահովվել երկրի պետական համակարգի տարբեր թևերի ներդաշնակ, փոխկապակցված աշխատանքը. տարաձայնություններ կային օրենսդիր մարմնի, կառավարության և գերակա քաղաքական

---

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 103:

ուժի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության միջև:

Այդ կապակցությամբ Հովh. Քաջազնունին հետագայում գրում է. «Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողության տակ առնել թե՛ օրենսդիր մարմինը, թե՛ կառավարութիւնը:

<…> կուսակցութեան միջամտութիւնը թոյլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր զիտցածն անի, իր գիծը տանի»[7]:

Ըստ երևույթին նման վիճակն անխուսափելի էր. ժողովրդավարական քաղաքական-պետական համակարգի ձևավորումը դյուրին խնդիր չէր: Վարչապետը ճիշտ էր պատկերացնում դրա լուծումը. իշխանության գլուխ անցած «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը չպետք է մենիշխանություն հաստատեր, այլ պետք է ասպարեզը թողներ խորհրդարանին և կառավարությանը:

Սակայն Հովh. Քաջազնունուն չհաջողվեց առաջ մղել իր տեսակետը և հաղթահարել կուսակցության ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում: Հետևանքը եղավ այն, որ նրան մեկուսացրին պետական կառավարման գործընթացից: Այդ առիթով Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «**Քաջազնունու … բացակայութիւնը – ըստ էութեան հեռացումը – կը նշանակէր դաշնակցութեան ազդեցութեան ուժեղացումը**»[8] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Երկու օր անց՝ փետրվարի 15-ին, Հովh. Քաջազնունու գլխավորած պաշտոնական պատվիրակությունը ուղևորվեց Թիֆլիս՝ Եվրոպա և ԱՄՆ մեկնելու նպատակով: Սակայն Թիֆլիսում անգլիական զինվորական հրամանատարությունը մոտ երեք ամիս միտումնավոր խոչընդոտեց պատվիրակության անդամ Սիմոն Վրացյանի մուտքի թույլտվությունը այդ երկրներ: Ս. Վրացյանը ստիպված էր վերադառնալ Երևան: Ապրիլի 2-ին Երևան վերադարձավ նաև Հովh. Քաջազնունին: Անգլիական զինվորական հրամանատարությանը հայտնի էր դարձել, որ Ս. Վրացյանը 1918 թ. հունիսի վերջին հատուկ առաքելությամբ Թիֆլիսից մեկնել էր Ռուսաստանի տարբեր շրջաններ և մինչև հոկտեմբերի վերջը լայն գործունեություն էր ծավալել Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ կապ ստեղծելու ուղղությամբ, որը «...կարող էր անմիջական օգնություն հասցնել Հայաստանին՝ առաքելով հաց, սննդամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ»[9]:

Մինչդեռ 1917 թ. դեկտեմբերի 23-ին Փարիզում Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը բաժանվել էր ազդեցության ոլորտների: Մեծ Բրիտանիան տնօրինելու էր Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Թուրքեստանը, Ֆրանսիայի վերահսկողության ոլորտի մեջ էին մտնելու Բեսարաբիան, Ուկրաինան, Ղրիմը և Դոնբասը[10]:

---

[7] **Յովh. Քաջազնունի**, Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 32:

[8] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Թեհրան, 1982, էջ 27:

[9] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, Ե հատոր, Բէյրութ, 1966, էջ 14:

[10] Տե՛ս Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГАСПИ), ф. 71, оп. 35, д. 195, л. 151:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան ձեռնամուխ եղավ Կովկասը Ռուսաստանից վերջնականապես մեկուսացնելու և Անդրկովկասում իր ազդեցությունը հաստատելու գործին: Անդրկովկասի նշանակությունը մեծ էր Անգլիայի համար՝ որպես ռազմավարական կարևոր դիրք ունեցող տարածաշրջան, որը պետք է դառնար բոլշևիկների՝ դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացումը կանխող արգելապատնեշ: Մեծ Բրիտանիայի մյուս հետաքրքրությունը, անշուշտ, Բաքվի նավթն էր[11]:

Անդրկովկասում հաստատվելու և իր ռազմավարությունը կյանքի կոչելու համար Մեծ Բրիտանիան, բնականաբար, պետք է հաղթահարեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը և հասներ այն բանին, որ Անդրկովկասն այլևս չմտներ նրա կազմի մեջ: Պատահական չէր գեներալ Ջ. Ուոքերի հայտարարությունը. «***Անգլիացիները չեն կարող թույլ տալ Ռուսաստանի հետ Անդրկովկասի վերամիավորվելուն ուղղված որևէ քարոզչություն***»[12] (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Դա անգլիացի գեներալը պատճառաբանում էր այս կերպ. «Խաղաղության վեհաժողովը Անդրկովկասի պետական կառուցվածքի հարցի լուծումը դեռևս չի տվել»[13]: ***Ըստ այդմ հասկանալի էր, որ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ձգտումը՝ վերականգնելու ռուսական նախկին սահմանները, որը հակասում էր Անգլիայի շահերին, ուստի նա աշխատում էր Անդրկովկասն ազատել ռուսական ազդեցությունից: Այդ պատճառով էլ անգլիական զինվորական հրամանատարությունը դեմ էր Կամավորական բանակի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին և ձգտում էր խզել դրանք:***

Հայաստանի կառավարությունը քաղաքական նոր պայմաններում չկարողացավ իր արտաքին քաղաքականությանն այնպիսի ճկունություն հաղորդել, որ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերի բախումից հանրապետությունը չտուժի: Առաջին աշխարհամարտում կրած հարվածների ազդեցությամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունները շարունակում էին Ռուսաստանի հարավը համարել Համաձայնության պետությունների դաշնակից՝ իրենց բարեկամ: Նրանք չկարողացան ժամանակին և ճիշտ գնահատել պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի քողարկված, երբեմն բացահայտ հակառուսական քաղաքականությունը Անդրկովկասում: Մեծ Բրիտանիան ձգտում էր տարածաշրջանից դուրս մղել Ռուսաստանի հարավը տնօրինող ուժերին և այնտեղ ամրապնդել իր դիրքերը: Պատահական չէ, որ նա չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հետ և նրան համարում

---

[11] Տե՛ս **Ллойд Джордж Д.**, Правда о мирных договорах, т. 1, М., 1957, էջ 274-276, 279-280, **Черчилль У.**, Мировой кризис, М., 1932, էջ 157:

[12] Революция и гражданская война в описаниях белогвардейцев, М., 1991, "Вопросы истории", №1, 1994, с. 126, **Деникин А.,** Очерки русской смуты: В. 3 книгах. -Книга 3. Т. 4, Т 5. Вооруженные силы Юга России, с. 204.

[13] Նույն տեղում:

էր անուղղելի ռուսասեր, անվստահելի տարր Անդրկովկասում: Հայերը բրիտանացիների վստահություն չէին ներշնչում ավանդական ռուսական կողմնորոշման պատճառով, ուստի բոլոր միջոցները օգտագործում էին պայքարելու հայերի ռուսամետության դեմ: Ահա թե ինչու պաշտոնական Երևանը ձեռնպահ մնաց Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց: Եթե Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում «դաշնակից» Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը, ապա իր պոտենցիալ թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձերը կարող էին ընդհանրապես անկանխատեսելի և ծանր հետևանքներ ունենալ երկրի համար:

Հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով անգլիացիները օգտագործում էին պայքարի բոլոր ձևերն ու միջոցները: Օրինակ՝ ամեն կերպ արգելափակում էին հայկական պատվիրակության մեկնումը Փարիզ՝ գտնելով, որ նրա անդամներն ունեն ռուսական կողմնորոշում և կապի մեջ են Կամավորական բանակի հետ:

Հովհ. Քաջազնունին հարկադրված ձևավորեց պատվիրակության նոր կազմ՝ առանց Ս. Վրացյանի:

Երկար ձգձգումներից հետո անգլիական զինվորական հրամանատարությունը թույլատրեց Հովհ. Քաջազնունու կազմած նոր պատվիրակությանը մայիսի 18-ին Թիֆլիսից ուղևորվել Եվրոպա[14]: Ամիսներ շարունակ պատվիրակությունը չստացավ պաշտոնական Փարիզի և Լոնդոնի հուսադրող աջակցությունը՝ ներկրելու Հայաստանի Հանրապետություն ալյուր, պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

Պատվիրակությունը որոշեց հոկտեմբերի սկզբին մեկնել Նյու Յորք, ապա՝ Վաշինգտոն՝ Հայաստանի Խորհրդի անունից ամերիկյան կառավարությանը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական և անվտանգային ծանր վիճակը՝ ակնկալելով ԱՄՆ-ի օգնությունը: Պատվիրակությանը միացավ դեռ 1917 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղված, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի ներկայացուցիչ, հայտնի գործիչ, օսմանյան Թուրքիայի խորհրդարանի նախկին անդամ **Գարեգին Փաստրմաճյանը** (Արմեն Գարո), որի հիմնական առաքելությունն էր ամերիկյան կառավարության և հասարակության շրջանում ներկայացնել Հայ դատը[15]:

Պատվիրակությունը Վաշինգտոնում ակտիվորեն մասնակցեց ԱՄՆ Սենատի հանձնաժողովի լսումներին, հանդիպումներ ունեցավ ամերիկյան վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների և այլ ներկայացուցիչների հետ՝ բարձրացնելով Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական և

---

[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 59, թ. 1:

[15] Տե՛ս **Լիլիթ Հովհաննիսյան,** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Եր., 2008, էջ 146-147:

անվտանգային աջակցության խնդիրները: Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում «Խաղաղության պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո ընթացող լսումներում Հայաստանի Հանրապետության Խորհրդի և կառավարության անունից հաղորդմամբ հանդես եկավ պատվիրակության նախագահ Հովհ. Քաջազնունին[16]:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից պարենային օգնությունը Հայաստանի Հանրապետությանը շատ չուշացավ: Սակայն նրա կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու և ռազմական օժանդակություն ցուցաբերելու խնդրանքները մերժվեցին, քայլեր չձեռնարկվեցին նաև Հայաստանի Հանրապետության de facto ճանաչման օգտին մինչև 1920 թ. հունվարի 19-ը:

Ինչպես վերը նշվեց, քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը դրսևորեց արևմտյան կողմնորոշում՝ ակնկալելով, որ Համաձայնության պետությունները կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը Առաջին աշխարհամարտի հաղթության գործում և, հաշվի առնելով կրած մեծ զոհողությունները, տարածքային կորուստները, կցուցաբերեն բարի կամք և կաշխատեն լուծել նրա կենսական խնդիրների գոնե մի մասը:

Այս առումով Հայաստանի Հանրապետությունը մեծ ակնկալիքներ ուներ Փարիզի խաղաղության վեհաժողովից, որին, սակայն, Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես հրավիրված չէր:

Համաձայնության պետությունների ղեկավարները որոշել էին, որ վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու են միայն պատերազմում հաղթանակած երկրները և այն պետությունները, որոնք խզել էին հարաբերությունները Կենտրոնական տերությունների հետ: Արտահայտելով դաշնակիցների դիրքորոշումը հայերի մասնակցության հարցին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը նշել էր, որ «…հաշտության վեհաժողովի պատվիրակների մեջ ամեն տեղ ես ամենուրեք առավել անկեղծ և անմիջական համակրանք եմ տեսնում հայերի հանդեպ», բայց, ցավոք, «տեխնիկապես շատ դժվար է ներկայացուցչություն հատկացնել քաղաքական միավորների, որոնք դեռևս չեն ընդունվել պետությունների ընտանիք»[17]: Այնուհետև Վ. Վիլսոնը ավելացնում է, որ ինքը այնպիսի ակտիվ աշխատանք կծավալի Հայ դատի լուծման համար, որը համարժեք կլինի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին հայկական պատվիրակների մասնակցությանը[18]:

Փարիզի խաղաղության վեհաժողովը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին: Հայությունը մեծ հույս ուներ, որ վեհաժողովը կհատուցի պատերազմի տարինե-

---

[16] Տե՛ս **Արմենուհի Ղամբարյան**, Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքացիական առաքելությունն ԱՄՆ (1919 թ. վերջ – 1920 թ. սկիզբ), «Պատմաբանասիրական հանդես», № 3, Եր., 2021, էջ 136:

[17] **Ռ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Առաջին տարին, 1918-1919, հատոր I, Եր., 2005, էջ 280:

[18] Տե՛ս նույն տեղը:

րին իր կրած վիթխարի կորուստները և կնպաստի ազգային իղձերի իրականացմանը: 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ժամանեց Փարիզ, որտեղ արդեն գտնվում էր Արևմտահայ ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Սկզբից նեթ բացառվեց երկու պատվիրակություններից հայության միասնական կամքն արտահայտող միացյալ պատվիրակություն ստեղծելու ջանքերը, քանի որ առանցքային մի շարք հարցերում լուրջ տարաձայնություններ առաջացան, որոնք էլ իրենց բացասական ազդեցությունն ունեցան Հայկական հարցի դրական լուծման ընթացքի վրա:

Տևական բանակցություններից հետո՝ 1919 թ. փետրվարի 25-ին, վեհաժողովին ներկայացվեց հայության միասնական պահանջը՝ ճանաչել հայկական պետությունը՝ Կովկասյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները, Կիլիկիայի չորս սանջակները ներառող սահմաններով: Առաջարկվում էր Հայաստանը դնել դաշնակիցների հոգածության ներքո և առնվազն քսան տարով պետություններից մեկին հանձնել նրա մանդատը: Հայկական պատվիրակությունները ցանկություն հայտնեցին *միացյալ, անկախ և ազատ Հայաստանի* հովանավորությունը (մանդատը) հանձնել Ամերիկայի Միացյալ Նահանգներին կամ էլ նոր կազմվելիք Ազգերի լիգային: Ապրիլի 17-ին Պողոս Նուբար փաշային և Ա. Ահարոնյանին ընդունեց Վուդրո Վիլսոնը և հայտարարեց. «Եթե երբևէ Ամերիկան որևէ երկրի մանդատ ընդունելու լինի, դա անպատճառ կլինի Հայաստանը»[19]: Ա. Ահարոնյանը ապրիլի 24-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված նամակ-զեկույցում խնդրում էր ***շտապ հրապարակել միացյալ, անկախ Հայաստանի հռչակագիրը, որով վերջ կդրվի երկու պատվիրակությունների դուալիզմին և հնարավորություն կստեղծվի քաղաքական աշխարհի առջև ներկայանալու մեկ ճակատով***[20]: Վերջում Ա. Ահարոնյանը կարևոր էր համարում նշել. «Շուտով միջազգային հանձնարարություններ պետք կլինի անել, պայմանագրեր ստորագրել՝ ֆինանսական ու տնտեսական, փոխառություն կնքել, մանդատ հանձն առնող պետության հետ հարաբերության մեջ մտնել, նույնիսկ մանդատի պայմանները քննության ենթարկել: Այս բոլորի համար անհրաժեշտ է *միացյալ Հայաստանի* միացյալ կառավարություն…»[21]: Ինչպես երևում է նամակ-զեկուցագրից, հայկական պատվիրակությունը Հայաստանի երկու մասերի միավորման, մեկ միասնական պետություն ստեղծելու հնարավորության իրական հույսեր էր փայփայում: Մնում էր ապահովել նախատեսվող, սպասվելիք գործառույթների իրավական հիմքը՝ *միացյալ, անկախ Հայաստանի* հռչակագրի ընդունումը:

***Այդ պատմական ակտի հռչակման համար ստեղծվել էր նաև մի կարևոր***

---

[19] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 428, 459, գ. 35, թ. 118:

[20] Տե՛ս նույն տեղը, թ. 435:

[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 435:

***նպաստավոր հնարավորություն. հանրապետության տարածքներն ընդարձակվել էին:*** Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքերը Անդրկովկասի գրավյալ տարածքներից հեռացել էին մինչև 1914 թ. սահմանները, և, ինչպես գրում է Ա. Ջամալյանը, Հայաստանի «…անկախութեան գլխաւոր խոչընդոտը, վերացաւ մեջտեղից»[22]: Մինչև ապրիլ-մայիս Հայաստանի Հանրապետությանը միացվեցին Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Սուրմալուն, Կաղզվանը, Շարուրը, Նախիջևանը, վերադարձան տարբեր վայրերում ապաստանած հայ փախստականները[23]: Հայաստանի Հանրապետության պառլամենտի 1919 թ. օգոստոսի 5-ի նիստում վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանը հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքը 40920 քառ. վերստ է, բացի նրա անբաժան մաս Սյունիքից (**Զանգեզուրից), որը կազմում է 6742 քառ. վերստ**[24]: Վերամիավորված բոլոր տարածքներում հաստատվեց հայկական վարչակարգ՝ իր զինական ուժով:

***Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի անկախության հռչակագրի հրապարակմանը դրականորեն արձագանքեց Մեծ Բրիտանիան:*** Ինչպես արդեն նշել ենք, Մեծ Բրիտանիայի համար անընդունելի էր Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը, որի նպատակն էր նախկին Ռուսական կայսրության տարածքների վերականգնումը 1914 թ. սահմաններով: Այդ պատճառով էլ նա ձգտում էր խանգարել ռուսներին՝ Անդրկովկասը մեկուսացնելով Ռուսաստանի հարավից: Գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ Մեծ Բրիտանիայի «իրական քաղաքականության ձայնը» իրենց հայտնի դարձավ, երբ Լ. Ջորջը 1919 թ. նոյեմբերի 17-ին Համայնքների պալատում հայտարարեց. «Ծովակալ Կոլչակը և գեներալ Դենիկինը պայքարում են ոչ միայն բոլշևիզմի ոչնչացման, կարգ ու օրինականություն հաստատելու, այլև միացյալ Ռուսաստան ստեղծելու համար… ***Ես չպետք է ասեմ, թե համապատասխանում է արդյոք այդ նշանաբանը Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը*** … Մեր մեծ քաղաքական գործիչներից մեկը՝ լորդ Բիկոնսֆիլդը, հանձին հսկա ձնագնդի նման դեպի Պարսկաստան, Աֆղանստան և Հնդկաստան գլորվող մեծ, հզոր և կարող ***Ռուսաստանի՝ տեսնում էր ամենամեծ վտանգը Բրիտանական կայսրության համար*»**[25] (ընդգծումը մերն է – Գ.Պ.): Ի դեպ, Լ. Ջորջի զգուշացումը անհիմն չէր. գեներալ Ա. Դենիկինը և ծովակալ Ա. Կոլչակը միավորել էին իրենց ուժերը՝ կազմելով պայքարի միասնական ճակատ՝ միացյալ Ռուսաստան ստեղծելու, 1914 թ. սահմանները վերականգնելու համար:

---

[22] «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1928, № 5, մայիս, էջ 132:

[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

[24] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Եր., 9 օգոստոսի, 1919:

[25] **Деникин А.,** նշվ. աշխ., էջ 205:

Մեծ Բրիտանիան արտաքուստ հայտնում էր իր «դաշնակցային հավատարմությունը» Ռուսաստանի հարավի նկատմամբ՝ օգնելով գեներալ Ա. Դենիկինին տապալելու բոլշևիկներին, սակայն միաժամանակ պաշտպանում էր Անդրկովկասի անկախ հանրապետությունների գոյությունը, ինչը հակասում էր Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի քաղաքական նպատակներին: ***Իրականում Մեծ Բրիտանիան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախ գոյությամբ ձգտում էր Ռուսաստանի հարավը վերջնականապես մեկուսացնել և դուրս մղել Անդրկովկասից:***

1919 թ. մարտի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության խորհրդակցությանը մասնակցող գեներալ Վ. Թոմսոնը Համաձայնության պետությունների և Կամավորական բանակի փոխհարաբերություններին անդրադառնալիս հայտնել էր, ***որ Ռուսաստանի հարավին օգնում են, քանզի նրան օգտագործում են բոլշևիզմի դեմ մղվող պայքարում, սակայն նրան երբեք թույլ չեն տա, որ խանգարի Անդրկովկասի հանրապետությունների անկախությանը, որն իրենք պաշտպանում են***[26]***:*** Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչու Մեծ Բրիտանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները չէին ճանաչում Անդրկովկասի հանրապետությունների անկախությունը: Անգլիական դիվանագիտությունը և՛ պայտին էր խփում, և՛ մեխին՝ հայտարարելով իր զորակցությունը Անդրկովկասի հանրապետությունների անկախությանը, բայց և չէր ուզում բացահայտորեն խախտել դաշնակցային «հավատարմությունը» գեներալ Ա. Դենիկինին:

Անդրկովկասի, այս թվում նաև Հայաստանի անկախության նկատմամբ Անգլիայի դրական վերաբերմունքի մասին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» 1919 թ. ապրիլ-մայիսի «քաղաքական տեսության» մեջ ասվում է, որ անգլիացիների քաղաքականությունը միտված է պետական նոր կազմավորումների անկախության ձգտումների իրականացմանը և Ռուսաստանի հարավից լրիվ անջատվելուն: Այդ մղումը դրսևորվեց անդրկովկասյան բոլոր հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության վարքագծում[27]: Ա. Դենիկինը գրում է, որ անգլիացիներն Անդրկովկասի հանրապետությունների կառավարություններին համոզում էին, որ ուշ թե շուտ ճանաչելու են նրանց անկախությունը, որպեսզի օգնեն իրենց՝ Կամավորական բանակին դուրս մղելու տարածաշրջանից: Անդրկովկասում կյանքն ընթանում էր անգլիական քաղաքականությանը շաղկապված և դրանից մեծապես կախված[28]:

Փաստորեն, Անգլիան Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջում էր արմատապես փոխել վերաբերմունքը Կամավորական

---

[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 76, թ. 25, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս I, թ. 143, 145, գ. 32, թ. 176, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 73, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 16, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 16, գ. 120, թ. 61:

[27] Տե՛ս Государственный архив Российской Федерации (այսուհետև՝ ГА РФ), ф. 446, оп. 1, д. 19, л. 28:

[28] Տե՛ս **Деникин А.,** նշվ. աշխ., էջ 205:

բանակի նկատմամբ, որի հետ մինչ այդ գտնվել էր սերտ կապերի մեջ: Ավելին, Անգլիան հորդորում էր ոչ մի կապ չունենալ Ռուսաստանի հարավի՝ իրեն հակամարտ քաղաքական ուժերի հետ: Գեներալ Վ. Բիչը հայ նախարարներին համոզում էր, որ Ռուսաստանը ոչ միայն Անգլիայի, այլև Հայաստանի թշնամին է: Այժմ հասել է այն պահը, երբ Մեծ Բրիտանիան կարող է վերջապես կատարել իր վաղեմի մտադրությունը և Ռուսաստանի հարավը դուրս մղել Կովկասից[29]:

Երկար ձգձգումներից հետո՝ 1919 թ. մայիսի 28-ին՝ անկախության առաջին տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Ա. Խատիսյանը) հանդիսավոր պայմաններում ի վերջո հռչակեց «Միացյալ Հայաստանի անկախության ակտը», որտեղ ասված է. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենական միացած են իբրև անկախ պետական միություն… Այսպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի պառլամենտն ու կառավարությունը հանդիսանում են *միացյալ Հայաստանի* ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրապարակում է 1919 թ. ապրիլի 27-ի պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա:

1919 թ. մայիսի 28-ին Երևան քաղաք»[30]:

1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի Խորհրդի նիստում Ա. Խատիսյանը հայտարարեց. «Կատարվածը քաղաքական անհրաժեշտություն էր: Հռչակագրի ընդունումը ընձեռեց այն իրավական դաշտը, որով կառավարությունը հնարավորություն ստացավ լուծելու ազգային, պետական խնդիրներ»[31]:

Մայիսի 28-ի հռչակագրի գլխավոր նշանակությունը նաև այն էր, որ ***անկախության պաշտոնապես ընդունումը վերջ տվեց Հայաստանի անկախության մասին Համաձայնության պետությունների, Անդրկովկասում նրանց ներկայացուցիչների, հարևանների և առավելապես Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների կողմից ստեղծված աննպաստ կարծիքներին:***

«Միացյալ անկախ Հայաստանի» հռչակագիրը դրականորեն ընդունեց Ամերիկայի Միացյալ Նահանգների վարչակազմը: 1919 թ. օգոստոսի 3-ին ֆրանսիական զինվորական հրամանատարությունը Անդրկովկասի անգլիական զինվորական առաքելությանը և Ռուսաստանի հարավի զինված ուժերի

---

[29] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 39, л. 96:

[30] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

[31] Նույն տեղում:

գլխավոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինին հեռագրով տեղեկացրեց, որ ամսի 13-ին Բաթում է ժամանելու ամերիկյան գնդապետ Ու. Հասկելը: Հեռագրից երևում էր, որ միջդաշնակցային գլխավոր խորհուրդը հուլիսի 5-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարությունների անունից գնդապետ Ու. Հասկելին նշանակել է գերագույն հանձնակատար Հայաստանի Հանրապետությունում: Նրան միաժամանակ հանձնարարված էր ձեռնարկել բոլոր միջոցները Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ օգնություն կազմակերպելու համար: Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում գործող Դաշնակցային կառավարությունների և զինվորական հրամանատարությունների բոլոր ներկայացուցիչները պարտավոր էին ամեն կարգի աջակցություն ցույց տալ գնդապետ Ու. Հասկելին: Հեռագրի վերջում ասվում էր, որ Կիլիկիան չի մտնում այն տարածքների ցուցակի մեջ, որոնց վրա տարածվում է գնդապետի լիազորությունները[32]: 1919 թ. օգոստոսի 14-ին Բաթումում Ու. Հասկելին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եղիզարյանը և Հայոց ազգային Խորհրդի նախագահ Աշոտ Մնդոյանցը: Հյուպատոսը, Հայաստանի Հանրապետության կառավարության անունից բարի գալուստ մաղթելով գնդապետ Ու. Հասկելին, «... ցանկութիւն յայտնեց որպէսզի կտրուկ միջոցներ ձեռք առնուին վերջ տալու հայերին և Հայաստանին սպառնացող վտանգին»[33]: Ու. Հասկելը պատասխանեց, որ բոլոր միջոցները կգործադրի խաղաղ ճանապարհով կարգավորելու Հայաստանի Հանրապետության ծանր վիճակը և կաջակցի արագացնելու Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին տալու գործընթացը[34]: Օգոստոսի 21-ին Երևանում գնդապետ Ու. Հասկելին մեծ շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեցին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, պառլամենտականները և քաղաքացիները: Նա իր առաջին տեսակցության ժամանակ վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանին հաղորդեց, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը իրեն հանձնարարել է ստանձնել հայ ժողովրդի ներքին և արտաքին ապահովությունը, պարենավորումը, ապահով ներգաղթը և այլն: Այնուհետև հայտնեց, որ երեք օր կմնա Երևանում՝ հանգամանորեն ծանոթանալու երկրի ներքին ու արտաքին դրությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջներին, այնուհետև հավաքած տեղեկությունների ու եզրակացությունների մասին կհեռագրի Փարիզի խաղաղության վեհաժողովին և հույս ունի, որ մինչև մանդատի հարցի լուծումը կկարողանա ապահովել Հայաստանի Հանրապետության անվտանգությունը: Նա Ա. Խատիսյանին տեղեկացրեց նաև, որ տասն օրից Հայաստանի Հանրապետություն է գալու ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդը՝ հանրապետության ընդհանուր վիճակը ուսումնասիրելու և

---

[32] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 90:

[33] «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 21 օգոստոսի, 1919:

[34] Տե՛ս նույն տեղը:

պարզելու, թե որքան ամերիկյան զորք է հարկավոր ամբողջ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելու համար և այլն: Հաղորդեց նաև, որ Ամերիկայում քննարկվում է Հայաստանի մանդատի խնդիրը[35]: Զրույցի ընթացքում Ա. Խատիսյանը Ու. Հասկելին հանգամանորեն ներկայացրեց հանրապետության ներքին և արտաքին ծանր վիճակը, փաստեց, թե ինչպես թուրք զավթիչները երկու ամիս է՝ տենդագին նախապատրաստվում են նոր աղետներ բերելու Հայաստանի Հանրապետության նեղ սահմաններում կուտակված հայության գլխին՝ ոտքի հանելով նաև տեղի մահմեդական տարրերին: Զրույցի վերջում Ա. Խատիսյանը նշեց, որ այդ պատճառով Հայաստանի Հանրապետությունը իր հայացքը սևեռել է Փարիզի խաղաղության վեհաժողովին և մասնավորապես՝ Ամերիկային, որի ներկայացուցիչն է Ու. Հասկելը:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին, Հայաստանի Հանրապետության պառլամենտի 6-րդ նիստում նախագահի ողջույնի խոսքից հետո ելույթ ունեցավ գնդապետ Ու. Հասկելը: Օգոստոսի 27-ին Թիֆլիսում լույս տեսնող «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ պառլամենտի անդամները և ժողովուրդը «խանդավառ և երկարատև օվացիա սարքեցին գերագույն կոմիսարին»[36]: Ու. Հասկելը պառլամենտում մանրամասն խոսեց իր իրավունքների, լիազորությունների և իրականացվող խնդիրների մասին: Հավաստեց նաև, որ կանի ամեն ինչ՝ Հայաստանի Հանրապետությանն օգնելու և նրա անվտանգությունը ապահովելու համար: Նա իր ելույթում կարևորեց նաև Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ զինական օգնությունը. «...Ես խնդրել եմ անգլիական ուժերին, որ ժամանակավորապես անգլիական զինվորները մնան մինչև փոխարինվելը, որպեսզի մանր ազգությունների միջև տեղի ունեցող մանր ընդհարումները հարթվեն: Երբ Պոլսում իմացա նրանց վերադառնալու կարգադրությունը, ես խնդրեցի անգլիական հրամանատարությանը և Կլեմանսոյին, առժամանակ դադարեցնել: Այս րոպեին այդ հարցը հավանաբար քննվում է Փարիզում, և ես մեծ հույս ունեմ, որ իմ խնդիրը կհարգվի, իսկ նրանց հեռանալու դեպքում էլ մեզ է մնում մտածել որևէ զորքով փոխարինելու նրանց»[37]: Գնդապետը նշեց, որ կասկած չկա. Ադրբեջանը խախտել է անգլիական զինվորական հրամանատարության որոշած սահմանները: Պառլամենտին հավաստիացրեց, որ կմեկնի Բաքու և վերջ կտա նրանց ռազմական գործողություններին, իսկ եթե փորձեն չենթարկվել, ապա կդիմի կտրուկ միջոցների և անձնական պատասխանատվության կենթարկի կազմակերպիչներին և ղեկավարներին[38]:

***Հայաստանի Հանրապետության իշխանությունները համոզվեցին, որ գնդապետ Ու. Հասկելին ուղարկել են լայն իրավասություններով, սակայն առանց որևէ լծակի, որ կարողանար կասեցնել ադրբեջանցիների և թուրքերի ռազմական***

---

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1:

[36] «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 27 օգոստոսի, 1919:

[37] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 7: Տե՛ս նաև «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 27 օգոստոսի, 1919:

[38] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 7: Տե՛ս նաև «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 27 օգոստոսի, 1919:

*գործողությունները:* Ա. Խատիսյանը գրում է. «Անգլիացիների գնալուց յետո մենք գտնուում ենք ամերիկացիների հովանաւորութեան տակ, բայց այդ հովանաւորութիւնը կրում է միայն պլատոնական բնաւորութիւն, որովհետև ամերիկացիք զրկւած լինելով զինուորական ոյժից՝ ոչ մի հնարաւորութիւն չունեն ստիպելու թաթարներին ու տաճիկներին կատարել իրենց կարգադրութիւնները»[39]: Չնայած դրան՝ Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները մեծ ոգևորությամբ ընդունեցին գնդապետ Ու. Հասկելին՝ նրա հետ կապելով որոշ հույսեր: Ծանր կացության մեջ գտնվողը միշտ էլ կառչում է ամենաչնչին հույսից: Նկատի ունենալով ամերիկյան հանձնակատարին ցույց տրված ջերմ ընդունելությունը՝ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարությունը արեց շտապ եզրակացություն. Հայաստանի Հանրապետությունը ամերիկյան կողմնորոշում ունի:

Գնդապետ Մ. Ջինկնիչը օգոստոսի վերջին տեղեկացրեց Ռուսաստանի հարավի «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ Դ. Չայկովսկուն, որ ժամանակն է զգուշությամբ առաջ քաշել ռուսական կողմնորոշման հարցը՝ ի հակադրություն ամերիկյանի, քանի որ այն խոչընդոտ է Ռուսաստանի հարավին: Մ. Ջինկնիչը խորհուրդ է տալիս օգտագործել ամերիկացիների սխալները և Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը ապացուցել, որ Ռուսաստանի հարավը գործնականում կարող է օգնել նրան նյութապես (հաց, դրամ, փամփուշտ և այլն) և ճնշում գործադրել հայերի թշնամիների վրա: Որոշ ժամանակ անց Մ. Ջինկնիչը տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարության հետ Ռուսաստանի հարավի պաշտոնական շփումների վերականգնման խնդրում որոշակի դեր ունեցան հանրապետության քաղաքական լայն շրջաններում առաջացած խորը հուսախաբությունը, հիասթափությունը ամերիկյան քաղաքականությունից: Նման տրամադրության առիթ էր դարձել Հայաստանի գերագույն հանձնակատար Ու. Հասկելի աննրբանկատությունը, որը ցավակցական միանման ճառեր էր արտասանել Հայաստանի և Ադրբեջանի օրենսդիր մարմիններում[40]: Այդ առիթով «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ գնդապետ Ու. Հասկելը Ադրբեջանում «... հերքեց այն կարծիքը, թե ինքը հայերի «փաստաբանն» է: Ես (Ու. Հասկելը – Գ. Պ.) բոլորովին մի տեսակ եմ վերաբերվում բոլոր հանրապետություններին»[41]: Լրագիրը այնուհետև հաղորդում է, որ Ու. Հասկելը շատ գոհ է մնացել Ադրբեջանի կառավարությունից: Նա հերքել է այն տեղեկությունները, որոնք հրապարակվել են Հայաստանի Հանրապետության պառլամենտում: Բնութագրական է Ռոստովում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գրիգոր

---

[39] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063:

[40] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104:

[41] «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 7 սեպտեմբերի, 1919:

Չալխուշյանի գնահատականը գնդապետ Ու. Հասկելի երկդիմի գործունեությանը. «Հասկելը քաղաքագետ չէր: Նրանից սպասվեց շիտակ խոսք: Եվ նա խոսեց: ***Խոսեց Թիֆլիսում, խոսեց Բաքվում, վերջապես Երևանում. նրա երեք ճառերը անլուծելի հանելուկներ էին: Կարծես երեք օտար անձեր արտասանած լինեին: Մեկին մեջ նա վրացասեր էր, մյուսին՝ թրքասեր, երրորդին մեջ՝ հայասեր: Մենք ընկճված էինք: Եվ ահա գնդապետ Հասկելը սկսում է հերքել իր ասած ճառերը մեկը մյուսի հետևից՝ Բաքվի ճառը հերքում է Երևանում, Երևանինը՝ Բաքվում, վերջ ի վերջո գնդապետ Հասկելը սիրեց Բաքուն, ուր նրան տալիս էին շարունակ խնջույքներ, երեկույթներ, պարահանդեսներ: Հետզհետե Հասկելը դարձնում է իր երեսը մեզանից, հետզհետե գովում է մուսավաթականներին և չի հավանում միշտ անբավական, միշտ բողոքող ... հային***»[42] (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Գ. Չալխուշյանը, իր դժգոհությունը հայտնելով Անդրկովկասում Համաձայնության պետությունների ներկայացուցիչներից, հաղորդում է, որ նրանք ապրում էին շեն և հարուստ Թիֆլիսում. աղքատ, համեստ Երևանում նստել էին նրանց երկրորդ և երրորդ կարգի կցորդները: Կիրակի և տոն օրերին նրանց միշտ կարելի էր տեսնել Երևանի հրապարակում՝ շուկայում, ուր էժան գներով զորգեր էին գնում աղքատ մարդկանցից և արտահանում առանց մաքսի՝ իրենց արտոնված ներկայացուցչական դիրքից օգտվելով[43]:

Գնդապետ Մ. Ջիննկինչը օգոստոսի վերջին գնդապետ Դ. Չայկովսկուն տեղեկացնում է, որ Ամերիկան շարունակում է Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի հարավից մեկուսացնելու Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: ***Գնդապետ Ու. Հասկելը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջել է առանց իր գիտության հարաբերություններ չհաստատել գեներալ Ա. Դենիկինի հետ:*** «... Երբ ամերիկացիները տեսնում են՝ Հայաստանը համակրանքով է վերաբերվում Ռուսաստանին, - գրում է գնդապետ Մ. Ջիննկինչը,- հայերին համոզում են, որ Ռուսաստանը այլևս մեծ տերություն չի լինի, և պետք չէ նրա օգնության վրա հույս դնել»[44]: Գնդապետ Ու. Հասկելի առաջին քայլերը ցույց էին տալիս, որ մուտք գործելով Անդրկովկաս՝ Ամերիկան ձգտում էր կանխել Ռուսաստանի հարավի հաստատվելը երկրամասում: Ամերիկայի այդ ավանդական քաղաքականությունը շարունակվում է առ այսօր:

Թեև գնդապետ Ու. Հասկելը դեմ էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարաբերությունների մեջ մտնի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության»

---

[42] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 43:
[43] Տե՛ս նույն տեղը, թ.41:
[44] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104.

հետ, սակայն խորհուրդ էր տալիս Ա. Խատիսյանին օգտվել Ռուսաստանի հարավի օգնությունից[45]:

1919 թ. օգոստոսի վերջին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը է՛լ ավելի բարդացավ: Սեպտեմբերի 2-ին պառլամենտի 11-րդ նիստում վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը հայտատարեց. «Հայրենիքը վտանգի մեջ է... անգլիական զինվորները հեռացել են»[46]: Օգոստոսի 28-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի պատվիրակությունների նախագահները դիմել էին Դաշնակից պետությունների գերագույն խորհրդի նախագահ Ժ. Կլեմանսոյին՝ նշելով, որ անգլիական զինվորական առաքելության դուրսբերումը կարող է տխուր հետևանքներ ունենալ Անդրկովկասի հանրապետությունների համար[47]: Այս դիմումը չունեցավ որևէ դրական արդյունք: Մինչև սեպտեմբերի սկիզբը Անդրկովկասից հեռացավ անգլիական զինվորական առաքելությունը: Բաթումում կենտրոնացվեց միայն 10 հազար անգլիական զինվոր[48]:

Գնդապետ Ու. Հասկելի խոստումը՝ հետաձգելու անգլիական զինվորների դուրսբերումը Անդրկովկասից, նույնպես արդյունք չունեցավ, որը, անշուշտ, Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջաններում անվստահության մթնոլորտ ստեղծեց նրա նկատմամբ[49]: Ճիշտ է՝ նա ուներ մեծ լիազորություններ, սակայն չուներ ուժ, որ կարողանար կանգնեցնել թաթարներին և թուրքերին:

Не секрет, что колоссальные вложения в деятельность зарубежных структур во многих случаях не применяются по назначению, а иногда и просто способствуют личному обогащению сотрудников этих организаций. Для обоснования своей «эффективной» работы многие подобные структуры доводят до руководства страны неправдивую информацию с мест, подтасовывая факты из реальной действительности в свою пользу. Иначе чем объяснить ту уверенность российских властей в приверженности большинства граждан Украины к сближению с Россией перед СВО. Ведь понятно, на что рассчитывали властные круги России. По их мнению, достаточно было появления российских войск в Украине для того, чтобы большинство украинцев немедленно примкнули к ним и поддержали бы смену власти в стране. Этим и объясняется та необоснованная уверенность властей в своей

---

[20] Ответ на 3 млрд. долл.: как Украина обосновывает отказ возвращать России долг: https://www.rbc.ru/economics/31/05/2016/574c7c169a794702d18ea049

[21] Путин указал на российскую помощь Украине в 250 млрд. долларов: https://vz.ru/news/2022/2/21/1144887.html

[22] Коррупция в России и мире – в шести графиках: https://www.kommersant.ru/doc/5708590

правоте, а также проявление беспечности со стороны командования ВС РФ, что, в конечном итоге, привело к огромным человеческим жертвам и втягиванию России в продолжительный вооруженный конфликт.

Пример бывшей советской республики Казахстана, со своими противоречиями и проявлениями очень характерен для современной российской политики «мягкой силы». Население этой страны в 1991 г. почти на 40 % состояло из русскоязычных граждан и ориентировалось исключительно на Россию. Характер взаимоотношений государств определялся уникальной географической данностью – самой протяженной в мире государственной границей длиною 7,5 тыс. км. Это предопределило высочайший уровень взаимозависимости в сфере безопасности, экономики, гуманитарных вопросов, ведь вдоль границы расположены 12 российских и 7 казахстанских регионов.[23] Именно Казахстан является для России «ключом» в Среднюю Азию, т.к. у нее нет границ с другими странами региона.[24]

Понятно, какое значение приобрел Казахстан для России после распада СССР. Россия является одним из крупнейших инвесторов в казахстанскую экономику, накопленные инвестиции России в Казахстане составляют почти 13 млрд долл., казахстанские в Россию – 4 млрд долл. Согласно официальной статистике, создано и работают около 6,5 тыс. совместных предприятий.[25]

Однако пассивность многих российских структур, практическое отсутствие «мягкой силы» России привели к существенным изменениям в общественном сознании в этой стране. Не следует недооценивать и активизацию в эти годы турецкой политики в целом в Средней Азии, значительную часть населения которого составляют тюркоязычные народы. Среди них легко распространились очень привлекательные для многих из граждан среднеазиатских республик пантюркистские идеи, основой которых стали широко распространенные во многих постсоветских странах процессы «конструирования идентичностей». В настоящее время на их основе Турцией осуществляется широкая программа по сплочению всех тюркоязычных народов на евразийском пространстве.

Практическое бездействие российских структур в Казахстане позволило местным властям перейти к не силовому выдавливанию русскоязычного элемента. На это были направлены такие шаги казахстанского правительства, как перенос столицы страны в русскоязычную Астану, перевод письменности на латиницу, вытеснение русского языка не только из официальной переписки, но и в повседневной жизни, провозглашение программы по переводу к 2023 году обучения в школах и вузах страны на английский язык[26] и т.д. Вместо того, чтобы применить инструментарий «мягкой силы» российские властные структуры не нашли ничего лучшего, чем перейти к «жесткому» напоминанию о «подаренных» казахам в годы становления СССР российских землях. Так, председатель комитета по образованию

---

[23] Российско-казахстанские отношения проходят тест на доверие: https://www.ng.ru/dipkurer/2021-02-14/11_8082_kazakhstan.html

[24] См.: Наумкин В. Российская политика в отношении Казахстана//Стратегические перспективы: ведущие державы, Казахстан и центральноазиатский узел. Под редакцией Роберта Легволда. – С 47-80.: https://carnegieendowment.org/files/8462Thinking_Strategically_Legvold.pdf

[25] Российско-казахстанские отношения проходят тест на доверие: https://www.ng.ru/dipkurer/2021-02-14/11_8082_kazakhstan.html

[26] Казахстан пойдет путем Украины?: https://www.stoletie.ru/politika/kazahstan_pojdot_putom_ ukrainy_523.htm

и науке Госдумы Вячеслав Никонов в одном из своих выступлений заявил: «Казахстана просто не существовало, Северный Казахстан вообще не был заселен. Они (казахи) существовали гораздо южнее. И, собственно, территория Казахстана – это большой подарок со стороны России и Советского Союза».[27] Подобные высказывания озвучивались и на более высоком уровне.[28]

В результате всего комплекса мер и возникающих проблем общественно-политического характера процент русскоязычного населения в общей численности граждан Казахстана неуклонно снижался. В итоге к началу 2022 г. численность русских сократилась до 3,43 млн, или 18% населения. Поскольку уезжает молодежь, а остаются люди пожилого возраста, к 2050 г. русских в Казахстане может стать меньше 10%.[29]

В Казахстане растет и «враждебность» по отношению к России. Взять хотя бы отношение казахов к РФ в конфликте в Украине. За 9 месяцев 2022 года число сторонников Украины в конфликте с РФ удвоилось, а поддерживающих Россию стало в три раза меньше. При этом среди молодежи гораздо больше стояли на стороне Украины.[30] Одновременно зафиксировано и значительное уменьшение количества казахстанских граждан, поддерживающих Россию: если в марте таких было 39%, то сейчас – только 13%.[31]

Ни чем не отличается деятельность призванных осуществлять политику «мягкой силы» российских зарубежных структур и в Армении, где еще в 2015 году превалировали пророссийские настроения в обществе и составляли более 72%.[32] Практическое бездействие, или же неэффективная работа диппредставительств и общественных организаций, наряду с некоторыми ошибочными шагами российской политики в регионе, продиктованными наличием искаженной информации о настроениях в армянском обществе, привели к резкому упадку имиджа России в стране. Так уже в 2022-2023 гг. лишь около 10 % граждан придерживались пророссийской ориентации.[33] На сегодняшний день в Армении в полный рост встал вопрос о дальнейшем сохранении союзнических с Россией отношений. Около 70% граждан, наоборот желали бы ограничить отношения со своим стратегическим союзником.[34] Впервые среди стран, представляющих угрозу Армении, уже в 2022 г. обозначилась Россия. Так, 15% опрошенных граждан считало, что именно она представляет собой наибольшую политическую угрозу, а 17% полагали, что Россия несет угрозу в экономической сфере.[35] В 2023 году, по данным Международ-

---

[27] «Живут на русских землях»: территория нынешнего Казахстана – это подарок России?: https://m.business-gazeta.ru/article/493040

[28] См.: Там же.

[29] Как русские стали «малым народом» в Казахстане: https://www.vedomosti.ru/society/articles/2022/01/17/904990-kak-russkie-stali-malim-narodom

[30] Казахстан пойдет путем Украины?: https://www.stoletie.ru/politika/kazahstan_pojdot_putom_ukrainy_523.htm

[31] См.: Там же.

[32] См.: **Смольев В. Гукасян В**. Армяно-российские отношения в период независимости. Краткая хронология.: uic.am›wp-content/uploads/2018/06/russian.pdf

[33] 10 % опрошенных считают, что у Армении «очень хорошие» отношения с Россией: https://mediamax.am/ru/news/society/51168/

[34] Ограничить отношения с Россией захотели 70 процентов армян: https://lenta.ru/news/2022/04/07/socies/?utm_medium=social&utm_source=email

[35] Армяне поставили Россию на третье место в списке угроз национальной безопасности:

ного республиканского института (IRI), уже только 50% опрошенных считали отношения с Россией хорошими или относительно хорошими, 49% плохими.[36] Многими гражданами Армении практически не воспринимается даже концептуальное обоснование необходимости продолжения стратегических отношений с Россией, даже в ущерб своим коренным интересам.

В конечном счете, все перечисленные выше обстоятельства, безусловно, отражаются на рейтинге России в глобальной системе измерения «мягкой силы» (Global Soft Power Index). В 2020 г. в этой системе Россия заняла 10-е место, в 2021 г. потеряла три позиции и заняла 13-е место, а в 2022, после начала специальной операции на Украине, была исключена из рейтинга.[37] Понятно, что в современных условиях утверждать об усилении «мягкой силы» российской дипломатии представляется неуместным.

В изменившейся ситуации в мире, который вовлечен в процесс становления нового миропорядка, внешнеполитическая стратегия России вряд ли может приобрести «мягкий» характер. Тем более, что последовавшее за российским СВО жесткое противодействие западных обществ преподносится в России, как и во многих других дружественных ей странах, как действие, направленное на сохранение однополярного мира и, как следствие, на развал российского государства и ослабление роли других зарождающихся мировых центров силы. Российское государство, почувствовав экзистенциальную опасность, естественно будет впредь и довольно долго придерживаться жесткой внешнеполитической линии. Любое «непонимание» ее позиции другими странами, бывшими и настоящими союзниками, а также стратегическими партнерами может расцениваться ею как недружественный шаг, со всеми, вытекающими из этого, последствиями.

ԱՇՈՏ ԵՆԳՈՅԱՆ – *Ռուսաստանի «փափուկ ուժի» էությունը ԱՊՀ երկրներում* – Հոդվածում բացահայտվում է ռուսաստանյան արտաքին քաղաքական գործունեության այնպիսի կարևոր գործիքի մասին, ինչպիսին է «փափուկ ուժը»: Այդ ֆենոմենի դրսևորումը Ռուսաստանում զգալիորեն տարբեր է քան այն պետություններում, որոնք դրա կիրառման համար ունեն համապատասխան ներուժ և շոշափելի փորձ են ձեռք բերել այդ ուղղությամբ:
Ռուսաստանի «փափուկ ուժի» հիմնական սկզբունքները մշակվել են այդ երկրի արտաքին քաղաքական գլխավոր գերատեսչության հիմնարար փաստաթղթերում, որտեղ հատուկ կարևորվում է դրանց կենսագործումը հետխորհրդային տարածաշրջանում՝ նպատակ դնելով պահել այն ռուսաստանյան քաղաքականության ծիրում: Հոդվածում համեմատական վերլուծության է ենթարկվում ռուսաստանյան «փափուկ ուժի» կիրառումը Ուկրաինայում, Ղազախստանում և Հայաստանում: Բացահայտվում են այդ գործընթացում ի հայտ եկած հիմնախնդիրներն ու բացթողումները, ինչպես նաև ռուսաստանյան արտաքին քաղաքական որոշ կառույցների անարդյունավետ գործունեության պատճառները:

https://360tv.ru/news/mir/opros-armjane-prichislili-rossiju-k-top-3-natsionalnyh-ugroz/
[36] Армения Родина моя: https://ok.ru/group/56142498627735/topic/155434631091095
[37] Отчет «Global Soft Power Index 2021»: https://centergt.ru/gspi2021

**Բանալի բառեր** – *«փափուկ ուժ», Ռուսաստանի արտաքին քաղաքական հայեցակարգ, «խելամիտ ուժ», հետխորհրդային երկրներ, կոռուպցիա, գաղափարական և արժեքային կողմնորոշիչներ, էներգետիկ քաղաքականություն*

**ASHOT YENGOYAN – *The Essence of Russia's Soft Power in CIS Countries.*** – The article reveals the content of such an important instrument of Russian foreign policy as "soft power". The manifestation of this phenomenon in Russia differs markedly from other states, especially those that have the appropriate potential for its application, as well as many years of experience in this field. The basic principles of Russia's "soft power" are developed in the fundamental documents of the country's main foreign policy agency. They particularly emphasize the need to implement these principles in the post-Soviet space in order to keep it in the orbit of Russian politics. The article provides a comparative analysis of the use of Russian "soft power" in Ukraine, Kazakhstan and Armenia. The main problems and omissions in the course of its implementation are identified, as well as the reasons for the low efficiency of the activities of some Russian foreign policy departments.

**Key words**: "soft power", concept of Russian foreign policy, "smart power", post-Soviet countries, corruption, ideological and value orientations, energy policy

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), մարտ, 42-57
https://doi.org/10.46991/BYSU:E/2024.15.1.042

# ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՉՄԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ *
*Երևանի պետական համալսարան*

Անկախության առաջին իսկ տարիներից Հնդկաստանի ղեկավարությունը նպատակ է դրել վերականգնել երկրի արժանի տեղը համաշխարհային հանրության շարքում՝ տնտեսական, քաղաքական և ռազմական հզորությունը մեծացնելու, ինչպես նաև այլ երկրների հետ կապերը զարգացնելու միջոցով: 2000-ականներից սկսած՝ բազմաբևեռ աշխարհակարգի կայացման սկզբին, չնայած արևմտյան երկրների հետ բավականին զարգացած հարաբերությունների, Հնդկաստանը իր արտաքին քաղաքականության մեջ սկսում է հանդես գալ որպես «գլոբալ Հարավի» շահերի ներկայացուցիչ, իրագործել միջազգային առևտրատնտեսական նախագծեր, խորացնել համագործակցությունը այլ ուժային կենտրոնների հետ և ակտիվություն ցուցաբերել ՇՀԿ և ԲՐԻԿՍ միջազգային կազմակերպություններում՝ նախատեսելով պահպանել հավասարակշռությունը համաշխարհային տերությունների միջև, ինչպես վարվում էր երկբևեռ աշխարհակարգի գոյության ժամանակ:

**Բանալի բառեր** – *Հնդկաստանի արտաքին քաղաքական ռազմավարություն, չմիավորման շարժում, աշխարհակարգ, բազմաբևեռ աշխարհ, աշխարհաքաղաքականություն, աշխարհատնտեսություն, ուժային կենտրոն*

Հնդկաստանի արտաքին քաղաքականության խնդիրներն ու սկզբունքները մշակվել են դեռևս ազգային-ազատագրական պայքարի փուլում: Հնդկաստանում բուրժուադեմոկրատական համակարգի ամրապնդմանը զուգընթաց՝ ճշգրտվեցին երկրի արտաքին քաղաքական նպատակները: Հնդկական արտաքին քաղաքականության խնդիրներն են՝

- անկախ արտաքին քաղաքական ուղեգծի շարունակությունը,

* **Փայլակ Ենգոյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ
**Пайлак Енгоян** – кандидат политических наук; ассистент кафедры политологии ЕГУ
**Paylak Yengoyan** – PhD in Political Science, Assistant at YSU Chair of Political Science.
Էլ. փոստ՝ paylak.yengoyan@ysu.am. ORCID: https://orcid.org/0009-0008-7211-0248.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.03.2024
Գրախոսվել է՝ 12.04.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

- աշխարհում իր հեղինակությունն ամրապնդելու և համաշխարհային հանրության կողմից ճանաչված մեծ տերության կարգավիճակ ձեռք բերելու ձգտումը,
- տարածաշրջանային իրադարձությունների զարգացման վրա ազդեցությունը մեծացնելու ցանկությունը,
- պաշտպանունակության բարձրացման անհրաժեշտությունը,
- համաշխարհային տերությունների հետ հակամարտությունների մեջ ներքաշվելուց խուսափելու ձգտումը,
- երկրի հետագա էվոլյուցիոն և վերահսկվող ներգրավումը համաշխարհային տնտեսական գլոբալացման գործընթացներին։

Հնդկաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ձևավորման վրա զգալի ազդեցություն է ունեցել բրիտանական երկհարյուրամյա տիրապետությունը, երբ երկիրը ապրել է ապաարդյունաբերացման և ապաուրբանացման ժամանակաշրջան՝ վերածվելով աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկի։ Հնդկաստանի ազգային դիսկուրսում արդյունաբերության, առևտրի և կենսամակարդակի այս անկումը բացատրվում է այն բանով, որ բրիտանական գաղութատիրությունը կառուցվել էր այնպես, որ Հնդկաստանից դուրս հաներ բոլոր ռեսուրսները։ 19-րդ դարի բրիտանական արդյունաբերական հեղափոխության համար փաստացի վճարել է Հնդկաստանը։ Տնտեսագետների հաշվարկներով՝ բրիտանացիների ներխուժման պահին Հնդկաստանի մասնաբաժինը համաշխարհային տնտեսությունում կազմում էր 23%։ Երբ բրիտանացիները հեռացան, այդ ցուցանիշը հավասար էր 4%-ի, իսկ ընդհանուր տնտեսական վնասը կազմեց 45 տրիլիոն դոլար[1] (17 անգամ ավելի, քան ժամանակակից Հնդկաստանի և Բրիտանիայի ՀՆԱ-ն միասին վերցրած)։ Այդ իսկ պատճառով անկախության առաջին իսկ տարիներից Հնդկաստանի ղեկավարությունը նպատակ է դրել վերականգնել իր արժանի տեղը համաշխարհային հանրության շարքում՝ ռազմական, քաղաքական և, ամենակարևորը, տնտեսական հզորության մեծացման միջոցով։

Հնդկաստանի ղեկավարությունը գիտակցում է էլիտայի միասնական դիրքորոշում մշակելու անհրաժեշտությունը վերոնշյալ նպատակներին հասնելու համար։ Դեռևս Հնդկաստանի առաջին վարչապետ Ջավահարլալ Ներուին հաջողվել էր ձևավորել ազգային կոնսենսուս, որը թույլ է տալիս համեմատաբար մեղմ միջոցներով լուծել քաղաքական և սոցիալական խնդիրները։ Հնդկական հասարակությանը հաջողվել է ներքաղաքական և արտաքին քաղաքական կարևոր հարցերի վերաբերյալ ձևավորել բավականաչափ միասնական տեսակետ։ Հնդկաստանում ազգային համաձայնությունը ոչ միայն քաղաքական հաղորդակցության կանոնների հավաքածու է, այլև ազգային ավանդույթի և մշակույթի անբաժանելի մաս։

---

[1] Տե՛ս Как в Индии оценивают ущерб от британского колониализма // «Вести» – https://www.vesti.ru/article/2901866

Հնդկական էլիտայում գրեթե միաձայն կարծում են, որ համաքաղաքակրթական գաղափարը, ժամանակակից ազգ-պետության վերածվելուն զուգընթաց, ուղղված է երկիրը համաշխարհային գերտերություն դարձնելուն, արդիականացնելուն (առանց ամբողջական արևմտականացման), համաշխարհային գործընթացի շրջանակներում առաջանցիկ զարգացում ապահովելուն և հեռանկարում զարգացած երկրների սոցիալ-տնտեսական մակարդակին հասնելուն, հնդկական քաղաքակրթական արժեքներն ու նորմերը պահպանելուն, էվոլյուցիոն զարգացմանը նախապատվություն տալուն (առանց հեղափոխական ցնցումների):

Ջավահարլալ Ներուն համոզված էր, որ հանրապետությունը պետք է ինքնուրույն գործի համաշխարհային քաղաքականության մեջ, և այս կամ այն դաշինքին հարելը երկիրը կզրկի իր արտաքին քաղաքական խնդիրները լուծելու հնարավորությունից:

Արտաքին քաղաքականության բնագավառում «Ներուի ուղեգծի» շուրջ համահնդկական կոնսենսուսը սկսեց ձևավորվել 1950-ականների կեսերին, երբ Հնդկաստանի ազգային շահերը պահանջում էին արտաքին քաղաքական ուղեգծի լրացուցիչ ճշգրտում: ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերի վարչակազմը նախորդ կառավարության «կոմունիզմը զսպելու» քաղաքականությունը լրացրեց «կոմունիզմը հետ մղելու» դոկտրինով և Պակիստանին ներգրավեց սոցիալիզմի համաշխարհային համակարգի հարավային սահմանին ստեղծված ռազմական դաշինքներում: Ամերիկա-պակիստանյան ռազմաքաղաքական կապերը գլխավոր գործոններից էին, որոնք հանգեցրին Հնդկաստանի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությանը 1950-ականների կեսերին:

Արդյունքում 1950-1980-ական թվականներին Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ կար երեք հիմնական ուղղություն՝

- գերտերությունների հետ հարաբերությունների կառուցում՝ երկու աշխարհաքաղաքական ճամբարներից հավասար հեռավորություն պահպանելու և նրանց միջև հնարավոր հակամարտությանը չներգրավվելու ընդհանուր ձգտումով,
- զարգացող երկրների հետ կապերի ամրապնդում՝ «գլոբալ Հարավի» առաջնորդ դառնալու նպատակով,
- Հարավային Ասիայում գերիշխող դիրքերի ամրապնդում:

Հնդկաստանը սկսեց ավելի ակտիվորեն զարգացնել և ամրապնդել բարեկամական հարաբերությունները սոցիալիստական (առաջին հերթին ԽՍՀՄ-ի և ՉԺՀ-ի հետ) և զարգացող երկրների հետ: Ուժեղացավ Հնդկաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը չեզոքության դիրքերից «դրական չեզոքության» դիրքեր տեղափոխելու միտումը, որի դեպքում արտաքին քաղաքականության հիմքում դրվում են ռազմական դաշինքներին չմասնակցելու և իր տարածքում օտարերկրյա ռազմակայանների տեղադրումից հրաժարվելու, գաղութատի-

րության վերացման, վիճելի հարցերի խաղաղ լուծման, իրավահավասար համագործակցության զարգացման և պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքները, ինչը գործնականում ենթադրում էր հավասար հեռավորության պահպանում գերտերություններից և գաղութատիրությունից ազատագրված երկրների դիրքերի ամրապնդում: Արդյունքում, եթե 1940-ականների վերջին Հնդկաստանի կապերն Արևմուտքի հետ անհամեմատ սերտ էին, քան սոցիալիստական ճամբարի հետ, ապա 1950-ականների վերջին ակներև էր Հնդկաստանի հավասար հեռավորությունը ԱՄՆ-ից և ԽՍՀՄ-ից: Հնդկաստանը նաև սկսեց շատ ավելի ակտիվ մասնակցել գլոբալ խնդիրների լուծմանը և փաստացի վերածվեց համաշխարհային քաղաքականության սուբյեկտի[2]:

«Ներուի ուղեգիծը» փորձություն անցավ արդեն 1962 թվականին չինհնդկական զինված բախումներից հետո, երբ հնարավոր էր Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերակողմնորոշումը: Կոմունիստական Չինաստանի նկատմամբ երկրում առաջացած դժգոհությունն անուղղակիորեն հարվածեց նաև Խորհրդային Միությանը: Քաղաքական ուժերից շատերը պահանջեցին, որ Հնդկաստանը դաշինք կազմի արևմտյան պետությունների հետ: Սակայն արտաքին քաղաքականության բնագավառում «Ներուի ուղեգիծը» պահպանվեց: Երկբևեռ համակարգի հաստատումն ինքնին Հնդկաստանին ճկուն քաղաքականություն վարելու լավ հնարավորություն տվեց: Հնդկաստանի բավականին պրագմատիկ աջակողմյան քաղաքական առաջնորդները, որոնք հստակ էին պատկերացնում երկրի ազգային շահերը, շատ արագ գիտակցեցին, որ երկու ռազմական դաշինքների միջև որոշակի հավասարակշռությունն իսկապես զգալի օգուտներ է բերում թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե՛ ռազմական ոլորտներում:

Արդյունքում, արդեն 1963-ի սկզբին Հնդկաստանի աջակողմյան կուսակցությունների առաջնորդները հայտարարեցին ԽՍՀՄ-ի հետ ամենաջերմ բարեկամական հարաբերություններ պահպանելու անհրաժեշտության մասին: Այսպես, 1963-ի հունվարին Հնդկաստանի՝ տվյալ ժամանակաշրջանում ամենաաջակողմյան «Սվատանտրա» կուսակցության գլխավոր գաղափարախոսը՝ Ս. Ռաջագոպալաչարիան, հայտարարեց. «Եթե վարչապետ Ջ. Ներուն իր կողմից կրոնական ջերմեռանդությամբ պաշտպանվող չմիավորման քաղաքականության ներքո նկատի ունի բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հետ, ապա մենք համաձայն ենք նրա հետ»[3]: Նույն ժամանակահատվածում «Ջան Սանգի» կուսակցության ղեկավարներ Բալրաջ Մադհոկը և Ատալ Բիհարի Վաջպայը հանդես եկան հայտարարություններով՝ նշելով, որ

---

[2] Տե՛ս Внешнеполитический процесс на Востоке: Учеб. пособие для студентов вузов / Под ред. Д. В. Стрельцова. – М.: Издательство Аспект Пресс, 2017, էջ 133:

[3] Նույն տեղում, էջ 134:

չնայած Խորհրդային Միության հետ գաղափարական տարաձայնություններին՝ Հնդկաստանը պետք է ամրապնդի իր կապերը ԽՍՀՄ-ի հետ[4]: Դա հանգեցրեց դրական արդյունքների: Խորհրդային Միությունը ժամանակին օգնեց Հնդկաստանին իրականացնելու ինդուստրալացման ծրագիրը և կառուցելու հզոր ծանր արդյունաբերություն. խորհրդային (այդ թվում՝ հայ) և հնդիկ ինժեներների նախագծած էլեկտրակայանները էներգիայով էին ապահովում այդ արդյունաբերությունը, ԽՍՀՄ-ում պատրաստված մասնագետները դարձան Հնդկաստանի կադրային ռեզերվը, իսկ ԽՍՀՄ-ից այդ երկիր մատակարարված զենքն ապահովեց նրա անվտանգությունը: Խորհրդային ներդրումները, տեխնոլոգիաները և ռեսուրսները օգնեցին Հնդկաստանին ոտքի կանգնելու, ինչի մասին հնդիկների ավագ և միջին սերունդները հիշում են մինչ օրս[5]:

1980-ականներին Հնդկաստանը արդեն դարձավ Ասիայի հիմնական տարածաշրջանային տերություններից մեկը, և նրա բանակը որակական և քանակական ցուցանիշներով դարձավ իրական ռազմական ուժ: Երկրում շատերը սկսեցին «տարածաշրջան» հասկացության մեջ ներառել ոչ միայն Հարավային Ասիան, այլև Հնդկական օվկիանոսի ամբողջ ավազանը: Արդեն այս տասնամյակում Հնդկաստանը սկսեց մեծ նշանակություն տալ ափամերձ երկրների հետ հարաբերությունների զարգացմանը՝ օգտագործելով, մասնավորապես, հնդկական սփյուռքը, որը արտագաղթել էր հիմնականում աշխարհի հենց այս մասը: Հնդկաստանի դիրքերը սկսեցին ուժեղանալ Հնդկական օվկիանոսի հարավային և հարավարևմտյան մասում, որտեղ գտնվում են ավազանի ավելի թույլ զարգացած երկրները, և նա կարող էր լրացնել տարածաշրջանի ցածրտեխնոլոգիական թափուր հատվածները և նպաստել այդ երկրների տնտեսական ու քաղաքական ինտեգրմանը: Հնդկաստանի տնտեսական կապերը այս պետությունների հետ թեև զարգանում էին դանդաղ, բայց վերընթաց գծով: Բավական է նշել, որ դեպի Հնդկական օվկիանոս ուղիղ ելք ունեցող 27 երկրներից 17-ում Հնդկաստանը հիմնական ներմուծողների ցանկում էր: Հնդկական կապիտալը՝ պետական և մասնավոր, աշխուժորեն արտահանվում էր, ստեղծվում էին համատեղ ընկերություններ[6]:

1990-ականներին երկբևեռ աշխարհակարգի խաթարման և ԱՄՆ-ի գլխավորությամբ միաբևեռ աշխարհակարգի ձևավորման հետևանքով Հնդկաստանը կորցրեց Արևմուտքի և Արևելքի միջև առկա հակասություններն օգտագործելու հնարավորությունները, ինչը նախկինում նրան զգալի օգուտ էր բերում: Չմիավորման շարժումը ի զորու չեղավ խաղալու նախկին դերը, ինչի արդյունքում զարգացող երկրների շրջանում իր հեղինակությունը ամրապնդելու Հնդկաստանի ձգտումը զգալիորեն թուլացավ, և նա փաստորեն կորցրեց նրանց

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 133:

[5] Տե՛ս Индия - СССР. Сотрудничество плодотворное, взаимовыгодное // «Аргументы и факты» – https://archive.aif.ru/archive/1657043

[6] Տե՛ս Внешнеполитический процесс на Востоке: Учеб. пособие для студентов вузов, էջ 135:

շահերը ներկայացնողի կարգավիճակը: Այդ փոփոխությունները հանգեցրին Հնդկաստանի ակտիվության նվազմանը միջազգային կյանքում, և երկիրը սկսեց ավելի մեծ շեշտադրում անել տնտեսության զարգացման վրա: Արևմտյան զարգացած երկրների հետ տնտեսական փոխադարձ կապերի համակողմանի ընդլայնումը 1990-ականների սկզբից դարձել է հիմնական ուղղություններից մեկը: Հնդկաստանում իրականացվող ազատականացման քաղաքականությունը հանգեցրել է տարբեր զիջումների արևմտյան կապիտալին՝ ֆինանսների և ապահովագրության, համատեղ ձեռնարկությունների գործունեության և զուտ օտարերկրյա ֆիրմաների բացման ոլորտներում[7]:

Այնուամենայնիվ, անկախ արտաքին քաղաքական ուղեգիծը պահպանելը նախկինի պես չափազանց կարևոր է համարվում հանրապետության կարգավիճակը բարձրացնելու համար: Հնդկաստանին հատկապես լրջորեն մտահոգում են միաբևեռ աշխարհի հաստատման հեռանկարները: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ի հետ հանրապետությունը սկսեց մշակել մերձեցման հնարավորություններ Չինաստանի, Ճապոնիայի, Եվրամիության, Հարավարևելյան Ասիայի երկրների հետ, մասնավորապես նաև այս զլոբալ միտումին դիմակայելու համար: 1990-ականներին ավելի մեծ ուշադրություն է հատկացվում Ճապոնիայի և Եվրամիության երկրների հետ հարաբերությունների զարգացմանը, թեպետ 1999 թ. Հարավսլավիայի դեմ ագրեսիային եվրոպական երկրների մասնակցությունը կասկածներ առաջացրեց Հնդկաստանում Արևմտյան Եվրոպայի իրական անկախության վերաբերյալ: Այսօր Հնդկաստանի էլիտան ավելի ու ավելի է գիտակցում, որ ԵՄ-ն, լինելով տնտեսական հսկա, ուժային կենտրոն չէ: Արդյունքում շեշտը դրվել է ոչ թե ԵՄ-ի ինստիտուտների, այլ ազգային պետությունների, առաջին հերթին՝ Ֆրանսիայի և Գերմանիայի հետ կապերի զարգացման վրա: Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերություններում նկատելի սառնություն կար (հիմնականում Ռուսաստանի թուլացման պատճառով), բայց հետագայում ընդհանուր առմամբ վերականգնվեց դրանց նախկին մակարդակը:

Երկու դարերի սահմանագծին Հնդկաստանը փորձեր ձեռնարկեց ամրապնդելու հարաբերությունները Արևելյան Ասիայի երկրների հետ: Հռչակվեց «Հայացք դեպի Արևելք» ծրագիրը, ինչը ենթադրում էր գերտերության ակտիվացում Հարավարևելյան Ասիայում, իսկ քաղաքականության երրորդ փուլում ՝ նաև Հյուսիսարևելյան Ասիայում: Տեսանելի ապագայում Հնդկաստանը, շարունակելով զարգացնել տնտեսական կապերը, հատուկ նշանակություն է տալու մշակութային-քաղաքակրթական, ռազմաքաղաքական և առաջին հերթին քաղաքական հարաբերություններին: Հնդկաստանը գիտակցեց, որ միայն

[7] Տե՛ս **Садовникова Я. О.** Экономические реформы 1990-х годов и эволюция политических институтов Индии. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, 2019 – https://www.dissercat.com/content/ekonomicheskie-reformy-1990-kh-godov-i-evolyutsiya-politicheskikh-institutov-indii

տարածաշրջանային մակարդակի ազդեցիկ ուժ դառնալով երկիրը կարող է հետագայում կայանալ որպես համաշխարհային ուժային կենտրոններից մեկը:

2000-ականներին՝ բազմաբևեռ աշխարհակարգի կայացման սկզբին, Հնդկաստանը կտրուկ մեծացրել է ուշադրությունը նաև Հնդկական օվկիանոսի արևելյան մասի նկատմամբ: Բացի Արևելյան Ասիայի պետությունների հետ քաղաքական և տնտեսական համագործակցության զարգացումից, նոր դարում Հնդկաստանն ակտիվացրել է ռազմածովային ներուժի զարգացումը երկրագնդի այս հատվածում: Հնդկաստանի վարչապետ Մանմոհան Սինգհի կարծիքով՝ «Հնդկաստանի միջազգային կարգավիճակի բարձրացումը ուժեղացնում է նրա ռազմավարական նշանակությունը տարածաշրջանում՝ Պարսից ծոցից մինչև Մալակկայի նեղուց»[8]: 2007 թ. Ռազմածովային դոկտրինը և 2015 թ. Ծովային դոկտրինը նախատեսում են Հնդկական օվկիանոսում Հնդկաստանի դիրքերի ամրապնդում: Զգալիորեն աճել է Հնդկաստանի համատեղ ռազմածովային զորավարժությունների քանակը (ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի և այլ երկրների հետ), գնվել և կառուցվել են նոր ռազմանավեր: Ճիշտ է, հանրապետությունը դեռևս չի կարող հավակնել Հնդկական օվկիանոսում գերիշխանության, սակայն նման նպատակ արդեն դրված է[9]:

Վերջին տասնամյակների ընթացքում Հարավային Ասիայում ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունները Հնդկաստանի համար բավականին դրական դեր են խաղացել: Կտրուկ ակտիվացել են քաղաքական փոխհարաբերությունները երկու երկրների միջև (Միացյալ Նահանգների վերջին նախագահներից գրեթե բոլորը 4-5-օրյա այցելություններով եղել են Հնդկաստանում), զգալիորեն ամրապնդվել են ռազմաքաղաքական կապերը: 2001 թ. սեպտեմբերի 22-ին (Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչությունից 11 օր անց) ԱՄՆ-ն չեղարկեց զենքի և տեխնոլոգիաների մատակարարման սահմանափակումները, որոնք կիրառվել էին 1998 թվականին՝ ի պատասխան Հնդկաստանի միջուկային փորձարկումների: Այդ ժամանակից ի վեր երկու երկրների զինված ուժերի համատեղ զորավարժությունների և փոխգործակցության այլ ձևերի քանակը և ծավալները զգալիորեն աճել են: 2016 թվականին երկու կողմերը ստորագրել են ռազմական լոգիստիկայի մասին համաձայնագիր, որը թույլ է տալիս ռազմանավերին և ինքնաթիռներին օգտագործել միմյանց ռազմակայանները[10]: Այսօր ԱՄՆ-ն Ռուսաստանից հետո երկրորդ տեղն է զբաղեցնում Հնդկաստանին սպառազինությունների մատակարարման գծով:

---

[8] **Лунев С. И.** Индия как один из новых центров глобального влияния // «Сравнительная политика», 2012, с. 102.

[9] Տե՛ս Внешнеполитический процесс на Востоке: Учеб. пособие для студентов вузов, էջ 138:

[10] Տե՛ս США и Индия согласовали окончательный текст соглашения по военной логистике // «РИА Новости» – https://ria.ru/20160607/1444201300.html

ԱՄՆ-ից Հնդկաստան զենքի և ռազմական տեխնիկայի մատակարարումների ծավալը գրեթե զրոյական մակարդակից հասել է ավելի քան 15 միլիարդ դոլարի 2019 թվականին[11]:

2016 թ. ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի իշխանության գալը ազդեց հնդկա-ամերիկյան հարաբերությունների զարգացման վրա: Առաջին հերթին դա պայմանավորված էր Չինաստանի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների կտրուկ սրմամբ, որին ամերիկյան ղեկավարությունը բացահայտորեն հայտարարել էր իր «ռազմավարական» մրցակիցը: Այս դիմակայությունը դրսևորվել է ամենատարբեր ոլորտներում՝ չինական ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի սահմանում, ԱՄՆ-ի տարածքում Կոնֆուցիուսի ինստիտուտների փակում, «Huawei» ընկերության 5G կայանների արգելում, ինչպես նաև Հնդկաստանի հետ համագործակցության զարգացում՝ որպես հակակշիռ Չինաստանին Ասիայում:

2020 թ. փետրվարին Դ. Թրամփի՝ Հնդկաստան կատարած այցի ընթացքում ստորագրվել է ռազմական ուղղաթիռների (մասնավորապես ռազմատրանսպորտային MH-60R և հարվածային AH-64E Apache) և այլ տեխնիկայի մատակարարման մասին 3 միլիարդ դոլարի համաձայնագիր[12]: 2020 թ. հոկտեմբերին Հնդկաստանը և ԱՄՆ-ն ստորագրեցին համաձայնագիր, որով Հնդկաստանին հնարավորություն տրվեց իրական ժամանակի ռեժիմում ամերիկյան ռազմական արբանյակների ճշգրիտ տվյալներ և տեղագրական պատկերներ ստանալու[13]:

Երկար ժամանակ ԱՄՆ-ն շարունակում է մնալ Հնդկաստանի առևտրային գլխավոր գործընկերներից և ներդրողներից մեկը: 2021 թվականին Հնդկաստանի տնտեսության մեջ խոշորագույն ներդրողների ցանկում ներառվել են Սինգապուրը (ընդհանուր ներդրումների 27%), ԱՄՆ-ն (18%) և Մավրիկիոսը (16%)[14]: 2022-2023 ֆինանսական տարում (2022 թ. ապրիլի 1 – 2023 թ. մարտի 31) ԱՄՆ-ի և Հնդկաստանի միջև երկկողմ ապրանքաշրջանառությունը կազմել է 129,4 միլիարդ դոլար (արտահանումը՝ 78,54 միլիարդ, իսկ ներմուծումը՝ 50,86 միլիարդ)[15]: Հնդկաստանից ԱՄՆ արտահանվող հիմնական ապրանքներն են՝ դեղագործական արտադրանքը, զարդեղենը, թեթև յուղերը և նավթամթերքները, սառեցված ծովախեցգետինները, պատրաստի արտադրանքը

---

[11] Տե՛ս Индия и США: сотрудничество в сфере военных технологий // «РСМД» – https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/indiya-i-ssha-sotrudnichestvo-v-sfere-voennykh-tekhnologiy/

[12] Տե՛ս США поставят Индии вертолеты и военную технику на $3 млрд // «Коммерсантъ» – https://www.kommersant.ru/doc/4267467

[13] Տե՛ս Индия и США подписали соглашение об обмене геопространственной информацией // «ТАСС» – https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9826085

[14] Տե՛ս India recorded the highest ever annual FDI inflow in 2021-22 // «India News Network» – https://www.indianewsnetwork.com/20220520/india-recorded-the-highest-ever-annual-fdi-inflow-in-2021-22

[15] Տե՛ս Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքը – https://commerce.gov.in/trade-statistics/

և այլն, փոխարենը ԱՄՆ-ից ներմուծվում են նավթ, անմշակ ադամանդներ, հեղուկացված բնական գազ, ոսկի, ածուխ, նուշ և այլն[16]:

Այսպիսով, ԱՄՆ-ն Հնդկաստանը դիտարկում է որպես հենակետ ՉԺՀ-ի դեմ, ընդ որում, ամերիկյան ընկալմամբ՝ հնդկա-չինական մրցակցությունը կանխորոշված է ասիական երկու հսկաների հարևանության փաստով: ԱՄՆ-ն անխուսափելիորեն Հնդկաստանին դրդելու է Չինաստանի դեմ պայքարի՝ ազդեցության գոտիներ նվաճելու համար: Ընդ որում, ԱՄՆ-ն Հնդկաստանի հետ լիիրավ դաշինք կնքելու կարիք չունի և կարող է պարզապես ուժեղացնել նրա ռազմական հնարավորությունները՝ առանց ավելորդ պարտավորություններով իրեն կաշկանդելու: Այն, որ Հնդկաստանին երկար ժամանակ անվանում էին «ճիշտ ժողովրդավարություն», բացատրվում է այն դերով, որը վերապահված է այդ երկրին ամերիկյան ռազմավարության մեջ: Իսկ այժմ ամերիկյան գործիչների շրջանում հնչում է քննադատություն Հնդկաստանի և անմիջականորեն վարչապետի հասցեին՝ ժողովրդավարական սկզբունքներից նահանջելու համար[17], ինչը համընկավ Հնդկաստանի՝ «դրական չեզոքության» քաղաքականությանը վերադարձին և եվրասիական տերությունների հետ հարաբերությունների զարգացմանը:

Սակայն, մյուս կողմից, 2022 թվականից սկսած՝ ամերիկյան էլիտայում կրկին բարյացակամ վերաբերմունք է ցույց տրվում, որի նպատակն է սիրաշահել Հնդկաստանին և դրդել նրան Չինաստանի և Ռուսաստանի համար խոչընդոտներ ստեղծելու: Ամերիկյան քաղաքականության այս միտումը բացահայտ երևաց 2023-ի հունիսին Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի և ԱՄՆ-ի նախագահ Բայդենի հանդիպման ժամանակ Վաշինգտոնում, երբ ամերիկյան կողմը աշխատում էր ընդգծված ընկերական մթնոլորտ ստեղծել: Ամերիկյան կառավարությունը հասկանում է, որ ճնշումը Հնդկաստանի վրա ոչ միայն չի օգնի, այլև շուռ կգա ամերիկյան շահերի դեմ: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ն սկսեց որոշակի զիջումներ անել. այս այցի ընթացքում ԱՄՆ-ն հաստատել է 3 միլիարդ դոլար արժողությամբ Predator անօդաչու թռչող սարքերի վաճառքը Հնդկաստանին, General Electric-ը կործանիչների շարժիչների տեխնոլոգիաները կփոխանցի հնդիկ արտադրողներին, ամերիկյան ռազմանավերը իրավունք կունենան վերանորոգման համար հնդկական նավահանգիստներ մտնելու: Սենատում ներկայացվել է օրինագիծ, որը Հնդկաստանին արտոնություններ է տալու ԱՄՆ-ից զենք գնելու համար (ինչպես ՆԱՏO-ի երկրներին)[18], իսկ հանդիպումից մեկ ամիս անց հայտնի դարձավ, որ Հնդկաստա-

---

[16] Տե՛ս США стали крупнейшим торговым партнером Индии // «РИА Новости» – https://ria.ru/20220529/partnerstvo-1791552112.html

[17] Տե՛ս The Guardian view on India's G20 summit: a backsliding democracy gets to play host // «The Guardian» – https://www.theguardian.com/commentisfree/2023/sep/06/the-guardian-view-on-indias-g20-summit-a-backsliding-democracy-gets-to-play-host

[18] Տե՛ս Моди дал понять Байдену, что позиция Индии по России и Украине не изменится // «НТВ» –

նում թայվանական TSMC և Foxconn ընկերությունները համատեղ նախատեսում են կառուցել կիսահաղորդիչների գործարան[19], ինչը մեծ հավանականությամբ տեղի ունեցավ ԱՄՆ-ի համաձայնությամբ՝ Թայվանը միացնելու դեպքում Չինաստանին ժամանակակից պրոցեսորներ արտադրելու հնարավորությունից զրկելու նպատակով։

Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին նաև Ուկրաինական ճգնաժամը, սակայն Մոդին, չնայած ԱՄՆ-ի դիրքորոշմանը, բավարարվեց չեզոք հայտարարություններով. «COVID-ի համաճարակը և ուկրաինական հակամարտությունը զգալիորեն ազդել են «գլոբալ Հարավի» երկրների վրա։ Մենք կարծում ենք, որ բոլոր երկրների միավորումը բացարձակապես անհրաժեշտ է այս խնդիրների լուծման համար։ Ուկրաինայում իրադարձությունների հենց սկզբից Հնդկաստանը շեշտը դրել է երկխոսության և դիվանագիտության միջոցով վեճերի լուծման վրա։ Մենք լիովին պատրաստ ենք ցանկացած ներդրում ունենալ խաղաղության վերականգնման գործում»[20]։

Իհարկե, Բայդենի հետ Մոդիի հանդիպումից հետո նկատվեց որոշակի հեռացում Չինաստանից, ինչը դրսևորվեց Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) համատեղ հայտարարությունը չստորագրելով[21] («Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը չափազանց հաճախ հիշատակելու պատճառով)։ Բացի այդ, Հնդկաստանը մասնակցում է չինական նախաձեռնությանը այլընտրանք ներկայացվող «Հնդկաստան – Մերձավոր Արևելք – Եվրոպա» (IMEC) տնտեսական միջանցքի նախագծին[22], որի իրագործումը, սակայն, դեռևս խնդրահարույց է ներդրումների պակասի, Մերձավոր Արևելքում Չինաստանի ազդեցության արագ տարածման և արդեն իսկ արված չինական մեծ ներդրումների, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածության պատճառով։ Այնուամենայնիվ, չնայած ԱՄՆ-ի հետ բավականին զարգացած հարաբերություններին, Հնդկաստանը ելնում է առաջին հերթին իր ազգային շահերից, նախատեսում է պահպանել հավասարակշռությունը ուժային կենտրոնների միջև, ինչպես վարվում էր երկբևեռ աշխարհակարգի գոյության ժամանակ և չի ցանկանում այլ երկրի կամակատարը դառնալ ու հրաժարվել իրեն ձեռնտու համագործակցությունից այլ տերությունների, այդ թվում ԱՄՆ-ի հակառակորդների հետ։ Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ գնալով ավելի մեծ տեղ են զբաղեցնում Ռուսաստանը և Չինաստանը։

---

https://www.ntv.ru/novosti/2774170/

[19] Տե՛ս Foxconn может создать совместное предприятие в Индии с TSMC и TMH // «Российская газета» – https://rg.ru/2023/07/14/foxconn-mozhet-sozdat-sovmestnoe-predpriiatie-v-indii-s-tsmc-i-tmh.html

[20] Моди дал понять Байдену, что позиция Индии по России и Украине не изменится // «НТВ» – https://www.ntv.ru/novosti/2774170/

[21] Տե՛ս СМИ: Индия не стала подписывать Стратегию экономического развития ШОС // «ТАСС» – https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/18193239

[22] Տե՛ս Коридор и путь: конкуренция или конвергенция? // «РСМД» – https://russiancouncil.ru/analytics-and-comments/columns/postsoviet/koridor-i-put-konkurentsiya-ili-konvergentsiya/

Վերջին տարիներին Հնդկաստանը բավականին եռանդուն զարգացնում է համագործակցությունը Չինաստանի հետ: Հնդկաստանի ղեկավարությունը գիտակցում է, որ Չինաստանը շարունակում է մնալ Հնդկաստանի հզոր հարևանը, որի հետ նա ամեն դեպքում ստիպված է գոյակցել ու պայմանավորվել. և երկրորդ՝ նրա ամենամեծ առևտրային գործընկերներից է, որի հետ ապրանքափոխանակությունից է կախված հնդկական տնտեսության բազմաթիվ ոլորտների անխափան գործունեությունը և հարյուրմիլիոնավոր հնդիկների բարեկեցությունը: Նախաձեռնությունները, որոնք կոչված են սեփական ուժերով առավելագույնս փոխարինելու ՉԺՀ-ից ներկրվող ապրանքատեսակները, առայժմ հաջողություն չեն ունեցել[23]: Երկրների միջև ապրանքաշրջանառությունն արագորեն աճում է և 2022-2023 ֆինանսական տարում կազմել է 113,8 մլրդ դոլար՝ փոքր-ինչ զիջելով ԱՄՆ-ի հետ առևտրի ծավալներին[24]:

Թեև հնդկա-չինական սահմանին, իրավիճակի սրմամբ պայմանավորված, մի շարք խնդիրներ կան, սակայն այս երկու երկրները նկատելիորեն ձգտում են խուսափել սուր անկյուններից՝ շեշտը դնելով երկկողմ հարաբերությունները միավորող օրակարգի վրա: Դա հնարավոր է դարձել հիմնականում Ռուսաստանի միջնորդական ջանքերի շնորհիվ, որը բարեկամական հարաբերություններ ունի ինչպես Չինաստանի, այնպես էլ Հնդկաստանի հետ: Դրա համար օգտագործվել են տարբեր ձևաչափեր և միություններ, որտեղ երեք պետությունները գլխավոր մասնակիցներն են՝ ՌՀՉ (Ռուսաստան-Հնդկաստան--Չինաստան), ԲՐԻԿՍ (BRICS), ՇՀԿ[25]:

Հաջորդ՝ ոչ պակաս կարևոր գործոնը Հնդկաստանի և Չինաստանի շահերի ընդհանրությունն է բազմաբևեռ աշխարհակարգի հաստատման և փոխլրացնող ենթակառուցվածքային նախագծերի զարգացման տեսանկյունից: Դրանցից են «Մեկ գոտի, մեկ ճանապարհը», որն ընդգրկում է ամբողջ եվրասիական մայրցամաքը, և «Հյուսիս-Հարավը», որը սկիզբ է առնում հնդկական նավահանգիստներից և Իրանով ու Հարավային Կովկասով ձգվում դեպի Ռուսաստան և Հյուսիսային Եվրոպա[26]:

Վերջին տարիներին Հնդկաստանը սկսել է զարգացնել համագործակցությունը նաև Ռուսաստանի հետ: Դեռևս 2019-ին Վլադիվոստոկում կայացած Արևելյան տնտեսական համաժողովի շրջանակներում Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման արդյունքներով հայտարարեց, որ Հնդկաստանի և

[23] Տե՛ս **Куприянов А.** Внешнеполитические дилеммы Индии: на защите национальных интересов // «Валдай» – https://ru.valdaiclub.com/a/highlights/vneshnepoliticheskie-dilemmy-indii/

[24] Տե՛ս Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքը – https://commerce.gov.in/trade-statistics/

[25] Տե՛ս **Ниведита Капур.** Может ли Россия стать посредником между Индией и Китаем? // «Валдай» – https://ru.valdaiclub.com/a/highlights/mozhet-li-rossiya-stat-posrednikom/

[26] Տե՛ս **Вали Каледжи**. «Пояс и путь» и транспортная связность в Евразии // «Валдай» – https://ru.valdaiclub.com/a/highlights/poyas-i-put-i-transportnaya-svyaznost-v-evrazii/

Ռուսաստանի փոխգործակցությունը անհրաժեշտ պայման է բազմաբևեռ աշխարհի ստեղծելու համար: «Մեր երկրները երկուստեք հասկանում են, որ կայունության հասնելու համար մեզ անհրաժեշտ է կառուցել բազմաբևեռ աշխարհ: Այս հարցում մեր համագործակցությունն ու համակարգումն անհրաժեշտ գործոններ կլինեն նման աշխարհի ստեղծելու համար» [27], – ընդգծեց Մոդին: Հնդկաստանի կառավարության ղեկավարը նաև հավելեց, որ դրա համար «երկու երկրները պետք է ամրապնդեն համագործակցությունը ՇՀԿ-ի, ԲՐԻԿՍ-ի շրջանակներում և այլ հարթակներում» [28]:

2022 թ. փետրվարին, երբ Ռուսաստանը սկսեց հատուկ ռազմական գործողությունը Ուկրաինայում, իսկ արևմտյան երկրները հակառուսական պատժամիջոցներ սահմանեցին, վերջիններս մասնավորապես՝ ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան, սկսեցին ճնշում գործադրել Հնդկաստանի վրա, որպեսզի նա հրաժարվի ռուսական էներգակիրներ գնելուց: Սակայն Հնդկաստանը, առաջին հերթին ելնելով սեփական ազգային շահերից, 2022 թվականին ոչ միայն չկրճատեց, այլև ավելացրեց ռուսական նավթի գնումները 22 անգամ, իսկ ռուսական ածուխի գնումները՝ մոտ 2,5 անգամ[29]: Բազմապատկվել է նաև ռուսական նավթամթերքի վերաարտահանման ծավալները դեպի Եվրոպա: Այս ամենի շնորհիվ Ռուսաստանը զբաղեցրեց 5-րդ տեղը (2021-ին 25-րդ տեղում էր) Հնդկաստանի խոշորագույն առևտրային գործընկերների շարքում, իսկ ապրանքաշրջանառությունը կազմեց 49,35 միլիարդ դոլար[30]: Ընդ որում՝ երկրների միջև առևտուրը հիմնականում կատարվում է այլընտրանքային ազգային արժույթների միջոցով (մասնավորապես դիրհամների)[31], իսկ 2023-ի կեսերից, համաձայն Reuters-ի, Հնդկաստանը սկսեց վճարումները իրականացնել նաև յուաններով[32]:

Ռուս-հնդկական հարաբերություններում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ռազմատեխնիկական համագործակցությունը: Երկար տարիներ սպառազինությունների հնդկական շուկայում հենց Ռուսաստանին է պատկանում ամենամեծ մասնաբաժինը: Թեև սպառազինությունների մատակարարումը դիվերսիֆիկացնելու հնդկական քաղաքականության հետևանքով ՌԴ-ի մասնաբաժինը 64%-ից նվազել է մինչև 45%-ի (հիմնականում հօգուտ ԱՄՆ-ի և

---

[27] Моди назвал сотрудничество России и Индии залогом многополярного мира // «ТАСС» – https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6841261

[28] Նույն տեղում:

[29] Տե՛ս Новак сообщил, что Россия в 2022 году нарастила поставки нефти в Индию в 22 раза // «ТАСС» – https://tass.ru/ekonomika/17384209

[30] Տե՛ս Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքը – https://commerce.gov.in/trade-statistics/

[31] Տե՛ս Exclusive: Indian refiners pay traders in dirhams for Russian oil // «Reuters» – https://www.reuters.com/business/energy/indian-refiners-pay-traders-dirhams-russian-oil-2023-02-03/

[32] Տե՛ս Exclusive: India refiners start yuan payments for Russian oil imports // «Reuters» – https://www.reuters.com/business/energy/india-refiners-start-yuan-payments-russian-oil-imports-sources-2023-07-03/

Ֆրանսիայի), այնուամենայնիվ ռուս-հնդկական ռազմատեխնիկական համագործակցությունը շարունակում է մնալ բավականին բարձր մակարդակի վրա: Վերջին 30 տարում Հնդկաստանը Ռուսաստանից ձեռք է բերել մոտ 70 միլիարդ դոլարի սպառազինություն, իսկ ռազմական պատվերների փաթեթը ներկայումս գերազանցում է 14 մլրդ դոլարը: Օրինակ՝ մինչև 2024 թ. վերջը Ռուսաստանը պետք է մատակարարի «C-400» նորագույն զենիթահրթիռային համակարգի հինգ դիվիզիոններ: 2021 թ. դեկտեմբերին պայմանագիր է կնքվել Հնդկաստանում «Կալաշնիկով» կոնցեռնի ավելի քան 600 հազար «АК-203» ինքնաձիգների արտադրության համար: Բացի այդ, Հնդկաստանում արտոնագրային հիմքի վրա արդեն արտադրվել են ավելի քան 220 «Су-30МКИ» կործանիչներ, մոտ 900 «Т-90С» և 1500 «Т-72М1» տանկեր, դրանց համար արկեր, ինչպես նաև ռուսական «Սմերչ»-ի հիման վրա նոր ՀԿՌՀ-ներ և դրանց համար հրթիռներ: Արդիականացնելուց հետո Ռուսաստանը Հնդկաստանին վաճառեց իր «Ադմիրալ Գորշկով» ավիակիրը, մեկ ատոմային սուզանավ՝ «Շչուկա-Բ» (աշխարհում ամենաանաղմուկներից մեկը) և մեկ դիզելային-էլեկտրական սուզանավ: Հիշատակման է արժանի նաև ցամաքային, ծովային և օդային տեղակայման «Բրահմոս» հականավային հրթիռի բավականին հաջող մշակումը (ռուսական «Օնիքս» հրթիռի հիման վրա)[33]:

Արևմտյան երկրներում պահվող (դոլարով ու եվրոյով) 300 միլիարդ դոլարի ռուսական արժույթային պահուստների սառեցումից հետո շատ պետություններ սկսեցին մտածել այլընտրանքային արժույթների կիրառման մասին՝ քաղաքական ռիսկերից խուսափելու նպատակով: Հնդկաստանի ֆինանսական էլիտայի որոշ ներկայացուցիչներ մտածում են հնդկական ռուփիի կարգավիճակը այլընտրանքային պահուստային արժույթի մակարդակի բարձրացնելու մասին: Հնդիկ միլիարդատեր, Kotak Mahindra Bank-ի (շուկայական կապիտալիզացիայով Հնդկաստանի մասնավոր հատվածի երրորդ խոշորագույն բանկը HDFC Bank-ից և ICICI Bank-ից հետո) գործադիր տնօրեն Ուդայ Կոտակը հայտարարեց, որ Հնդկաստանը հնարավորություն ունի ռուփին դարձնելու աշխարհի պահուստային արժույթ: Միլիարդատերի խոսքերով՝ նպատակաուղղված ջանքեր են պահանջվում հուսալի ինստիտուտներ ստեղծելու համար, որոնք չեն ենթարկվի որևէ արտաքին ուժի: Ավելի վաղ, խոսելով ԱՄՆ դոլարի՝ որպես պահուստային արժույթի մասին, Կոտակը մտահոգություն էր հայտնել, որ երկիրը չափազանց կախված է ամերիկյան ֆինանսական համակարգից: «Մեր ամբողջ գումարը գտնվում է նոստրո հաշիվներում (հաշիվ, որը կառավարում է օտարերկրյա բանկը տեղական արժույթով – Փ. Ե.), և ԱՄՆ-ում ինչ-որ մեկը կարող է ասել, որ դուք վաղը առավոտյան չեք կարողանա այն հանել, ու դուք դեմ կառնեք պատի: Սա է պահուստային արժույթի ուժը»[34], – պարզաբանել է նա:

---

[33] Տե՛ս Какое оружие из России получило индийскую прописку // «ТАСС» – https://tass.ru/armiya-i-opk/5111597

[34] Индийский миллиардер Удай Котак назвал доллар «крупнейшим финансовым террористом в мире»

Հնդկաստանը մշակում է նախագծեր, որոնց շնորհիվ պետությունը կարող է ունենալ անկախ ֆինանսական համակարգ։ Ըստ հնդկական հեղինակավոր The Economic Times թերթի՝ Հնդկաստանը ցանկանում է այլընտրանք ստեղծել SWIFT-ին, որպեսզի այլ երկրների հետ հաշվարկներում կախված չլինի որևէ մեկից և ռուփին դարձնի միջազգային արժույթ։ Նախագծի վրա արդեն աշխատում են Հնդկաստանի բանկային հատվածի մասնագետները, այդ թվում՝ Պետական բանկը և Կենտրոնական բանկը[35]։ Այս ամենը լուրջ հիմք է ստեղծում Հնդկաստանի համար ֆինանսատնտեսական անկախություն ձեռք բերելու հարցում։

Հնդկաստանի ձգտումը՝ կայանալու որպես համաշխարհային ուժային կենտրոն, ակնառու դրսևորվեց երկրի անվանափոխության հարցում[36]։ 2023 թ. սեպտեմբերին տեղի ունեցած G20-ի գագաթնաժողովին Նարենդրա Մոդին օգտագործել է ցուցանակ, որտեղ գրված է եղել «Bharat» (Բհարատ)՝ «India»-ի փոխարեն։ Հնդկաստանը փաստորեն ունի երկու անվանում, ինչը նշված է նույնիսկ Սահմանադրության առաջին հոդվածի մեջ□ «India, that is Bharat…»[37]։ Առաջինն օգտագործվում է անգլերենով միջազգային լսարանի համար, իսկ երկրորդը՝ հինդիով ներքին լսարանի համար։ Վարչապետից բացի, «India» անվանումից հրաժարվելու առաջարկություն հնչեցրին նաև ազգային արժեքները պաշտպանող «Բհարատիա Ջանաթա փարթի» կուսակցության այլ ներկայացուցիչներ։ Իրենց կարծիքով, «India» անվանումը գաղութատիրական ժամանակների մնացուկ է, և երկիրը պետք է անվանվի «Բհարատ»։ Սակայն «Բհարատիա Ջանաթա փարթին» այդ կապակցությամբ դեռևս չի ներկայացրել որևէ նախագիծ խորհրդարանում քննարկելու համար՝ 2024-ի խորհրդարանական ընտրություններից առաջ նոր բանավեճ և լարվածություն չստեղծելու նպատակով։ Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ 2023-ի աշնանը խորհրդարանը տեղափոխվեց նոր շենք (նախկինում այն գտնվում էր բրիտանական տիրապետության տարիներին (1927-ին) կառուցված շենքում)[38]։ Ըստ երևույթին, «Բհարատիա Ջանաթա փարթին» վարչապետի գլխավորությամբ ցանկանում է երկրի անվանափոխման այս պատմական որոշումը կայացնել ընտրություններից հետո և խորհրդարանի նոր շենքում, ինչը կխորհրդանշի պետության կայացումը որպես ինքնիշխան և հզոր տերություն։

Այսպիսով, 1990-ական և 2000-ական թվականներին հնդկական արտաքին

---

// «News.am» – https://news.am/rus/news/757508.html

[35] On the table: A SWIFT system tailored to push rupee trade // «The Economic Times» – https://economictimes.indiatimes.com/news/economy/foreign-trade/on-the-table-a-swift-system-tailored-to-push-rupee-trade/articleshow/102185095.cms?utm_source=contentofinterest&utm_medium=text&utm_campaign=cppst

[36] Տե՛ս СМИ: Индия решила сменить название // «РИА Новости» – https://ria.ru/20230905/indiya-1894268823.html

[37] The Constitution of India (As on 9th September, 2020), p. 23 – https://web.archive.org/web/20200929185051/http://legislative.gov.in/sites/default/files/COI.pdf

[38] Տե՛ս Премьер Индии открыл новое здание парламента // «ТАСС» – https://tass.ru/obschestvo/17862715

քաղաքականության մեջ շեշտադրում էր արվել «գլոբալ Հյուսիս»-ի և ԱՄՆ-ի գլխավորությամբ գլոբալացվող աշխարհին ինտեգրվելու վրա, իսկ այսօր առաջնահերթությունը աստիճանաբար տեղափոխվում է դեպի «գլոբալ Հարավ»: 2022 թվականին սկիզբ առած գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացները միայն արագացրին այդ միտումը: Դրանով Հնդկաստանը շեշտադրում է իր առանձնահատուկ դերը չմիավորման շարժման մեջ:

2023 թ. հունվարից մեկնարկեց Դելիի նախագահության տարին G20-ում, որի բացումը կատարեց Նարենդրա Մոդին՝ հյուրընկալելով «Գլոբալ Հարավի ձայնը» առցանց գագաթնաժողովը, որին մասնակցում էին աֆրո-ասիական և լատինամերիկյան աշխարհի ավելի քան 120 պետություններ: Նա վճռականություն հայտնեց իրագործելու միջազգային նոր օրակարգը, որը պետք է որոշեն ոչ միայն արդյունաբերական զարգացած երկրները, այլև դրանց հետ իրավահավասար վերաբերմունքի հավակնող զարգացող պետությունները: «Մենք աջակցել ենք իրար օտար տիրապետության դեմ պայքարում, և կարող ենք կրկին անել դա այս հարյուրամյակում, որպեսզի ստեղծենք նոր աշխարհակարգ, որը կապահովի մեր քաղաքացիների բարեկեցությունը: Ձեր ձայնը Հնդկաստանի ձայնն է, իսկ ձեր առաջնահերթությունները Հնդկաստանի առաջնահերթություններն են»[39], – գագաթնաժողովի մասնակիցներին ուղղված իր ուղերձում հայտարարեց վարչապետ Մոդին:

Իրատեսորեն պետք է նշել, որ Հնդկաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հարաբերությունները արևմտյան երկրների հետ դեռևս բարձր մակարդակի վրա են: Այնուամենայնիվ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Հնդկաստանի արտաքին քաղաքականությունն ուղղված կլինի հիմնականում զարգացող երկրների հետ մերձեցմանը և ինտեգրացիոն այնպիսի միավորումներին ներգրավմանը, ինչպիսիք են ՇՀԿ-ն և ԲՐԻԿՍ-ը, որոնց տնտեսական զարգացման տեմպերը և մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում, ըստ ԱՄՀ տվյալների, ավելի բարձր կլինեն, քան G7-ի երկրներինը[40]: «Գլոբալ Հարավի» երկրների մասնակցությամբ Հնդկաստանի գագաթնաժողովը, ինչպես նաև Ռուսաստանի ու Չինաստանի հետ տնտեսական և քաղաքական համագործակցության խորացումը ներկայումս տեղի ունեցող գլոբալ աշխարհաքաղաքական իրադարձությունների համապատկերում ցույց են տալիս, որ Հնդկաստանը հավատարիմ է Ջ. Ներուի ժամանակաշրջանի «դրական չեզոքության» քաղաքականությանը և ձգտում է այլ տերությունների հետ կառուցել նոր՝ բազմաբևեռ աշխարհակարգ:

---

[39] Глобальный Юг хочет стать Севером // «Коммерсантъ» – https://www.kommersant.ru/doc/5772319
[40] Sե՛ս Bloomberg: страны БРИКС опережают G7 по вкладу в мировой экономический рост // «Коммерсантъ» – https://www.kommersant.ru/doc/5940103

**ПАЙЛАК ЕНГОЯН** – ***Проявления политики неприсоединения Индии в условиях формирования многополярного мира***. – С первых лет независимости руководство Индии поставило цель вернуть стране достойное место в мире с помощью увеличения своей экономической, политической и военной мощи, а также развитием связей с другими странами. Начиная с 2000-х годов, во время становления многополярного мира, несмотря на довольно развитые отношения с западными странами, в своей внешней политике Индия начинает позиционировать себя как представитель интересов «глобального Юга», реализует международные торгово-экономические проекты, углубляет сотрудничество с другими центрами силы и проявляет активность в международных организациях ШОС и БРИКС, предпочитая сохранять баланс между мировыми державами, как она поступала в период существования биполярного мироустройства.

**Ключевые слова**: *внешнеполитическая стратегия Индии, движение неприсоединения, мировой порядок, многополярный мир, геополитика, геоэкономика, центр силы*

**PAYLAK YENGOYAN** – ***The Manifestations of India's Non-Alignment Policy in the Conditions of the Formation of the Multipolar World***. – From the early years of independence, the leadership of India set the goal of restoring the country to a worthy place in the world by increasing its economic, political, and military power, as well as developing ties with other states. Starting from the 2000s, during the formation of a multipolar world, despite fairly developed relations with Western countries, in its foreign policy India began to position itself as a representative of the interests of the "Global South", implements international trade and economic projects, deepens cooperation with other centers of power and demonstrates activity in international organizations such as SCO and BRICS, preferring to maintain the balance between global powers, as it did during the period of bipolar world order.

**Key words**: *India's foreign policy strategy, non-alignment movement, world order, multipolar world, geopolitics, geoeconomics, center of power*

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), ապրիլ, 58-70
https://doi.org/10.46991/BYSU:D/2024.15.1.058

# ԱՄՆ-Ի «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՆՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ*
*Հայ-ռուսական համալսարան, Երևանի պետական համալսարան*

Ներկայումս համաշխարհայնացման և աճող բազմամշակութայնության պայմաններում համոզելու ուժը էական ազդեցություն ունի ազգերի և հասարակությունների միջև փոխըմբռնման աճի վրա: Արդի ժամանակներում «փափուկ ուժը» ավելի հաճախ է օգտագործվում համաշխարհային քաղաքականության ժամանակակից դերակատարների, մասնավորապես՝ գերտերությունների արտաքին քաղաքականության գործիքակազմում: Հոդվածում քննարկվում են Միացյալ Նահանգների «փափուկ ուժի» ռազմավարությունը և դրա դրսևորումները, ուղղությունները, մեխանիզմներն ու գործիքները Հայաստանի Հանրապետությունում:
Արվում է եզրակացություն, որ Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ռազմավարության գլխավոր նպատակներն են ամրապնդել դիվանագիտական երկկողմ հարաբերությունները, երկրում ձևավորել Միացյալ Նահանգների վերաբերյալ դրական ընկալումներ և տարածել իր ազդեցությունը ոչ հարկադրական միջոցներով՝ ուղղված արևմտյան լիբերալիզմի և ժողովրդավարության մշակույթի խթանմանը, ինչպես նաև երկու հասարակությունների և պետությունների միջև համագործակցության և փոխըմբռնման ամրապնդմանը: ԱՄՆ-ի «փափուկ ուժը» Հայաստանի նկատմամբ հիմնականում կիրառվում է կրթական ծրագրերի, ինչպես նաև մշակութային, հանրային և քաղաքացիական դիվանագիտության միջոցով: Միևնույն ժամանակ, ամերիկյան տարբեր գործակալությունների և հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և հաստատությունների ներկայությունը Հայաստանում նպաստում է ամերիկյան «փափուկ ուժի» ընդլայնմանը և ամրապնդմանը:

* **Նորա Գևորգյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ռուս-հայկական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի համաշխարհային քաղաքականություն և միջազգային հարաբերություններ ամբիոնի դոցենտ: Երևանի պետական համալսարանի Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող

**Нора Геворкян** – кандидат политических наук, доцент кафедры Мировая политика и международные отношения Института Права и Политики Российско-Армянского Университета; научный сотрудник Центра Американских Исследований, Ереванский Государственный Университет

**Nora Gevorgyan** – PhD in International Affairs and Global Politics, Associate Professor at the “World Politics and International Relations” Department of the Institute for Law and Politics of Russian-Armenian University, Research fellow at the American Studies Center, Yerevan State University.

Էլ. փոստ՝ nora_gevorgyan@yahoo.com. ORCID: https://orcid.org/0000-0001-5983-0955.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.01.2024
Գրախոսվել է՝ 10.04.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

**Բանալի բառեր** – *«փափուկ ուժ», արտաքին քաղաքականություն, ԱՄՆ, Հայաստանի Հանրապետություն, ազդեցության տարածում, ոչ հարկադրական միջոցներ*

## Ներածություն

Համաշխարհայնացման, «ջնջված սահմանների» և բազմամշակութայնության այսօրվա դարաշրջանում երկրները, նույնիսկ ամենաուժեղները, առավելության են հասնում միջազգային քաղաքական գործընթացներում ոչ միայն իրենց ռազմաքաղաքական կամ տնտեսական հզոր քաղաքականությամբ, այլև մշակութային գրավչությամբ, գաղափարախոսությամբ և միջազգային ինստիտուտներով՝ «փափուկ ուժի» հիմնական գործիքներով:

1990-ականների սկզբից «փափուկ ուժ» հասկացությունը դարձել է գիտական բանավեճի թեմա: Առաջ գալով որպես ԱՄՆ-ի փորձը նկարագրող հիմնադրույթ՝ «փափուկ ուժ» հասկացությունը վերածվել է լայնորեն ընդունված և տարածված հայեցակարգի[1]: Առաջին անգամ այն ձևակերպել է ամերիկացի գիտնական Ջոզեֆ Նայ կրտսերը: «Փափուկ ուժը» ընդհանուր առմամբ սահմանվում է որպես միջազգային դերակատարների նախապատվությունները ձևավորելու կարողություն գրավչության ուժի և համոզելու ունակության միջոցով՝ առանց հարկադրանք և ուժ կիրառելու[2]: Ըստ Ջ. Նայի, եթե «կոշտ ուժը» բխում է երկրի ռազմական կամ տնտեսական հզորությունից, «փափուկ ուժը» բխում է երկրի մշակույթի, քաղաքական արժեքների և արտաքին քաղաքականության գրավչությունից[3]: «Փափուկ ուժ» հասկացությունը ենթադրում է պետական և ոչ պետական դերակատարների առկայություն՝ երկրի վերաբերյալ դրական իմիջ ստեղծելու և շահավետ, վստահության վրա հիմնված հարաբերություններ կառուցելու համար[4]:

«Փափուկ ուժի» հայեցակարգի գործնական իրականացումը իր գագաթնակետին հասավ Սառը պատերազմի դարաշրջանում, երբ աշխարհը բաժանվեց անտագոնիստական ռազմաքաղաքական և սոցիալ-մշակութային բլոկների: Այս իրավիճակում անհրաժեշտ էր, որ ԱՄՆ-ն և միասնական Արևմուտքը բարձրացնեին երկաթե վարագույրի հետևում ապրող մարդկանց իրազեկությունը ազատ և ժողովրդավարական արևմտյան աշխարհի և արևմտյան արժեհամակարգի մասին, և այս նպատակին հասնելու համար «փափուկ ուժը» գլխավոր գործիքներից մեկն էր: Թեպետ Սառը պատերազմի դարաշրջանն ավարտվել է, սակայն աշխարհաքաղաքական մրցակցությունը և քաղաքական ռեժիմների առճակատումը չեն վերացել, հետևաբար «փափուկ ուժի» կիրառումը դեռևս արդիական է, և դրա դերը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ միայն աճել է: Բացի աշխարհաքաղաքական հեռանկարից, «փափուկ ուժի» նպատակներից է մշակութային և

---

[1] Տե՛ս **Winkler, S.** Conceptual politics in practice: how soft power changed the world. *Stockholm Studies in International Relations.* PhD Dissertation: Stockholm University, 2020; **Nye, J. S.** Soft power: the evolution of a concept. *Journal of Political Power*, 14 (1), 2021:

[2] Տե՛ս **Nye, J.S.** Soft Power. *Foreign Policy*, 1990, էջ 80:

[3] Տե՛ս **Nye, J.S**. *Soft Power: The Means To Success In World Politics*. New York: Public Affairs, 2005, էջ 5-6:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 191:

հանրային դիվանագիտության ամրապնդումն այն երկրներում, որտեղ այն իրականացվում է: «Փափուկ ուժը» էական դեր է խաղում կողմերի միջև հնարավոր կոնֆլիկտային իրավիճակները կանխելու և պետությունների ու հասարակությունների միջև փոխըմբռնումը ամրապնդելու գործում[5]:

Հոդվածում վերլուծվում է Միացյալ Նահանգների «փափուկ ուժի» ռազմավարությունը և դրա դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Ուսումնասիրության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանում իրականացվող ԱՄՆ-ի «փափուկ ուժի» հիմնական նպատակները, ուսումնասիրել ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ուղղությունները, մեխանիզմներն ու գործիքները: Հոդվածը կանդրադառնա հետևյալ հետազոտական հարցերին. առաջին՝ որո՞նք են Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ռազմավարության հիմնական նպատակները: Երկրորդ՝ որո՞նք են Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» հիմնական ուղղությունները, մեխանիզմները և կիրառվող գործիքները:

Հոդվածում կիրառվել են որակական հետազոտական մեթոդներ և մոտեցումներ: Օգտագործվել են օրինակի ուսումնասիրության (case study) և որակական բովանդակության վերլուծության (qualitative content analysis) հետազոտական մեթոդները: Տվյալները վերցվել են արխիվային փաստաթղթերից, գիտական հոդվածներից, քաղաքական փաստաթղթերից և ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ռազմավարության վերաբերյալ հրապարակված նյութերից և ուսումնասիրություններից: Աշխատանքում օգտագործվել են նաև ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարական գերատեսչությունների և ոչ կառավարական հաստատությունների ու գործակալությունների, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ինչպես նաև տարբեր վերլուծական կենտրոնների տրամադրած պաշտոնական տվյալները, փաստաթղթերը, վերլուծությունները և զեկույցները:

Հոդվածը բաժանված է երկու հիմնական մասի. առաջին մասում պարզաբանվում է «փափուկ ուժ» հասկացությունը: Երկրորդում ուսումնասիրվում է Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ «փափուկ ուժի» ռազմավարությունը: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են եզրակացություններում:

### «Փափուկ ուժի» հայեցակարգային ըմբռնում

Ներդրվելով 1990-ականների սկզբին՝ «փափուկ ուժ» տերմինը համեմատաբար նոր է միջազգային հարաբերությունների ակադեմիական դիսկուրսում: Թեև այն լայնորեն կիրառվում է քաղաքական ոլորտներում, սակայն հաճախ սխալ է ընկալվում և օգտագործվում ակադեմիական ճշգրտումների բացակայության պատճառով[6]: Հայեցակարգի հեղինակ Ջ. Նայի խոսքերով, «փա-

---

[5] Տե՛ս **Nye, J.S.** Public Diplomacy and Soft Power. *The Annals of the American Academy of Political and Social Science*, 616, 2008, էջ 94–109:

[6] Տե՛ս **Ichihara, M. & Nye, J.S.** Making the Case for Soft Power [Review of *Soft Power: The Means to Success in*

փուկ ուժը» «երկրի կոռպցիոն ուժն է, որը մշակութային գրավչության և գայթակղության միջոցով այլ ազգերի նախապատվությունները ձևավորելու նրա կարողությունն է»[7]: Այլ կերպ ասած՝ ««փափուկ ուժը» ուրիշներին համոզելու կարողությունն է անել այն, ինչ ցանկանում ես»[8]: Մտահղացումն այն է, որ փոխվի այլ պետությունների վարքագիծը կոոպերատիվ քաղաքականության միջոցով՝ առանց հարկադրական միջոցների դիմելու: Երկիրը կարող է ցանկալի արդյունքներ ստանալ համաշխարհային քաղաքականության մեջ, եթե այլ երկրներ հիանում են նրա արժեքներով, գաղափարախոսությամբ և ձգտում են նրա բարեկեցության և ազատության մակարդակին: «Foreign Policy» ամսագրում տպագրած իր հիմնարար աշխատության մեջ Ջոզեֆ Նայը նկարագրել է այն երեք հիմնական ռեսուրսները, որոնք առաջացնում են «փափուկ ուժ»՝ «մշակութային և գաղափարական գրավչությունը, ինչպես նաև միջազգային իրավակարգերի կանոններն ու ինստիտուտները»[9]:

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում «փափուկ ուժ» հասկացությունը փոխվել է և կատարելագործվել՝ հարմարվելով համաշխարհային քաղաքականության նոր համատեքստերին[10]: Ի տարբերություն «կոշտ ուժի», որը բխում է երկրի ռազմական կամ տնտեսական հզորությունից՝ Նայի առաջարկած արդի սահմանումներում «փափուկ ուժը» կապված է երկրի ոչ նյութական ուժային ռեսուրսների հետ, ինչպիսիք են՝ «նրա մշակույթը (այն հատվածներում, որտեղ այն գրավիչ է ուրիշների համար), նրա քաղաքական արժեքները (երբ դա համապատասխանում է նրանց ինչպես երկրի ներսում, այնպես և արտերկրում) և նրա արտաքին քաղաքականությունը (երբ դրանք համարվում են օրինական և բարոյական հեղինակություն ունեցող)[11]: Ըստ այդմ՝ «փափուկ ուժի» հիմնական գործիքներն են արտաքին քաղաքականությունը, հանրային և մշակութային դիվանագիտությունը, ինչպես նաև երկրի քաղաքական-տնտեսական զարգացման մոդելը: Մշակութային և գաղափարական գործիքներից շատերը աշխարհի առաջատար պետությունների կողմից հետևողականորեն օգտագործվում են իրենց «փափուկ ուժը» փոխանցելու համար: Դրանցից են՝ մշակութային, գիտական և կրթական կենտրոնները, տեղեկատվական և լրատվական ալիքների գործարկումը, ցանցային տեխնոլոգիաները, կրթական և մշակութային փոխանակումները, մարզական միջոցառումները, կինոն և նորաձևությունը: Արտաքին քաղաքականության և քաղաքական-տնտեսական զարգացման գրավչության

---

*World Politics*]. *The SAIS Review of International Affairs*, 26(1), 2006, էջ 197–200:

[7] **Nye, J.S.** *The Future of Power.* Philadelphia. PA: Perseus Books, 2011, p. 31.

[8] **Wilson, E.J.** Hard Power, Soft Power, Smart Power. *The Annals of the American Academy of Political and Social Science*, 616, 2008, p. 110-124.

[9] **Nye, J.S.** Soft Power. *Foreign Policy*, 80, 1990, p. 166-167.

[10] Ավելի ուշ Ջոզեֆ Նայը առաջարկեց ևս մեկ եզրույթ՝ «խելացի ուժ» (smart power), որը միավորում էր «փափուկ ուժի» և «կոշտ ուժի» բաղադրիչները (տե՛ս **Nye, J.S.** Get smart: Combining hard and soft power. *Foreign Aff.*, *88*, 2009, էջ 160):

[11] Տե՛ս **Nye, J.S.** *The Future of Power.* Philadelphia. PA: Perseus Books, 2011, էջ 84:

ռեսուրսը սովորաբար իրականացվում է հետևյալ գործիքների միջոցով՝ պաշտոնական դիվանագիտություն, հանրային դիվանագիտություն, միջազգային լրատվամիջոցներ, համապատասխան միջազգային ինստիտուտների ստեղծում, ինչպես նաև խոշոր ենթակառուցվածքային նախագծերի իրականացում, անդրազգային ներդրումներ, միջազգային ֆինանսական հաստատությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) ակտիվ ֆինանսավորում և կարիքավոր պետություններին տնտեսական օգնության և զարգացման աջակցության քաղաքականություն:

«Փափուկ ուժի» ռազմավարությունը կոչված է ազդելու ինչպես բնակչության գերակշիռ մասի, այնպես էլ համապատասխան պետության քաղաքական ու տնտեսական էլիտայի գիտակցության վրա: Սակայն դա ոչ թե ազդեցության միակողմանի տարածում է, այլ փոխազդեցություն, ինչն էլ այն տարբերում է քարոզչությունից[12]: Սրանով «փափուկ ուժը», ի տարբերություն «կոշտ ուժի», ուղղված չէ արտաքին քաղաքական խնդիրների անհապաղ լուծմանը: «Փափուկ ուժը», ներառյալ պետության մշակույթի, արժեքների և իդեալների, քաղաքացիների ապրելակերպի և կրթական ներուժի բացահայտումը, արտաքին քաղաքականության երկարաժամկետ գործիք է:

Այսպիսով, «փափուկ ուժը» պետության արտաքին քաղաքականության գործիքակազմում մի համալիր է, որը ներառում է տնտեսությունից և բիզնեսից մինչև մշակույթ և կրթություն, ինչպես նաև հասարակությունների և անհատների միջև փոխգործակցություն, ինչը հնարավորություն է տալիս պետությանը իրականացնելու իր ռազմավարական նպատակները միջազգային ասպարեզում ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական մակարդակներում:

**Ամերիկյան «փափուկ ուժի» ռազմավարությունը Հայաստանի նկատմամբ**

Որպես աշխարհի առաջատար տնտեսական և ռազմական հզոր ուժ, որն ունի գերիշխող դիրք միջազգային բազմաթիվ կազմակերպություններում՝ Միացյալ Նահանգները ունի բազմաթիվ ռեսուրսներ, որոնք կարող են պոտենցիալ «փափուկ ուժ» ստեղծել: Ըստ Նայի՝ Միացյալ Նահանգները առաջնային «փափուկ ուժի» աղբյուր է միջազգային հանրությունում, քանի որ կարողացել է ոգեշնչել միջազգային կազմակերպություններին և երկրներին՝ ընդունելու ԱՄՆ-ի տնտեսությանն ու ամերիկյան հասարակությանն և գաղափարախոսությանը բնորոշ լիբերալ, ազատ շուկայական սկզբունքները[13]: ԱՄՆ-ի գրավչության ուժը մասամբ հիմնված է ամերիկյան մշակույթի, արժեքների և արտաքին քաղաքականության, բայց նաև երկրի ներսում ժողովրդավարության պրակտիկայի վրա: Հիմնականում այն գրավիչ է ոչ թե իր կառավարության գործողությունների, այլ

---

[12] Տե՛ս **Nye, J.S.** Propaganda isn't the Way: Soft Power. *International Herald Tribune*, January 10, 2003, https://www.belfercenter.org/publication/propaganda-isnt-way-soft-power (մուտք՝ 20.01.2023):

[13] Տե՛ս **Nye, J.S.** Soft Power. *Foreign Policy*, 80, 1990, էջ 168:

քաղաքացիական հասարակության, ինքնադրսևորման և բարեփոխումների կարողությունների, ինչպես նաև մշակույթի հասանելիության շնորհիվ[14]: Միացյալ Նահանգների «փափուկ ուժի» ամենամեծ աղբյուրներից են ամերիկյան մամուլի ազատությունը, անկախ դատարանները, բողոքի խաղաղ ցույցերը և շարժումները, ամերիկյան հիմնադրամների, ինչպես նաև համալսարանների և կորպորացիաների բարեգործական աշխատանքը: Միևնույն ժամանակ, ժամանցային արդյունաբերությունը և մեդիա դաշտը, մասնավորապես հոլիվուդյան ֆիլմերը, փոփ երաժշտությունը, սոցիալական մեդիա հարթակները (Facebook, Instagram, Twitter, Youtube, LinkedIn), տարբեր հոսքային հեռուստատեսային հարթակները և ծառայությունները (Netflix, HBO Max, Prime Video) գեներացնում են սեփական «փափուկ ուժը»:

Խորհրդային Միության փլուզումից և նորանկախ պետությունների կազմավորումից հետո ԱՄՆ-ն ձեռնամուխ եղավ իր ազդեցությունը տարածելու այդ երկրներում՝ ֆինանսական և մարդասիրական օգնության, ժողովրդավարության և ազատ շուկայական տնտեսության խթանման միջոցով[15]:

Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թվականի հունվարի 7-ին՝ Խորհրդային Միության փլուզումից և 1991 թվականի դեկտեմբերի 25-ին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումից հետո: Հայաստանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականության մեջ կարևոր դրվագ էր 1992 թվականի ապրիլին «Ազատություն Ռուսաստանին և զարգացող եվրասիական ժողովրդավարություններին և բաց շուկաների աջակցության մասին» ակտը (հայտնի է նաև որպես «Ազատության աջակցության ակտ»), որը նախատեսում էր ԱՄՆ կառավարության աջակցություն հետխորհրդային նորանկախ պետություններին՝ լուծելու մարդասիրական խնդիրները, խրախուսելու և աջակցելու ժողովրդավարացմանը, ինչպես նաև կառուցելու շուկայական տնտեսություն և այլն[16]: Անկախության առաջին տարիներին Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում ամերիկյան մարդասիրական ամենամեծ օգնություն ստացողն էր, իսկ աշխարհում երրորդն էր (Իսրայելից և Եգիպտոսից հետո) մեկ շնչի հաշվով[17]:

---

[14] Տե՛ս **Nye, J.S.** American Democracy and Soft Power. *Project Syndicate. Politics,* November 2, 2021, https://www.project-syndicate.org/commentary/american-democracy-and-soft-power-by-joseph-s-nye-2021-11 (մուտք՝ 07.01.2023); **Nye, J.S.** Soft Power and American Foreign Policy. *Political Science Quarterly,* 119, 2004, էջ 255-270:

[15] Տե՛ս The White House. A National Security Strategy of Engagement and Enlargement, 1994, էջ 23; US Department of State. Integrated Country Strategy: Armenia. ICS, May 4, 2022, https://www.state.gov/wp- content/uploads/2022/07/ICS_EUR_Armenia_Public.pdf (20.12.2022):

[16] Տե՛ս Freedom Support Act. S 2532 – 102nd Congress (1991-1992): Freedom Support Act 1992, https://www.congress.gov/bill/102nd-congress/senate-bill/2532/text (մուտք՝ 20.02.2023):

[17] Տե՛ս **Gregg, H.** Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States. *MIT Working Paper,* 13, 2002, էջ 23-24, https://dspace.mit.edu/bitstream/handle/1721.1/97604/13_ divided.pdf?sequence=1&isallowed=y (մուտք՝ 02.10.2022); Հայաստանում ԱՄՆ դեսպանություն.

1992 թ. Երևանում ԱՄՆ դեսպանատան հիմնադրումից ի վեր, ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը նախաձեռնել է կրթական և մշակութային մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են հայ հասարակությանը և լրատվամիջոցներին ԱՄՆ արժեքների և քաղաքականության մասին իրազեկելուն, ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և ազատությունները զարգացնելուն, ինչպես նաև երկկողմ համագործակցությունը ամրապնդելուն՝ մշակութային և ակադեմիական ծրագրերի և փոխանակումների, ՀԿ-ների և լրատվամիջոցների համար պետական փոքր դրամաշնորհների, տեղական մամուլի հետ աշխատանքի և ԱՄՆ կրթական ծրագրեր շրջանավարտների ակտիվ ներգրավման միջոցով:

Քանի որ կրթությունը համարվում է ժողովրդավարության հիմնական տարրը, ԱՄՆ-ի «փափուկ ուժի» գործունեության ամենալայն շրջանակը կրթական ծրագրերն են, ինչպիսիք են՝ Ֆուլբրայթը (the Fulbright), Հյուբերտ Հ. Համֆրիի կրթաթոշակը (the Hubert H. Humphrey Fellowship), ԱՄՆ ինստիտուտների ուսումնասիրությունների ծրագիրը (the Study of the U.S. Institutes (SUSI)), Պրոֆեսիոնալ գործընկերների ծրագիրը (the Professional Fellows Program (PFP)), Ապագա առաջնորդների փոխանակման ծրագիրը (the Future Leaders Exchange (FLEX)), Համաշխարհային բակալավրիատի փոխանակման ծրագիրը (the Global Undergraduate Exchange Program (Global UGRAD)), Միջազգային այցելուների առաջնորդության ծրագիրը (the International Visitors Leadership Program (IVLP)), Ուսուցման գերազանցություն և ձեռքբերում ծրագիրը (the Teaching Excellence and Achievement (TEA)) և այլն: Բացի կրթական և փոխանակման ծրագրերից, առկա են նաև փոքր դրամաշնորհային ծրագրեր, տարբեր հիմնադրամներ և ԱՄՆ կրթական ծրագրերի շրջանավարտների դրամաշնորհներ, ինչպես նաև մշակութային ծրագրեր, որոնք իրականացվում են Միացյալ Նահանգների դեսպանության և ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից և կոչված են խթանելու ամերիկյան մշակույթը ՀՀ-ում, ամրապնդելու մարդկանց միջև շփումները և հաղորդակցությունը հայ ու ամերիկյան հասարակությունների միջև[18]:

Ամերիկյան մեկ այլ կրթօջախի օրինակ են Երևանում և Հայաստանի չորս մարզերում տեղակայված Ամերիկյան անկյունները (American Corners), որտեղ այցելուները կարող են ընդգրկվել և զարգացնել իրենց գիտելիքները ամերիկյան մշակույթի մասին, սովորել անգլերեն ֆիլմերի, գրքերի, ամսագրերի, ինչպես նաև անգլերենի անվճար դասընթացների և տարբեր ծրագրերի ու դասախոսությունների միջոցով[19]:

---

*Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին (1991-2001 թթ.). նվիրումի և համագործակցության տասնամյակ,* Եր., Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, 2001, էջ 5:

[18] Տե՛ս US Embassy in Armenia, https://am.usembassy.gov/education-culture/ (մուտք՝ 02.11.2023):

[19] Տե՛ս American Corners, https://am.usembassy.gov/education-culture/american-corners/ (մուտք՝ 02.10.2023):

1996 թվականից Հայաստանում գործում են Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդները (American Councils for International Education), որոնք, ֆինանսավորվելով ԱՄՆ պետդեպարտամենտի, կրթության նախարարության, միջազգային զարգացման գործակալության, Կոնգրեսի գրադարանի, Հումանիտար գիտությունների ազգային հիմնադրամի, Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի և այլ հաստատությունների կողմից, նպաստում են երկու երկրների և հասարակությունների միջև փոխըմբռնմանը և միջազգային կապերի ամրապնդմանը՝ ակադեմիական, մասնագիտական և մշակութային փոխանակումների, կրթության զարգացման, հետազոտությունների և պրակտիկայի միջոցով: Տարիների ընթացքում Ամերիկյան խորհուրդները Հայաստանից բարձր դասարանների և համալսարանների ուսանողներին, մանկավարժներին և պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն են տվել սովորելու, հետազոտելու և մասնագիտական հմտություններ ձեռք բերելու Միացյալ Նահանգներում: Միևնույն ժամանակ, բազմաթիվ ամերիկացի ուսանողներ, գիտնականներ և մասնագետներ ուղևորվել են Հայաստան՝ հայերեն կամ տարածաշրջանային այլ լեզուներ սովորելու, մասնագիտական միջոցառումների և պրակտիկաների մասնակցելու կամ ակադեմիական հետազոտություններ կատարելու համար[20]: Ամերիկյան խորհուրդների անմիջական վերահսկողության ներքո և ԱՄՆ պետդեպարտամենտի աջակցությամբ Հայաստանում գործում է EducationUSA Armenia-ն, որը հայ ուսանողներին տրամադրում է ճշգրիտ և համապարփակ տեղեկատվություն ԱՄՆ քոլեջներում և համալսարաններում կրթության հնարավորությունների մասին[21]:

Այսպիսով, արտերկրում ուսանելու և լեզուն սովորելու ընթացքում ուսանողները ծանոթանում են Միացյալ Նահանգների գիտության և մշակույթի նվաճումներին և դրական տպավորություն են կազմում երկրի մասին: Այս ծրագրերի շրջանավարտները կուտակում են գիտելիքներ, արժեքավոր սոցիալական կապիտալ, ձևավորում համակրանքներ, հաստատում կապեր և ձեռք են բերում նոր ընկերներ: Սրանք նպաստում են հայ երիտասարդների շրջանում արևմտյան ժողովրդավարության՝ որպես հավասար հնարավորությունների ազատ և բազմամշակութային հասարակության գրավիչ պատկերի ձևավորմանը:

Հայաստանում ԱՄՆ կրթական «փափուկ ուժի» ևս մեկ կարևոր տարրը Հայաստանի Ամերիկյան համալսարանն է (ՀԱՀ): Ամերիկյան կառավարության աջակցությամբ 1991 թ. ստեղծված ՀԱՀ-ն առաջարկում է Հայաստանում ամերիկյան կրթական համակարգ՝ մագիստրատուրայի և բակալավրիատի մակարդակներով: Կրթական ծրագրերին զուգահեռ՝ ՀԱՀ-ը նաև խթանում է գիտությունը

---

[20] Տե՛ս American Councils for International Education Armenia, https://armenia.americancouncils.org (մուտք՝ 03.05.2023):

[21] Տե՛ս EducationUSA Armenia, https://educationusa.state.gov/centers/yerevan-american-councils (մուտք՝ 03.05.2023):

վերլուծական, հետազոտական և զարգացման տարբեր կենտրոնների միջոցով: Բացի այդ, հաստատությունը խրախուսում է ժողովրդավարական արժեքները և քաղաքացիական ներգրավվածությունն ու ծառայությունը հասարակությանը[22]:

Միևնույն ժամանակ, ամերիկյան տարբեր հիմնադրամներ ակտիվորեն համագործակցում են Հայաստանի առաջատար բուհերի (Երևանի պետական համալսարան, Հայաստանի Ամերիկյան համալսարան և այլն) և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ: Հավաքված արտաքին (ինչպես պետական, այնպես էլ մասնավոր) միջոցների հաշվին ակադեմիական հաստատություններում ներդրվում են ծրագրեր և դասընթացներ՝ նվիրված ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և ամերիկյան ուսումնասիրություններին: Օրինակ՝ 2019 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Հանրային դիվանագիտության բաժնի կողմից դրամաշնորհ ստանալուց հետո Երևանի պետական համալսարանը, Արիզոնայի պետական համալսարանի հետ համագործակցելով, ստեղծեց Ամերիկյան հետազոտությունների կենտրոնը և 2021 թվականին մեկնարկեց Ամերիկագիտության մագիստրոսական ծրագիրը: Ինչպես նշեց ԱՄՆ դեսպան Թրեյսին՝ «այս մագիստրոսական ծրագիրը հնարավորություն կտա հայ ուսանողներին, գտնվելով Հայաստանում, ուսումնասիրել ԱՄՆ հասարակության, քաղաքականության, դիվանագիտության և տնտեսության տարբեր ասպեկտներ: Այսպիսով նրանք կկուտակեն հմտություններ, որոնք անհրաժեշտ են մեր քաղաքականությունն ու հասարակությանը հասկանալու և հայ հանրությանը բացատրելու համար»[23]: Իսկ Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի ֆինանսական աջակցությամբ 2003 թվականին ստեղծվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները (ՀՌԿԿ), որոնք նախագծերի և ուսումնական կենտրոնների ցանց են և ներգրավված են Հարավային Կովկասում սոցիալական գիտությունների հետազոտություններում և հանրային քաղաքականության վերլուծության ոլորտներում[24]:

Քաղաքացիական դիվանագիտության և միջանձնային փոխանակումների, ժամանակակից «փափուկ ուժի» հիմնական տարրերի և ԱՄՆ ավանդական արտաքին քաղաքականության հավելյալ սյուների մեկ այլ կարևոր օրինակ են Միացյալ Նահանգների Խաղաղության կորպուսի կամավորները: 1961 թվականին ԱՄՆ նախագահի թեկնածու Ջոն Ֆ. Քենեդին ձեռնարկեց այս կորպուսի ստեղծումը, որպես ԱՄՆ ազդեցությունը տարածելու արտաքին քաղաքականության ռազմավարություն՝ համաշխարհային խաղաղությունն ու բարեկամությունը տեխնիկական օգնության տրամադրման միջոցով ամրապնդելու

---

[22] Տե՛ս American University of Armenia, https://aua.am/about/about-aua/ (մուտք՝ 22.05.2023):

[23] US Embassy in Armenia. "Opening of the American Studies Center and Official Launch of the Master's Program in American Studies", December 10, 2021, https://am.usembassy.gov/american-studies-center/ (մուտք՝ 10.07.2023):

[24] Տե՛ս Caucasus Research Resource Center – Armenia, https://www.crrc.am/about-us/ (մուտք՝ 29.07.2023):

նպատակով: Մեր օրերում ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորները ակտիվորեն խթանում են ամերիկյան «փափուկ ուժը», արտաքին քաղաքականությունը և ԱՄՆ ազգային շահերը: Կազմակերպության հիմնական նպատակներն են օգնել շահագրգիռ երկրների բնակիչներին՝ լրացնելու անհրաժեշտ վերապատրաստում ունեցող մարդկանց պակասը, նպաստելու սպասարկվող մարդկանց կողմից Ամերիկայի և ամերիկացիների ավելի լավ ճանաչմանը, ինչպես նաև՝ ամերիկացիների կողմից այլ ժողովուրդների ավելի լավ ըմբռնմանը՝ անգլերենի ծրագրերի, կրթական և գյուղական զարգացման մի շարք նախագծերի միջոցով: Օրինակ՝ «Անգլերենը որպես օտար լեզու» և «-Համայնքի և երիտասարդության զարգացումը» ծրագրերը: 1992 թվականին Հայաստանում Խաղաղության կորպուսի առաքելության մեկնարկից ի վեր, ավելի քան 1000 կամավորներ եկել են Հայաստան՝ ծանոթանալու տեղական մշակույթին և սովորույթներին, ինչպես նաև բնակչությանը փոխանցելու ամերիկյան հասարակության արժեքները՝ ներգրավվելով զարգացման ծրագրերում, իրենց ներդրումն ունենալով տեղական ՀԿ-ների առաջընթացին՝ օգնել են նրանցից շատերին նախագծելու և իրականացնելու տարբեր ծրագրեր և ծառայություններ հիմնականում գյուղական համայնքներում[25]:

Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» իրականացման առանցքային մասնակիցներից է նաև Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը (ՄԶԳ) (U.S. Agency for International development (USAID)): 1992 թվականից ԱՄՆ ՄԶԳ-ն Հայաստանում իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնք նպաստում են տնտեսական, քաղաքական և սոցիալական վերափոխմանը: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը Հայաստանում հիմնականում զբաղվում է սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներով: Հայտարարված նպատակներն են՝ ժողովրդավարության խթանումը, տնտեսական աճի արագացումը և էներգետիկ անվտանգության ամրապնդումը, սոցիալական բարեփոխումների և երկարաժամկետ կայուն զարգացման աջակցությունը, Հայաստանի՝ դեպի ազատ շուկայական, ժողովրդավարական հասարակություն անցման խթանումը[26]: Հատկանշական է, որ տարիների ընթացքում գործակալության աջակցությունը մարդու անմիջական և հիմնական կարիքները բավարարելու համար մարդասիրական օգնություն տրամադրելուց վերափոխվել է երկարաժամկետ կայուն զարգացմանն աջակցության:

Հայաստանում Ամերիկայի «փափուկ ուժի» մեկ այլ հենարան է քաղաքացիական հասարակության զարգացման խթանումը տարբեր գործակալությունների և հիմնադրամների միջոցով, ինչպես նաև ՀԿ-ների և լրատվամիջոցների հետ աշխատանքը և ֆինանսավորումը, օրինակ՝ «Եվրասիա համագործակցության հիմնադրամը», «Երևանի մամուլի ակումբը», «Մարդկային զարգացման միջազգային

---

[25] Տե՛ս US Peace Corps in Armenia, https://www.peacecorps.gov/armenia/?fbclid=IwAR3A8S5Eb8gm5Xmkl0DEYsnqEjzHtw2q3fz8prN0UO-Wy_Ugx0fbGcvCojI (մուտք՝ 10.07.2023):

[26] Տե՛ս The US Agency for International Development, https://www.usaid.gov/armenia (մուտք՝ 15.07.2023):

կենտրոնը» և այլն: Այսպիսով, կենտրոնանալով մարդու իրավունքների ոլորտի զարգացման, տեղական ինքնակառավարման գործընթացում հասարակության մասնակցության խթանման, օրենքի գերակայության, լրատվամիջոցների զարգացման, արդար ընտրությունների և հակակոռուպցիոն խնդիրների վրա, ԱՄՆ-ն ոչ միայն խթանում է իր գրավիչ իմիջը, այլև ստեղծում է որակապես նոր քաղաքացիական հասարակություն, որը կարող է է՛լ ավելի նպաստել երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը նոր էլիտայի ձևավորման միջոցով:

Հաշվի առնելով XXI դարում զանգվածային լրատվության միջոցների հսկայական դերը որոշակի արժեքների առաջմղման և հանրային կարծիքի ձևավորման գործում՝ պետք է հիշատակել նաև «Ազատ Եվրոպա/ Ազատություն» ռադիոկայանը (Radio Free Europe/Radio Liberty) և «Ամերիկայի ձայնը» (Voice of America)՝ որպես ԱՄՆ-ի «փափուկ ուժի» գեներատորներ՝ ուղղված արևմտյան ժողովրդավարական արժեքների և մամուլի ազատության խթանմանը: Ֆինանսավորվելով ԱՄՆ Կոնգրեսի դրամաշնորհով՝ Միացյալ Նահանգների Գլոբալ ԶԼՄ-ների գործակալության միջոցով ամերիկյան նշված երկու հեռարձակող կազմակերպությունները Սառը պատերազմի ժամանակաշրջանում Ամերիկայի ամենաhզոր գործիքներից էին[27]: Նրանց հիմնական առաքելությունն էր Խորհրդային Միությունում ապրող բնակչությանը տեղեկացնել Արևմուտքի և ժողովրդավարական արժեքների մասին: Չնայած Սառը պատերազմի ավարտին՝ երկու հեռարձակման հարթակները շարունակում են կարևորվել ԱՄՆ շահերի համար նույնիսկ մեր օրերում՝ ավելի բարդացող և դինամիկ գլոբալ տեղեկատվական միջավայրում:

Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ընդլայնմանը և ամրապնդմանը նպաստում է նաև տարբեր ամերիկյան բավականին ակտիվ ոչ կառավարական հիմնադրամների և կազմակերպությունների ներկայությունը, ինչպիսիք են Բաց հասարակության հիմնադրամը (Open Society Foundation) և Ժողովրդավարության ազգային հիմնադրամը (National Endowment for Democracy), որոնք աջակցում են շատ նախագծերի: Դրանց նպատակն է զարգացնել ժողովրդավարական ինստիտուտները, ազատ լրատվամիջոցները և անկախ լրագրությունը, քաղաքացիական ակտիվությունը (հիմնականում երիտասարդ քաղաքական առաջնորդների) և պաշտպանել մարդու իրավունքները Հայաստանում՝ ի թիվս այլ միջոցների, ֆինանսավորելով հատուկ նախաձեռնություններ, որոնք աջակցում են մարդասիրական ծրագրերին, հանդուրժողականության զարգացմանը և հանրային կարծիքի փոփոխություններին մարգինալացված խմբերի վերաբերյալ, ինչպես նաև սեռական, կրոնական և այլ փոքրամասնությունների նկատմամբ խտրականության նվազեցմանը[28]:

---

[27]Տե՛ս Radio Free Europe/Radio Liberty, https://pressroom.rferl.org/about-us (մուտք՝ 01.06.2023); Voice of America, https://www.voanews.com (մուտք՝ 01.06.2023):

[28] Տե՛ս Open Society Foundation, https://www.osf.am (մուտք՝ 07.06.2023); National Endowment for Democracy (NED), https://www.ned.org/region/eurasia/armenia-2021/ (մուտք՝ 07.06.2023)

**Եզրակացություններ**

Ո՛չ ռազմական և ո՛չ հարկադրական՝ փափուկ միջոցների կիրառման գաղափարը ավելի մեծ կարևորություն է ստանում քաղաքականության մեջ արդյունքի հասնելու համար: «Փափուկ ուժի» նշանակությունը մեծանում է գլոբալացման, աճող բազմամշակութայնության և ժողովրդավարական ու ազատական սկզբունքների տարածման պայմաններում: Ներկայումս «փափուկ ուժը» ավելի հաճախ է օգտագործվում համաշխարհային քաղաքականության ժամանակակից դերակատարների, մասնավորապես՝ գերտերությունների արտաքին քաղաքականության գործիքակազմում:

Միացյալ Նահանգների «փափուկ ուժը» հիմնված է ոչ միայն այս գերտերության պոտենցիալ հնարավորությունների, այլ նաև նրա արտաքին և ներքին քաղաքականության տպավորիչ արդյունքների վրա:

Հայաստանում ԱՄՆ-ի «փափուկ ուժի» ռազմավարության հիմնական նպատակներն են՝ ամրապնդել դիվանագիտական երկկողմ հարաբերությունները, երկրում խթանել Միացյալ Նահանգների վերաբերյալ դրական ընկալումները և տարածել իր ազդեցությունը ոչ հարկադրական միջոցներով՝ ուղղված ժողովրդավարության, ազատ շուկայական տնտեսության, մարդու իրավունքների և ազատությունների արմատավորմանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը, ինչպես նաև երկու երկրների և հասարակությունների միջև փոխըմբռնմանը և երկկողմ համագործակցության ու գործընկերության ամրապնդմանը:

Հայաստանի նկատմամբ Միացյալ Նահանգների «փափուկ ուժը» հիմնականում իրականացվում է կրթական ծրագրերի, մշակութային, հանրային և քաղաքացիական դիվանագիտության միջոցով: Ամերիկյան «փափուկ ուժը» կարևորում է ակտիվ համագործակցությունը քաղաքացիական հասարակության, երիտասարդության, տեղական լրատվամիջոցների և ՀԿ-ների հետ՝ կրթական, մշակութային, ակադեմիական ծրագրերի և փոխանակումների, ինչպես նաև ՀԿ-ների և լրատվամիջոցների համար դրամաշնորհային ռեսուրսների միջոցով: Հայաստանում ԱՄՆ դիվանագիտական առաքելության գործունեությունից զատ, Հայաստանում ամերիկյան «փափուկ ուժի» ընդլայնմանը և ամրապնդմանը նպաստում է այստեղ ամերիկյան տարբեր գործակալությունների և հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և հաստատությունների ներկայությունը*:

**НОРА ГЕВОРКЯН** – ***Стратегия «мягкой силы» во внешней политике США в отношении Армении.*** – В сегодняшнюю эпоху глобализации и растущего мультикультурализма сила убеждения оказывает значительное влияние на улучшение взаимопонимания между странами и обществами. В современности «мягкая сила» все чаще используется как один

---

* Սույն հոդվածը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի շրջանակում: Այստեղ արտահայտված են հեղինակի դիրքորոշումները, որոնց համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշումներին պարտադիր չէ:

из основных инструментов формирования внешнеполитической стратегии современных акторов мировой политики, в частности великих держав. В статье рассматривается стратегия «мягкой силы» США и ее реализация в Республике Армения. Основной целью исследования является выявление и анализ основных целей стратегии «мягкой силы» США в Армении, а также основных направлений, механизмов и инструментов реализации американской «мягкой силы» в Армении.

В статье делается вывод о том, что центральные цели стратегии «мягкой силы» США в Армении направлены на формирование позитивного восприятия Соединенных Штатов в стране, укрепление дипломатических отношений и продвижение американских интересов посредством ненасильственных средств, направленных на продвижение культуры западного либерализма и демократии, а также укрепление сотрудничества и взаимопонимания между двумя обществами и государствами. «Мягкая сила» США в отношении Армении в основном реализуется через образовательные программы, через культурную, общественную и гражданскую дипломатию. В то же время, расширению и укреплению американской «мягкой силы» в Армении способствует присутствие здесь различных американских агентств и фондов, неправительственных организаций и учреждений.

**Ключевые слова:** *"мягкая сила", внешняя политика, США, Республика Армения, распространение влияния, ненасильственные средства*

**NORA GEVORGYAN** – ***The Soft Power Strategy in the American Foreign Policy towards Armenia.*** – In today's era of globalization and growing multiculturalism, the power of persuasion has a significant impact on enhancing understanding among nations and societies. In modern times, soft power is increasingly being used as one of the main tools for shaping the foreign policy strategy of contemporary actors of world politics, in particular global powers. The article analyzes United States soft power and its implementation in the Republic of Armenia. The primary purpose of the study is to identify the key directions and examine the main operating mechanisms and tools of the US soft power in Armenia.

The paper argues that the central objectives of the US soft power strategy in Armenia are to form positive perceptions of the United States in the country, strengthen diplomatic relations and advance American interests through non-coercive means aimed at promoting the culture of Western liberalism and democracy in Armenia, as well as enhancing cooperation and mutual understanding between the two societies and states. The US soft power in relation to Armenia is mainly realized through educational instruments and relations, as well as cultural, public and civil diplomacy. The presence of various American agencies and funds, non-governmental foundations and organizations in Armenia contributes to the expansion and strengthening of American soft power in Armenia.

**Key words -** *soft power, foreign policy, the United States, Republic of Armenia, advancement of influence, non-coercive means*

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), ապրիլ, 71-82
https://doi.org/10.46991/BYSU:D/2024.15.1.071

# ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ
## (1917 թ. հոկտեմբեր– 1918 թ. մարտ)

ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ *
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում լուսաբանվում են բոլշևիկյան հեղաշրջման հարցում Գերմանիայի դիրքորոշումը պայմանավորող գործոնները, 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. մարտն ընկած ժամանակահատվածում Անդրկովկասում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, ինչպես նաև Գերմանիայի անդրկովկասյան քաղաքականության նրբերանգները՝ տարածաշրջանում նրա գերակա շահերի տեսանկյունից: Բոլշևիկյան իշխանության վերելքը, հին կայսերական կարգերի փլուզումը և անկախ պետությունների առաջացումը էապես փոխեցին տարածաշրջանի քաղաքական պատկերը՝ ազդելով նաև Գերմանիայի ներքաղաքական կյանքի ու արտաքին քաղաքական որոշումների վրա:
Հոդվածում ներկայացվել են Գերմանիայի տնտեսական շահերը տարածաշրջանում, ռազմավարական մոտեցումները և դիվանագիտական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև բոլշևիկյան հեղաշրջման վերաբերյալ առանձին քաղաքական շրջանակների մոտեցումները:
Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիան և Օսմանյան կայսրությունը նպատակ ունեին թուլացնել Ռուսաստանը, ինչը ենթադրում էր Ռուսաստանի սահմանային շրջաններում անկարգությունների և ազգայնական շարժումների խրախուսում: Գերմանիան պաշտպանում էր Անդրկովկասի երկրների անկախության գաղափարը, որոնք այն ժամանակ Ռուսաստանի կազմում էին: Այս ռազմավարության շրջանակներում այն միտված էր ծառայելու առաջին հերթին տարածաշրջանում Ռուսաստանի հետ բուֆերային գոտի ստեղծելու հիմնանպատակին:

**Բանալի բառեր** – *բոլշևիկյան հեղաշրջում, Քառյակ դաշինք, Կենտրոնական տերություններ, Բրեստ-Լիտովսկի պայմանագիր, Անդրկովկաս, Գերմանիա, Առաջին համաշխարհային պատերազմ*

* **Նուշիկ Պետրոսյան** – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ
**Нушик Петросян** – аспирантка кафедры международных отношений и дипломатии ЕГУ
**Nushik Petrosyan** – PhD Student at YSU Chair of International Relations and Diplomacy.
Էլ. փոստ՝ n.petrosyan@ysu.am, ORCID: https://orcid.org/0000-0002-2843-8202.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 23.02.2024
Գրախոսվել է՝ 18.03.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

Առաջին համաշխարհային պատերազմի բուռն ընթացքին զուգահեռ՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում առանցքային իրադարձություն էր, որը վերափոխեց ոչ միայն տարածաշրջանի քաղաքական պատկերը, այլև ողջ մոլորակի աշխարհաքաղաքական կարգը:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Կովկասը էական դեր չէր խաղում գերմանական արտաքին քաղաքականության ծրագրերում: Այնուամենայնիվ, գերմանա-թուրքական միությունը նպաստեց, որ Կովկասյան տարածաշրջանը հայտնվի Գերմանական կայսրության տեսադաշտում: 1914 թվականին Կովկասում թուրքական զորքերի անհաջողություններից հետո Գերմանիայի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ թուլացավ, սակայն 1917 թվականի փետրվարին Ռուսական կայսրության փլուզումով և Ուկրաինայի ու Ղրիմի վրա Կենտրոնական տերությունների հարձակումով, ինչպես նաև Սև ծովում գերմանական ռազմածովային ուժերի ներկայության ուժեղացմամբ Կովկասը կրկին դարձավ Գերմանիայի բարձրագույն ռազմական ղեկավարության ուշադրության առարկա:

Գլխավոր շտաբի պետ, գեներալ Էրիխ Լյուդենդորֆը խիստ կարևորեց Կովկասյան տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը. նա անվանեց այն Արևելյան ուղու շղթայի օղակ, ասես ցամաքային կամուրջ երկու մեծ ծովերի միջև՝ Աֆղանստանով Հնդկաստան տանող ճանապարհին[1]: Նրա կարծիքով՝ Ասիայի ուղղությամբ գերմանական էքսպանսիան անհնար էր առանց ռազմավարական նշանակություն ունեցող այս տարածքի վերահսկողության: Մինչդեռ արտաքին գործերի նախարարության և ռազմածովային ղեկավարության մոտեցումը այս հարցին բավականին զուսպ էր: Նրանց համար Սև ծովի և Կովկասյան տարածաշրջանի նշանակությունը ռազմավարական առումով երկրորդական էր:

Պատերազմի, դիվանագիտության և քաղաքական վերափոխումների այս խճճված ժամանակահատվածում Գերմանիան հայտնվեց բարդ երկընտրանքի առջև. ինչպես դիմակայել բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով առաջացած տրամադրությունների տարածման սպառնալիքին՝ միաժամանակ շարունակելով պատերազմը մի քանի ճակատներում: Գերմանիան առաջնորդվում էր իր ռազմավարական հաշվարկներով, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մեծ հաշվով չփոփոխվեցին, փոխվեցին միայն իրականացման հնարավորություններն ու հռետորաբանությունը: 1917 թ. վերջերից մինչև 1918 թ. սկիզբը Գերմանիան հնարավորություն ուներ Արևելքում հասնելու իր քաղաքական նպատակներին:

---

[1] Տե՛ս **Aust A., und Gerhard P. Groß,** Der Kaukasus im Fokus der deutschen militärischen Planungen während des Ersten Weltkrieges, München, Verlag Ferdinand Schöningh, 2008, էջ 47 https://zms.bundeswehr.de/resource/blob/5324258/c78d3d5db41bbde53cad65545bf8a46a/wegweiser-kaukasus-data.pdf

Բոլշևիկյան հեղաշրջման վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշման հարցը քննելիս հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ 1917 թ. բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինին Շվեյցարիայից փակ վագոնով Պետրոգրադ տեղափոխելու որոշումը կայացրել է Գերմանիայի կառավարությունը: Սա, ըստ ընդունված կարծիքի, «ատոմային ռումբի» ազդեցություն ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Նպատակը մեկն էր՝ քանդել Ռուսաստանը ներսից՝ ջլատելով պատերազմական հակառակորդին: Կայսրության ղեկավարության այս քաղաքականությունը ենթադրում էր կոտրել պատերազմի հակառակորդների ներքին դիմադրությունը և միևնույն ժամանակ հաստատել գերմանական գերակայությունը Եվրոպայում[2]: Պատահական չէ, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության երկրորդ վարչապետ Ա. Կերենսկին բոլշևիկներին որակում էր որպես «գերմանական լրտեսներ»[3]: Իրականում Գերմանիայի կողմից Վ. Լենինին Ռուսաստան ուղարկելը արկածախնդիր քայլ էր: Ռազմական առումով այն արդարացված էր. Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից, բայց սրան զուգահեռ՝ Գերմանիան ևս պիտի կարողանար պատերազմում տանուլ չտալ[4]:

Բեռլինում կանխատեսել էին Ռուսաստանում հնարավոր քաղաքական ճգնաժամը, սակայն Փետրվարյան հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարությունը չփոխեց Ռուսաստանի դիրքորոշումը պատերազմի ընթացքի վերաբերյալ, մինչդեռ հոկտեմբերյան հեղաշրջումը փոխեց իրադարձությունների ընթացքը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ողջ Կովկասում՝ պատերազմն ավարտելու և խաղաղություն հաստատելու առումով[5]: Այն հիմնովին խարխլեց Ռուսաստանի քաղաքական, ռազմական ու պետական կառուցակարգը՝ ազդելով օրինաչափ զարգացման ընթացքի վրա: 1917 թ. հոկտեմբերին բոլշևիկները[6], որոնք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ձախ ծայրահեղական խմբավորում էին, զինված հեղաշրջման ճանապարհով եկան իշխանության, սակայն կարճ ժամանակ անց հայտնվեցին ծայրահեղ ծանր վիճակում: Նրանք ստիպված էին կատարել ծանրագույն ընտրություն. կա՛մ շարունակել անորոշ ելքով պատերազմը, կա՛մ զենքերը վայր դնել ու լքել ռազմաճակատը:

---

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 49:

[3] Տե՛ս **Ватлин А. Ю.** Октябрьский переворот 1917 г. в Петрограде и его оценки в Германии, журнал “Исторические Исследования”, № 6, М., 2017, էջ 423:

[4] Տե՛ս **Kosiarski J.,** Deutschland, Mitteleuropa und die Revolutionierung Russlands, Universität Warschau, Stosunki Międzynarodowe – International Relations nr 2 (t. 51) 2015, http://www.irjournal.pl/pdf-124730-52773?filename=Germany_%20Mitteleuropa%20and.pdf

[5] Տե՛ս **Գ. Պետրոսյան,** Անդրկովկասը դիվանագիտության հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար -1918 թ. հունիս), Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 22:

[6] Տե՛ս The October Revolution, Glossary of the Russian Revolution, https://www.marxists.org/history/ussr/events/revolution/index.htm

1917 թ. հոկտեմբեր 10-ին «Մշակ» լրագիրը գրում է. «Ռուսաստանի ընդհանուր դրութիւնը սոսկալի էր:

Դէպքերը, մէկը միւսից ահռելի, սրընթաց առաջ էին գնում:

Չորրորդ Պետական Դուման արձակված է: Այլ ևս չկայ Պետական Դումա, որ, պէտք է ասել, ինքն իրան դատապարտել էր անգործունէութեան:

Գումարվել է նոր Դումա կամ Նախապարլամենտ, որ կոչվում է Հանրապետութեան Խորհուրդ, որ բաղկացած է 555 անդամներից, վերցրած՝ ռամկավար շարքերից և մի մասը ևս ցենզաւորներից: Ժամ. Կառավարութիւնը պետութեան գլխավոր հիմնարկութիւնների հետ միասին տեղափոխվում է Մօսկվա: Թշնամին՝ Գերմանիան արդէն մտել է Րիգայի ծովախորշը և պատրաստվում է յարձակվել Պետրօգրադի վրա: Ռուսական նավատօրմը ստիպված է հեռանալ և մտնել Ֆինլանդական ծովախորշը, որը վերջին անցքն է դեպի Պետրօգրադ: Հասել է վերջին, սպառնալից րօպէն, երբ ռուսական յեղափոխութիւնը կամ պէտք է ամօթապարտ իր գլուխը խոնարհեցնէ, ինչպէս և իր դրօշակը, Վիլհէլմի և նրա դրօշակի առաջ, կամ պաշտպանէ իրան և Ռուսաստանը մինչև իր արեան վերջին կաթիլը»[7]:

Անգլիական ռազմական ներկայացուցիչ, հետագայում Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը բոլշևիկյան հեղաշրջումը բնորոշեց հետևյալ կերպ. «Հին դաշնակցի փոխարեն մեր առջև ուրվական է կանգնած, որը նման չէ աշխարհում մինչ այժմ գոյություն ունեցած որևէ բանի: Մենք տեսնում ենք պետություն՝ առանց ազգի, բանակ՝ առանց հայրենիքի և կրոն՝ առանց Աստծո»[8]: Բոլշևիկյան հեղաշրջման նկատմամբ յուրահատուկ էր Անդրկովկասյան և Կովկասյան ճակատում տեղակայված հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների, հրամանատարական կազմի վերաբերմունքը: Կովկասյան բանակի արձագանքներին բնութագրական էր միասնական մոտեցման բացակայությունը անգամ առանձին զորամասերում: Գերմանական ղեկավարության համար առաջնային էր այն, որ հոկտեմբերյան հեղաշրջումը թուլացրեց Ռուսաստանի պատերազմական ներուժը, ինչի շնորհիվ Գերմանիան հնարավորություն էր ստանում ամրապնդելու Արևմտյան ճակատը և ամրացնելու սեփական դիրքերը Արևելյան Եվրոպայում[9]:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո արվեցին գործնական քայլեր՝ հասնելու խաղաղության. բոլշևիկները հանդես եկան անջատ հաշտության մասին հայտարարությամբ: Նրանք առաջնորդվում էին այն գաղափարով, որ պետք է հասնել խաղաղության՝ առանց անեքսիաների և ուտոպիական ռազմատուգանքների: Թե որքանով էին իրատեսական նրանց մոտեցումները, ցույց տվեց

---

[7] «Մշակ», լրագիր, Թիֆլիս, 10 հոկտեմբեր 1917 թ., https://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1917/1917(215)_ocr.pdf:

[8] **Черчилль У.** Мировой кризис, Москва-Ленинград, 1932, с. 39, http://militera.lib.ru/memo/english/churchill2/index.html

[9] Տե՛ս **Kosiarski J.,** նշվ. աշխ., էջ 330:

ժամանակը: Հեղաշրջումից հետո ռազմաճակատը հիմնովին կազմալուծվեց: Սա հատկապես նկատելի էր Կովկասյան ճակատում, որտեղ ակներև էին մի կողմից ազգամիջյան հակասությունները, և մյուս կողմից սերտ հարաբերություններ էին հաստատվել օսմանյան Թուրքիայի և Կովկասի մահմեդականների միջև: Փաստորեն, բոլշևիկների նոր՝ խաղաղարար մոտեցումը հանգեցրեց ճակատային ամբողջ գծում դասալքությունների և կանխորոշեց պատերազմի ոչ շահեկան ավարտը Ռուսաստանի համար[10]:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը փոխեց նաև եվրոպական պետությունների պատմության զարգացման ընթացքը: Սկզբնական շրջանում միջազգային հանրության կողմից այս իրադարձությունը պատշաճ արձագանքի չարժանացավ, քանի որ այն մնացել էր Առաջին աշխարհամարտի ստվերում: Դա ամբողջ խորությամբ չէին գիտակցում անգամ այն իրականացնողները:

Հեղաշրջումից հետո Գերմանիային՝ որպես Ռուսաստանի հիմնական հակառակորդի, հետաքրքրում էր՝ Ռուսաստանը պատերազմից դուրս կգա՞, թե՞ ոչ: Սրա հիման վրա պետք է կառուցվեր Գերմանիայի ռուսական քաղաքականությունը:

Հոկտեմբերյան հեղաշրջումից շատ չանցած՝ 1917 թ. դեկտեմբերի 3-ին, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար Ռիչարդ Կյուլմանը զեկույց ներկայացրեց Գերմանիայի կայսր Վիլհելմին, թե ինչ քաղաքականություն պետք է վարել Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Դիվանագիտական դեպարտամենտի ղեկավարը հայտարարեց, որ երեկվա հակառակորդների շահերն այսօր համընկնում են. «Բոլշևիկներին սեփական դիրքերն ամրապնդելու համար խաղաղություն է պետք. մյուս կողմից մեզ չափազանց ձեռնտու է օգտագործել նրանց հավանաբար կարճատև թագավորությունը՝ նախ զինադադարի, իսկ հետո, հնարավորության դեպքում, խաղաղության հասնելու համար: Առանձին խաղաղություն կնքելը կնշանակի պատերազմի ցանկալի նպատակի իրականացում, Ռուսաստանի հարաբերությունների խզում դաշնակիցների հետ»[11]: Առաջ նայելով՝ պետք է ասել, որ այդ նպատակը գերմանական դիվանագիտության կողմից ամբողջությամբ իրագործվել է 1918 թ. մարտին Բրեստի բանակցություններում:

Բոլշևիկյան հեղաշրջման նպատակների, կարգախոսների ու գործողությունների վերաբերյալ գնահատականները շատ տարբեր էին: Ինքը՝ բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինը, հայտարարեց, որ ռուսական հեղափոխությունը ոչ այնքան ազգային, որքան միջազգային երևույթ է: Այն պետք է իմպերիալիստական պատերազմը վերածի քաղաքացիական պատերազմի, այսինքն՝

---

[10] Տե՛ս **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., 2023, ԵՊՀ հրատ., էջ 38, տե՛ս նաև՝ **Ա. Խաչատրյան,** Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), 2010, էջ 68:

[11] **Tauber J.,** German Eastern Policy 1917–1918, Lithuanian Historical Studies, 2008, p. 5, https://brill.com/downloadpdf/view/journals/lhs/13/1/article-p67_6.pdf

վճռական բախման հանգեցնի եվրոպական պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, որը ճանապարհ կբացի ամբողջ աշխարհում սոցիալիստական վերափոխումների համար[12]:

Հոկտեմբերյան հեղաշրջումը Գերմանիայի լիբերալ մամուլն ու հասարակությունը ընկալեցին որպես ուղղակի սպառնալիք արևմտյան քաղաքակրթության արժեքներին: Միևնույն ժամանակ, քաղաքական գործիչներն ու հրապարակախոսները չէին կարող չընդունել, որ Վ. Լենինի մեկնաբանությունը թարմացրեց մարքսիստական գաղափարախոսությունը և փոխարինեց պատմության երկաթյա օրենքների իրականացման պասիվ մոտեցումը հեղափոխական ակտիվիզմով[13]:

1918 թ. սկզբին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը առանձնակի վախ չուներ «բոլշևիզմի համաշխարհայնացումից» և դրա հնարավոր ներթափանցումից Գերմանիա: Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունները դիվանագետները բնորոշեցին որպես տեղային երևույթ, փտած պետական մեքենայի փլուզման հետևանք, որից պետք էր օգուտներ քաղել: Այլ էր գերմանական ռազմական գործիչների մոտեցումը, որոնք պնդում էին վերսկսել ռազմական գործողությունները գերմանական վերջնագրերը չկատարելու դեպքում: Արտաքին գործերի նախարարությունը հանդես էր գալիս Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման օգտին՝ նրան գերմանական ազդեցության գոտի ներքաշելու նպատակով: Դիվանագիտական գերատեսչության այս դիրքորոշումը չնչին փոփոխություններով պահպանվեց մինչև 1918 թ. վերջը[14]:

1918 թ. Բրեստ-Լիտովսկի բանակցություններում Գերմանիայի դիրքորոշումը հստակ էր. նախ՝ ընդլայնվել դեպի արևելք՝ ստեղծելով բուֆերային գոտի իր և Խորհրդային Ռուսաստանի միջև: Քաղաքական առումով Գերմանիայի նպատակն էր ստեղծել խամաճիկային կամ կախյալ պետություններ, որոնք կգործեին որպես հակակշիռ Խորհրդային Ռուսաստանին: Սա նշանակում էր հաստատել գերմանական ազդեցություն տարածաշրջանում: Ռուսաստանին դուրս թողնելով պատերազմից՝ Գերմանան կկարողանար կրճատել Արևելյան ճակատը՝ կենտրոնանալով Արևմտյան ճակատի վրա, ինչը կօգներ բարենպաստ արդյունքի հասնելու Առաջին համաշխարհային պատերազմում[15]:

Չնայած Բրեստի պայմանագրի վերաբերյալ ռուսական պատմագիտության մեջ առկա իրարամերժ մոտեցումներին՝ այն կարելի էր համարել չարյաց

---

[12] Տե՛ս **Альберт Г**. «Мировая революция - прелестная вещь». Интернационализм большевистских активистов первых лет советской власти, М., 2012, էջ 23, https://perspectivia.net/servlets/MCRFileNodeServlet/ploneimport_derivate_00011316/

[13] Տե՛ս **Ватлин А. Ю.**, նշվ. աշխ. էջ 429:

[14] Տե՛ս նույն տեղը:

[15] Տե՛ս Ludendorff-Meine Kriegserinnerungen 1914-1918, https://archive.org/details/meinekriegserinn00lude_0/ page/n13/mode/2up, S. 547:

փոքրագույնը, քանի որ հակառակ դեպքում խորհրդային իշխանությունը կարող էր կործանվել: Մյուս կողմից՝ խորհրդային պատվիրակությունը բանակցություններում հաջողության հասնելու որոշ հնարավորություն ուներ: Բանն այն է, որ Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում պարենային ճգնաժամը սրվել էր, ուստի նրանք կողմ էին Խորհրդային Ռուսաստանի հետ մեղմ պայմաններով խաղաղություն կնքելու: Այդուհանդերձ, վերջնական խոսքը գերմանական ռազմական ղեկավարությանն էր, որը չէր ուզում կորցնել «հաղթանակի պտուղները», այդ թվում՝ Բալթյան երկրների նվաճումն ու վերահսկողությունը Ուկրաինայի նկատմամբ, որի պարենային պաշարները թույլ կտային կայունացնել սոցիալական իրավիճակը ևս մի քանի ամիս, ինչը վճռորոշ ազդեցություն կունենար պատերազմի ելքի վրա:

Ձախ սոցիալիստները այն կարծիքին էին, որ գերմանական պայմանները ընդունելը կարող է խորացնել ճգնաժամը, մինչդեռ Լենինը կողմ էր այդ պայմանները կատարելուն՝ գիտակցելով, որ քայքայված բանակն այլևս ի զորու չէր դիմադրելու գերմանական հարձակմանը:

Արդեն 1917 թվականի դեկտեմբերի 3-ին Բրեստ-Լիտովսկում սկսվեցին բանակցությունները Կենտրոնական տերությունների և բոլշևիկյան Ռուսաստանի միջև, որոնք հանգեցրին դեկտեմբերի 15-ի զինադադարի համաձայնագրին. խաղաղության բանակցությունները մեկնարկեցին դեկտեմբերի 22-ին: Գերմանական պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործերի նախարարության պետքարտուղար Ռիչարդ ֆոն Կյուլմանը, իսկ որպես բանակի բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչ նրան օգնում էր գեներալ-մայոր Մաքս Հոֆմանը: Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Լև Տրոցկու խոսքերով՝ «պատմական հանգամանքները հանգեցրին այն բանին, որ ամենահեղափոխական ռեժիմների պատվիրակները, որ երբևէ ճանաչել է մարդկությունը, ստիպված են եղել նստել նույն սեղանի շուրջը»[16]:

Բոլշևիկները մեծ հաշվով խոսում էին խաղաղությունից միայն հնարավորինս լայն զանգվածների աջակցությունը ստանալու համար, իսկ գերնպատակը հեղափոխությունն արտահանելն էր:

Տրոցկին դեմ էր պատերազմին, բայց և չէր ընդունում Գերմանիայի կողմից պարտադրվող խաղաղությունը, ուստի «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» կարգախոսով հրաժարվեց բանակցություններից: Գերմանիան փետրվարի 13-ին վերսկսեց ռազմական գործողությունները, մինչդեռ բարոյալքված ռուսական բանակն այլևս ի վիճակի չէր դիմադրելու և լիակատար կապիտուլյացիայի ենթարկվեց: 1918 թ. մարտի 3-ի Բրեստի պայմանագրով և ամռանը ստորագրված լրացուցիչ պայմանագրով Ռուսաստանը կորցրեց վերահսկողությունը արևմտյան տարածքների նկատմամբ: Փաստացի, Բրեստ-Լիտովս-

---

[16] **Kosiarski J.,** նշվ. աշխ., էջ 332:

կի պայմանագիրը բոլշևիկյան հեղաշրջմանը Գերմանիայի արձագանքի ամենակարևոր արդյունքներից էր: Գերմանիան տարածքային զգալի ձեռքբերումներ ունեցավ Արևելյան Եվրոպայում: Պայմանագիրը նրան թույլ էր տալիս վերահսկել Ուկրաինայի, Բելառուսի և Բալթյան պետությունների զգալի մասը: Այդպիսով Գերմանիան իշխեց Բալթիկ ծովից մինչև Արևելյան Հայաստան և Կասպից ծովի ափերն ընկած հատվածներում. սա 1918 թ. ընթացքում Գերմանիայի «հաջողության ժամն» էր:

Սա դարձավ Արևելյան ճակատում ռազմական գործողությունների համար արժեքավոր ռեսուրսներ, հատկապես սնունդ և հումք ապահովելու միջոց: Դրա շնորհիվ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան կարողացան կայունացնել պատերազմական դրությունը մինչև աշուն: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումը ոչ միայն վերջ դրեց Ռուսաստանի մասնակցությանը Առաջին համաշխարհային պատերազմին, այլև թույլ տվեց բոլշևիկներին խստացնել երկրում բռնապետությունը: Գերմանացի դիտորդները, այդ թվում՝ Մոսկվա ժամանած դիվանագետներն ու լրագրողները, շեշտում էին «երկաթե ձեռքի» գոյությունը և տեղի ունեցած փոփոխությունների անշրջելիությունը: «Իրենց հուսահատության մեջ բոլշևիկները ընդունակ են ամեն ինչի»[17], - նշում է Կուրտ Ռիզլերը հունիսի 4-ի իր զեկույցում՝ նս մեկ անգամ խորհրդային իշխանության համար կանխատեսելով ընդամենը մի քանի շաբաթվա կյանք:

Թեև Գերմանիայի իշխող շրջանակները ճիշտ էին բնորոշում ռուսական առաջին դեմոկրատիան՝ ընդգծելով դրա կործանարար էությունն ու փխրունությունը, սակայն նրանք հիմնովին սխալվում էին բոլշևիկյան բռնապետության հեռանկարները գնահատելիս: Խոսելով նախ օրերի ու շաբաթների, ապա ամիսների մասին, որոնց ընթացքում Վ. Լենինը կկարողանար մնալ իշխանության ղեկին նրանք չափից շատ թերագնահատեցին մարքսիստական գաղափարախոսությունը, որում ներկայացված էին հեղափոխական բռնապետության առաջին քայլերը[18]: Այն, որ գերմանական անմիջական ազդեցությամբ ձևավորված իշխանությունը ոչ միայն կարճակյաց չէր, այլև ուղղակի սպառնալիք էր իրենց, նրանք սկսեցին գիտակցել շատ ավելի ուշ:

Արդեն 1918-ի նոյեմբերին Բեռլինի հեղափոխականները ակտիվորեն փոխառեցին ռուսական փորձը. հիմք դրեցին նոր քաղաքական ինստիտուտների՝ իրենց կառավարությունն անվանելով Ժողովրդական ներկայացուցիչների խորհուրդ, և ստեղծեցին բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներ ամբողջ երկրում: Բայց և այնպես, սա մի գաղափարաբանություն էր, որի ներսում, ի տարբերություն Ռուսաստանի, այլ՝ լիբերալ-դեմոկրատական բովանդակություն կար[19]:

---

[17] **Kosiarski J.,** նշվ. աշխ., էջ 332:

[18] Տե՛ս **Ватлин А. Ю.,** նշվ. աշխ., էջ 432:

[19] Տե՛ս նույն տեղը:

Բոլշևիկյան հեղաշրջման հարցում Գերմանիայի դիրքորոշումը ձևավորվել էր քաղաքական, ռազմական, տնտեսական և ռազմավարական գործոնների համադրությամբ: Քաղաքական մասնատվածության հասցնելու համար բոլշևիկների դեմ պայքարում նա աջակցում էր Ռուսաստանի տարբեր հակաբոլշևիկյան ուժերի՝ Սպիտակ բանակին, հակակոմունիստական տարբեր խմբավորումների: Հույս ուներ, որ ներքին հակամարտությունից թուլացած Ռուսաստանից սպառնալիքը Արևելյան ճակատում ավելի փոքր կլինի, ինչպես նաև այն կդառնա արժեքավոր ռեսուրսների աղբյուր: Քաղաքական տեսանկյունից Գերմանիան ձգտում էր շահարկել իրավիճակը Ռուսաստանում՝ նպաստելով բոլշևիկների պառակտմանը և կանխելով միասնական և կայուն խորհրդային կառավարության ձևավորումը: Այս նպատակով նաև բոլշևիկյան ռեժիմի մասին հետախուզական տվյալներ էր հավաքագրում՝ լրտեսական գործողություններ կատարելով Խորհրդային Ռուսաստանում: Բնակչությանը կերակրելու և ռազմական ուժերին սպասարկելու համար Գերմանիան օգտվեց Ռուսաստանում տիրող քաոսային իրավիճակից՝ ռեսուրսներ և հումք արդյունահանելով այն տարածքներից, որոնք վերահսկում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Դա թույլ տվեց Գերմանիային համախմբել իր ուժերը Արևելյան ճակատում և ուղղել դրանք Արևմտյան ճակատ: Թեև պայմանագրի էֆեկտը կարճաժամկետ էր, սակայն այն էական դեր խաղաց Կենտրոնական տերությունների վերջնական փլուզման համար:

1918 թ. Գերմանիայի արտաքին քաղաքական գերնպատակը նախկին Ռուսական կայսրության տարածքներում գերմանական տնտեսական ոլորտ ստեղծելն էր: Արտաքին գործերի գերատեսչությունը մշակեց մի շարք ռազմավարություններ: Գերմանական «հաջողության ժամը» շատ ավելին էր ենթադրում, քան սոսկ Միջին Եվրոպան. աշխարհագրորեն այն ձգվում էր է՛լ ավելի արևելք և հարավ: Ըստ արտաքին գործերի գերատեսչության՝ տնտեսական պայմանավորվածությունները պետք է իրականացվեին տեղական ազգայնական վերնախավերի հետ դաշինքների միջոցով:

Հարկ է ընդգծել, որ անտեսելով իր մոտալուտ պարտությունը՝ գերմանական ղեկավարությունը իր պատերազմական նպատակների առումով ավելի շուտ պատրաստ էր զիջումների արևմուտքում, բայց ոչ արևելքում՝ կոմունիզմի գործոնով պայմանավորված. «Մեր արևելյան քաղաքականության նպատակն այն չէ, որ ծայրամասային պետությունների իրավունքները չարաշահվեն, այլ այն, որ ապահովվեն նրանց ինքնակառավարումն ու ազատությունը»[20]: Այսինքն՝ գերմանական իրականության մեջ ընկալելի էր կոմունիստական կարգերի արտահանման սպառնալիքը, ուստի Գերմանիան հանդես էր գալիս դոմինոյի էֆեկտով կոմունիստական կարգերի հնարավոր տարածման դեմ:

---

[20] **Jennifer L. Jenkins,** The German Moment, University of Toronto, in 1918, էջ 54: https://perspectivia.net/servlets/MCRFileNodeServlet/pnet_derivate_00002088/51_Jenkins.pdf

Գերմանիայի տարածաշրջանային քաղաքականությունը դիտարկելիս ակներև է դառնում, որ գերմանական ռազմավարությունը ուղղակիորեն ածանցված էր նրա ռազմաքաղաքական և հատկապես տնտեսական շահերին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիան և Օսմանյան կայսրությունը նպատակ ունեին թուլացնել Ռուսաստանը, ինչը ենթադրում էր Ռուսաստանի սահմանային շրջաններում անկարգությունների և ազգային շարժումների խրախուսումը: Հետևաբար՝ Գերմանիան պաշտպանում էր Անդրկովկասի երկրների անկախության գաղափարը, որոնք այն ժամանակ Ռուսաստանի կազմում էին: Իհարկե, այն միտված էր ծառայելու առաջին հերթին տարածաշրջանում Ռուսաստանի հետ բուֆերային գոտի ստեղծելու նպատակին: Այս առումով Գերմանիայի հիմնական թիրախը Անդրկովկասում Վրաստանն էր:

Վերջինս ուներ գերմանական կողմնորոշում, իսկ փոխադարձ համակրանքը նկատելի էր դեռ Աշխարհամարտի սկզբնական փուլում: Այս է վկայում նաև Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի՝ 1918 թ. օգոստոսի 27-ին հայ պատվիրակների հետ զրույցի հետևյալ հատվածը. «Վրացիներու և գերմաններու միջեւ դեռ 3-4 տարի առաջ դաշնադրութիւն եղեր է համաձայնութեան մասին, և Գերմանիան պարտաւորուել է ընդունել Վրաստանի անկախութիւնը»[21]: Փաստորեն, դեռ 1914 թ. մարտին ձեռք էր բերվել վրաց-գերմանական պայմանավորվածություն, որով Գերմանիան պարտավորվել էր ճանաչել Վրաստանի անկախությունը: Գերմանական կողմից աջակցության խոստումներ էին տրվում նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդներին, սակայն մասնավորապես Արևելյան Հայաստանը տնտեսական տեսանկյունից նրան հետաքրքիր չէր:

Առաջին համաշխարհային պատերազմից և ռուսական հեղափոխությունից հետո ծավալված իրադարձությունների համապատկերում Գերմանիան աջակցեց Վրաստանի տարբեր նախաձեռնությունների: Նա ռազմական աջակցություն տրամադրեց Վրաստանի կառավարությանը՝ իր անկախությունը հռչակելու և պաշտպանելու նպատակով: Բացի այդ, ուսուցանում էր վրաց զինվորականներին, ապահովում սարքավորումներով ու սպառազինությամբ:

Գերմանիան հետաքրքրված էր Վրաստանի տնտեսական ռեսուրսներով՝ գյուղատնտեսական և հանքային հարստությամբ, մասնավորապես Ճիաթուրիի մանգանով, որը խիստ անհրաժեշտ էր Գերմանիայի մետաղաձուլարաններում[22]: Գերմանական ընկերությունները ձգտում էին ներդրումներ կատարել Վրաստանի գյուղատնտեսության ոլորտում և շահագործել նրա բնական պաշարները: Կարևոր էր նաև տարածաշրջանային հաղորդակցությունների

---

[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8. թ. 122, նաև **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 182:

[22] Տե՛ս **Գ. Պետրոսյան,** Անդրկովկասը դիվանագիտության հորձանուտում..., էջ 128:

հարցը. գերմանացիները ներգրավված էին անդրկովկասյան երկաթուղային ցանցի զարգացման աշխատանքներում: Նրանք ցանկանում էին բարելավել տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցվածքները՝ հեշտացնելու զորքերի և ռեսուրսների տեղաշարժը:

Քաղաքական ներգրավվածության տեսակետից գերմանացի դիվանագետներն ու պաշտոնյաները համագործակցում էին վրացի առաջնորդների հետ՝ խթանելու դիվանագիտական և քաղաքական հարաբերությունները: Նրանք Վրաստանը համարում էին պոտենցիալ դաշնակից և տարածաշրջանում ռուսական ազդեցության հիմնական հակակշիռ[23]: Այս համատեքստում գերմանական աջակցությունը նպատակ ուներ կանխել բոլշևիկյան ազդեցության տարածումը տարածաշրջանում, ինչը Գերմանիայի արևելյան քաղաքականության մի մասն էր միայն:

Ամփոփելով արձանագրենք, որ բոլշևիկյան հեղաշրջման վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշումը պայմանավորված էր բազմաթիվ գործոններով՝ գաղափարական հակադրությունից մինչև հեղաշրջման հնարավոր արտահանման վտանգը: Հեղաշրջումը գերմանական քաղաքական վերնախավի և հասարակության շրջանում արժանացավ տարբեր արձագանքների՝ արմատական աջակցությունից մինչև հեղափոխական արժեքների դատապարտում: Այս հակադիր մոտեցումները զգալիորեն ազդեցին Գերմանիայի ներքին քաղաքականության և արտաքին քաղաքական որոշումների վրա՝ թողնելով երկարատև ազդեցություն կոմունիզմի, սոցիալիզմի և աշխարհաքաղաքական ավելի լայն իրողությունների ընկալումների վրա:

**НУШИК ПЕТРОСЯН –** ***Позиция Германии по большевистской революции (октябрь 1917 г. - март 1918 г.).*** – В статье освещаются факторы, определяющие позицию Германии по отношению к большевистскому правительству, сложная геополитическая ситуация в Закавказье в критический период с октября 1917 по март 1918 года, а также нюансы транзакционной политики Германии с точки зрения ее приоритетных интересов в регионе.

Приход к власти большевистского правительства, крах старого имперского порядка и появление независимых государств существенно изменили политическую картину региона, оказав влияние также на внутриполитическую жизнь Германии и внешнеполитические решения.

В статье освещаются экономические интересы Германии, стратегические подходы и дипломатические отношения, а также позиции отдельных политических кругов по отношению к большевистскому перевороту. Прослеживается, как с течением времени менялось восприятие Германией большевистского правительства и как это повлияло на ее политику в регионе.

**Ключевые слова**: *Большевистский переворот, «Четверной союз», Центральные державы, Брест-Литовский договор, Закавказье, Германия, Первая мировая война*

---

[23] Տե՛ս **Kressenstein F. K.,** Meine Mission im Kaukasus, Tbilissi, 2001, S. 101:

**NUSHIK PETROSYAN – *Germany's Position on the Bolshevik Revolution (October 1917 - March 1918).*** – The article highlights the factors determining Germany's position on the Bolshevik coup, the complex geopolitical situation in Transcaucasia during the crucial period from October 1917 to March 1918, as well as the nuances of Germany's Transcaucasian policy in terms of its priority interests in the region.

The rise of the Bolshevik government, the collapse of the old imperial order and the emergence of independent states significantly changed the political picture of the region, having an impact on Germany's domestic political life and foreign policy decisions as well.

The article highlights Germany's economic interests, strategic approaches and diplomatic relations, as well as the positions of individual political circles towards the Bolshevik coup. It traces how Germany's perception of the Bolshevik government evolved over time and how this influenced its policies in the region.

**Key words**: *Bolshevik coup, Quadruple Alliance, Central Powers, Treaty of Brest-Litovsk, Transcaucasia, Germany, World War I*

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), ապրիլ, 83-92
https://doi.org/10.46991/BYSU:D/2024.15.1.083

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԱՐ ԱԶԴԱԿԸ. ԲԱՐԵԿԻՐԹ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ *
*Երևանի պետական համալսարան*

Առաջատար կազմակերպություններում թիմերի ղեկավարները սկսում են իրենց հմտությունները վերակառուցել բարեկրթության մեթոդաբանությամբ, ինչը աննախադեպ առաջընթաց կարող է ապահովել ցանկացած կազմակերպության համար: Եթե ղեկավարը կարևորում է լսելիությունը, ճանաչելիությունը, հաղորդակցությունը, արժևորում է տաղանդը, ապա գործ ունենք բարեկիրթ առաջնորդության (Kind Leadership) հետ: Այս նոր մոտեցումը զարգացնում է մարդկանց մասնագիտական հմտությունները՝ օգնելով նրանց օգտագործելու սեփական ներուժը՝ ստեղծելով համապատասխան տարածք և հնարավորություն:
Կորպորատիվ միջավայրում այն թույլ է տալիս ստեղծել դրական և խթանող մթնոլորտ, որտեղ աշխատակիցներն իրենց գնահատված և կարևորված են զգում: Բարեկիրթ առաջնորդ ունեցող աշխատողներն ավելի ինքնավստահ են, քանի որ կարծում են, որ կարող են արտահայտել իրենց մտքերն ու մտահոգությունները առանց մտավախության, որ կպախարակվեն դրա համար: Բարեվարքության շնորհիվ մեծանում են հաղորդակցությունն ու համագործակցությունը. բարեվարք առաջնորդը ուշադիր լսում և հարգում է ուրիշների գաղափարները:
Առաջնորդության այս մեթոդը ներառում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են լավ կրթությունը, քաղաքավարությունը, կառավարչական հմտությունները, բարեվարքությունը և այլն: Կարևոր է նշել նաև, որ կազմակերպությունների կառավարման մեջ բարեկրթությունը համարժեք չէ տկարությանը, թուլությանը, կրավորականությանը, ավելին՝ նրա ուժը իշխանությունը և կարեկցանքը հավասարակշռելն է՝ ըմբռնումով հարթելով կոնֆլիկտները:

**Բանալի բառեր** – *բարեկիրթ առաջնորդություն, արդյունավետություն, կառավարման նոր մեթոդներ, արդյունարար ազդակ, բարեվարքություն, թիմային աշխատանք, առաջնորդություն, ազդեցություն, կառավարում, դրական միջավայր, մասնագիտական հմտություններ*

---

* **Էդգար Քալանթարյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի դոցենտ
**Эдгар Калантарян** – кандидат политических наук, доцент кафедры государственного управления, ЕГУ
**Edgar Kalantaryan** – PhD in Political Sciences, Associate Professor at YSU Chair of Public Administration.
Էլ. փոստ՝ edgar.kalantaryan@ysu.am, ORCID: https://orcid.org/0009-0008-4664-3518

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.02.2024
Գրախոսվել է՝ 15.04.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

Զարգացած երկրներում սկսվել է նոր գործընթաց՝ ուղղված հանրային կազմակերպությունների «լավ կառավարման» համակարգի, բարեկիրթ առաջնորդություն ներդնելուն, արդյունարար կառավարչական մեթոդաբանությունը բարելավելուն և զարգացնելուն: Այդ երկրները ձգտում են ապահովել առաջնային դիրքեր՝ ներդնելով կազմակերպությունների կառավարման նոր ձևեր: Կազմակերպությունները ստեղծվում են մարդկանց տարբեր պահանջները բավարարելու համար և հետևաբար ունեն տարբեր նպատակներ, չափեր, կառուցվածք և այլ առանձնահատկություններ: Վերջիններիս խնդիրների և նպատակների բազմազանությունը հանգեցնում է այն բանին, որ դրանց կառավարման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ և հմտություններ, մեթոդներ և եղանակներ, որոնք կկարողանան ապահովել աշխատողների համատեղ գործունեությունը[1]:

Աշխատանքի շուկան այսօր բնութագրվում է որպես հանկարծակի փոփոխություններով լի մի միջավայր, որտեղ կազմակերպությունները պետք է կարողանան հետևել շուկայի օրեցօր ավելացող դժվարին պահանջներին՝ իրենց ներսում կառավարչական նորարարություններ ներմուծելով: Նրանք պետք է հետևեն բիզնես գործընթացներում և արտադրական մոդելներում առկա առաջարկներին՝ պահանջարկ վայելող արտադրանք ստեղծելով: Մշտապես զարգացող աշխատաշուկայում ավանդական մեթոդներն այլևս բավարար չեն թեկնածուի իրական հնարավորությունները սահմանելու համար, այստեղ առաջնային է դառնում գնահատումը[2]: Բայց ի՞նչ է դա և ինչպե՞ս է տեղի ունենում: Հասարակության պահանջմունքների, սպասումների, շահերի նորացման արդյունքում փոփոխվում են նաև կազմակերպությունների կառուցվածքային տարրերը, մեթոդները, կառավարչական ձևերը, տեսակները: Ներկայումս կազմակերպություններն ունեն շատ ավելի բարդ կառուցվածք, քան մի քանի տասնամյակ առաջ: Դա է պատճառը, որ կազմակերպությունների զարգացմանը զուգընթաց կարևորվեց կառավարման ձևերի, մեթոդների գնահատումը, ինչը նպաստում է աշխատակիցների և ղեկավարների մոտիվացիայի բարձրացմանը, հետևաբար նաև արտադրանքի որակի և արդյունավետ գործունեության ապահովմանը: Նշված հիմնախնդիրների գիտակցմամբ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու գիտահետազոտական կենտրոններ, որոնցում կատարված ուսումնասիրությունները կարևոր դեր ունեցան այս ոլորտում[3]:

---

[1] Տե՛ս **Է. Ա. Քալանթարյան**, Հանրային կազմակերպությունների տեսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 6:

[2] Տե՛ս Ինչպես արժևորել տաղանդներին կազմակերպությունում, https://www.adecco.it/servizi-per-le-aziende/contenuti-utili/come-valorizzare-i-talenti?id=alternativeColloquioOnboarding:

[3] Տե՛ս **Է. Ա. Քալանթարյան**, Կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածք և արդյունավետություն, Գիտական Արցախ, № 2 (3), Եր., 2019, էջ 141-142:

Հատկապես 20-րդ դ. առաջացան ու բուռն զարգացում ապրեցին բազմազան կազմակերպություններ, որոնք ներկայումս էլ շրջապատում են ժամանակակից մարդուն իր ամբողջ կենսագործունեության ընթացքում: Հասարակության անդամների պահանջմունքներն ու շահերը փոխվում են, փոխվում են նաև հանրային կազմակերպությունների կառավարման խնդիրները. եթե նախկինում դրանք պարզ էին և հստակ, ապա այսօր արդեն ամբողջ աշխարհում նոր արժեհամակարգերի հարահոսի պայմաններում հասարակության առջև ծառանում են նորանոր հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծումներ են պահանջում: Ակնհայտ է, որ արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ժամանակին համահունչ վերաձևակերպել հանրային կազմակերպությունների կառավարման և առաջնորդության խնդիրները՝ տալով դրանց համապատասխան լուծումներ[4]:

Այս համատեքստում առաջնային է դառնում արդյունավետ առաջնորդության գործոնը, որը կազմակերպությունների կառավարման կարևորագույն սկզբունքներից է: Առաջնորդությունը հասարակության, կազմակերպության կամ սոցիալական խմբի վրա որևէ անձի կամ խմբի մշտական ազդեցությունն է: Այն ինչպես անհատի, այնպես էլ խմբի վրա ազդելու ընդունակություն է: Երբ ինչ-որ եղանակով որևէ սոցիալական խումբ է ստեղծվում, նրանում անմիջապես սկսվում են գործընթացներ, որոնք հանգեցնում են առաջնորդի, ղեկավար անձի առաջադրման: Այն իշխանություն է, որն ուժի կիրառման կարիք չունի, թեպետ օժտված է այդ ուժով: Գոյություն ունեն առաջնորդության բազմաթիվ սահմանումներ, որոնք թեև ունեն որոշ ընդհանրություններ, սակայն խնդրին մոտենում են տարբեր տեսանկյուններից: Ոմանք այն դիտում են որպես խմբային գործընթացի բաղկացուցիչ մաս[5], մյուսները կարևորում են դրա ազդեցության ուժը[6], ուրիշները՝ որպես նպատակին հասնելու միջոց[7] և այլն: Առաջնորդությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ պետք է աշխատել խմբում. առաջնորդը նա է, ով ստեղծում է հարմարավետություն և առաջնորդում թիմին դեպի ընդհանուր նպատակ: 1993 թվականին սոցիոլոգ Ջոզեֆ Ռոստի կողմից հետազոտված 587 հրապարակումներում գտնվել էր առաջնորդության 221 սահմանումներ՝ մեկը մյուսից տարբեր[8]:

Հետևաբար, դա բնավորության գիծ է, որը լավագույնս պետք է նպաստի երկու հիմնական նպատակների իրականացմանը՝

---

[4] Տե՛ս **Է. Ա. Քալանթարյան,** նշվ. աշխ., գլուխ 1, էջ 9-18:

[5] Տե՛ս **Krech D. and Crutchfield R.,** Theory and Problems of Social Psychology*,* 1[th] ed., New York, McGraw-Hill Book Co., 1948, էջ 48-51:

[6] Տե՛ս **Bass B.,** Leadership, psychology, and organizational behavior*,* New York, 1960; **Cartwright D.**, Influence, Leadership, Control*,* New York, 1965; **Katz D. and Kahn R.** The social psychology of organizations. Wiley, New York, 1966:

[7] Տե՛ս **Linton C**., The Sociological Concept of "Group": An Empirical Test of Two Models*,* American Journal of Sociology, Vol. 98, No. 1 (Jul., 1992), էջ 152-166:

[8] Տե՛ս **Joseph R.**, Leadership for the Twenty-First Century*,* Preager Press, Berlin, 1993:

1. բարելավել աշխատողների կատարողականը,
2. պահպանել աշխատակիցների բավարարվածության բարձր մակարդակը:

Դասական մոտեցման համաձայն՝ առաջնորդությունը պարզապես սահմանվում էր որպես գործատուի կամ ղեկավարի կառավարման կարողություն: Այսօր, սակայն, մենք հակված ենք առաջնորդներ համարելու բոլոր նրանց, ովքեր, չնայած բարձր պաշտոններ զբաղեցնելուն, տիրապետում են որոշակի ընդունակությունների՝ կարեկցանք, երախտագիտություն, լսելու ունակություն և այլն:

Կարճ ասած՝ մենք կարող ենք համաձայնել այն փաստին, որ այսօր ղեկավարությունը կարող է աշխատողներին մղել փոխհամագործակցության նախաձեռնությունների և նորարարությունների միջոցով, ինչը կբարձրացնի ընկերության արդյունավետ կառավարումը՝ աշխատավայրում պահպանելով բարեվարքության բարձր աստիճան: Այլ կերպ ասած՝ առաջնորդը պետք է կարողանա և՛ առաջնորդել, և՛ խթանել այն մոտեցումը, որը առաջին տեղում է դնում անհատին. այն ուղղված է արժեք ստեղծելուն, որը համահունչ է ընկերության մշակույթին և տեսլականին:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն առաջնորդության տարբեր մոդելներ, որոնք անընդհատ զարգանում են, փոխվում են ժամանակի ընթացքում, և չկա որևէ մոդել, որն ավելի արդյունավետ լինի, քան մյուսը:

Անդրադառնանք այդ մոդելներից մի քանիսին.

1. Տրանսֆորմացիոն առաջնորդություն - այստեղ առաջնորդները խստիվ կողմնորոշված են դեպի փոփոխությունները: Նրանք նպատակ ունեն մղելու աշխատուժին նորարարությունների և վարժանքների: Սրանք անհատականություններ են, ովքեր մեծ նշանակություն են տալիս երկխոսությանը, ազնվությանը և լայնորեն օգտագործում են այն տեխնոլոգիան, որով անձնակազմին դրդում են հասնելու նպատակներին:
2. Գործարքային առաջնորդություն - պարզների վրա հիմնված առաջնորդության ռեժիմ է, նպատակը որոշակի հաջողություն գրանցած աշխատողին պարգևատրելն է: Այս տեսակը ստվերում է հարաբերություններ կառուցելու, հաղորդակցվելու կամ մոտիվացնելու կարևորությունը:
3. Ծառայող առաջնորդություն – այստեղ առաջնորդն իրեն լիովին հասանելի է դարձնում աշխատողներին: Նա խաղում է ուղեցույցի և դաստիարակի դեր, կազմակերպում է կանոնավոր հանդիպումներ, ապահովում հետադարձ կապ և անում է ամեն ինչ բարոյականությունը բարձր պահելու համար՝ հավատալով, որ այն ընկերության հաջողության իրական որոշիչն է:
4. Ինքնավար առաջնորդություն - սա առաջնորդության ամենադասական տեսլականներից է, որտեղ գործատուն կամ ղեկավարը յուրաքանչյուր որոշում կայացնում է ինքնուրույն, չի խորհրդակցում, այլ պարզապես ուրվագծում է ուղղությունը և պահանջում, որ մյուսները հետևեն դրան: Ակնհայտ է, որ աշխատուժի կառավարման այս տեսակը հաճախ էական խնդիրներ է ստեղծում:
5. Ժողովրդավարական առաջնորդություն – այս մոդելը նախորդի ճիշտ

հակառակն է: Այս դեպքում ղեկավարը փորձում է հնարավորինս ներգրավել աշխատողներին, զրուցել նրանց հետ՝ միաժամանակ նրանց վերապահելով վերջնական որոշում կայացնելու իրավունքը: Նպատակը աշխատանքային թիմերին մղելն է ինքնուրույն լուծումներ գտնելու և նրանց բոլոր հմտություններն ու ստեղծագործական ունակություններն օգտագործելու:

6. Լիբերալ առաջնորդություն (Laissez-Faire Leadership) – այս ձևը նույնպես թույլատրելի տեսակ է, որի դեպքում ղեկավարը գրեթե բացակայում է, նա պարզապես ընդհանուր ցուցումներ է տալիս, որից հետո աշխատողների գործն է համոզվել, որ ամեն ինչ հարթ է ընթանում: Սա մի մոտեցում է, որը հաճախ ստեղծում է շփոթություն, սխալներ և տարաձայնություններ աշխատողների միջև[9]:

7. Բյուրոկրատ առաջնորդություն - կանոններն ու կանոնակարգերը այս տեսակի ղեկավարության հիմնական բնութագրերն են, որոնք հիմնված են հստակ արձանագրությունների վրա:

8. Խարիզմատիկ առաջնորդ – այստեղ առաջնորդը դիտվում է ինչպես մի իսկական երազող. նա ուժեղ անհատականություն է, ունի բարձր մոտիվացիա և ամեն ինչի մասին հոգալու կարողություն:

9. Առաջապահ առաջնորդություն (avanguardist) – այս ձևի շրջանակներում առաջնորդը պայծառ կերպար է, ունի բարձր մոտիվացիա: Նա մշտապես մղում է աշխատակիցներին չբավարարվելու ու ավելին անելու:

10. Էթիկական առաջնորդություն – այստեղ առաջնորդն առանձնանում է բոլոր աշխատողների իրավունքների նկատմամբ մեծ հարգանքով: Հավատարմությունը, հավասար հնարավորությունները, թափանցիկությունը և արժանիքները այստեղ առաջին տեղում են: Սա լավ առաջնորդության մոդել է, որն ընդհանուր առմամբ լավ է ընդունվում աշխատողների կողմից:

11. Ընկերության մասնակցային (affiliativ) առաջնորդություն - այստեղ առաջնորդի հիմնական հատկանիշը պատրաստակամությունն է մարդկանց առաջին տեղում դնելու: Հետևաբար, այն ունի համագործակցային մոտեցում՝ հիմնված երկխոսության և ողջ աշխատուժի ուժեղ կողմերի գնահատման վրա:

12. Առաջնորդություն և մարզում – այստեղ առաջնորդը ոչ միայն մենեջերի և ուղեցույցի դեր է խաղում, այլև հանդես է գալիս որպես մարզիչ. նա շատ է կենտրոնանում հոգեբանական ասպեկտների վրա՝ անընդհատ փորձելով հնարավորինս լավ մոտիվացնել աշխատողներին[10]:

Վերը նշվածից կարելի է ենթադրել, որ առաջնորդության այս տարբեր մոդելները հիմքում ունեն տարաբնույթ վերջնարդյունքներ՝ արդյունավետության ցուցիչի սահմանում և կիրառում: Արդյունավետ առաջնորդությունը և թիմային ներգրավվածությունը, թիմին առաջնորդելու և դրդելու կարողությունը

---

[9] Տե՛ս **Է. Ա. Քալանթարյան**, նշվ. աշխ., գլուխ 3, էջ 34:

[10] Տե՛ս Առաջնորդության մոդելների վերաբերյալ վերլուծությունը, https://factorial.it/blog/leadership-gentile/

վստահություն և պատկանելության զգացում են ապահովում: Սա, անկասկած, արժեքավոր առաջնորդ լինելու հիմնական բանալիներից է: Մշտապես ճիշտ մոտիվացիա ապահովելը, որը խրախուսում է գործընկերներին դրսևորվելու լավագույնս, ոչ միայն կբարելավի կատարողականը, այլև առաջին հերթին նրանց կօգնի զգալու իրենց թիմի անդամ, որտեղ ունեն դաշնակիցներ: Պատճառաբանված ներգրավվածությունը թիմին կդարձնի ավելի արդյունավետ՝ մղելով քրտնաջան աշխատանքի՝ առաջադրված բոլոր նպատակներին հասնելու համար: Լավ առաջնորդը կարող է մեծացնել իր թիմի ներգրավվածությունը մինչև 70%-ով: Սա շեշտվեց նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ[11]:

Այսօր փոխվել են նաև թիմերի ղեկավարների պարտականությունները: Հաշվի առնելով հեռավար աշխատանքի մուտքը կազմակերպությունների կառավարման համակարգ՝ առաջնորդը ստիպված է վերահսկել գործունեությունը նաև հեռակա և թվային աջակցության գործիքներով: Այսօրվա ղեկավարներն իրականում պետք է լինեն պատրաստված և ճկուն առաջնորդներ, ովքեր գիտեն, թե ինչպես օգտագործել իրենց կառավարման հմտությունները նոր ձևերով: Այդ իսկ պատճառով արդյունավետ առաջնորդության հմտությունների ամրապնդումը նպատակային միջոցներ պահանջող ուղի է[12]: Առաջնորդի խնդիրը իր թիմին առաջնորդելն է՝ յուրաքանչյուրի կարողությունների առավելագույնս կանոնակարգմամբ և համակարգմամբ: Այստեղ կարևորվում են նրա անհատականության գծերն ու փորձառությունը, պատասխանատվությունը, որոնք հիմքեր կարող են ստեղծել առաջնորդության համար:

Շարժվելով դեպի ապագա՝ հասարակության մեջ փոխվում են նաև աշխատանքի մեթոդները և դրանց հետ մեկտեղ՝ արդյունավետ առաջնորդության բնութագրերը: Առաջատար կազմակերպություններում թիմերի ղեկավարները սկսում են իրենց հմտությունները վերակառուցել բարեկրթության մեթոդաբանությամբ, որը աննախադեպ առաջընթաց կարող է ապահովել ցանկացած կազմակերպության համար: Իհարկե, առաջնորդության ավանդական ձևերը կշարունակեն գործել, դրանք երբեք չեն էլ կարող լիովին անհետանալ, այնուամենայնիվ նոր զարգացած կազմակերպությունները հակված են արդյունավետ առաջնորդության առավել բարեկիրթ կառուցակարգեր կիրառելու ընկալմանը:

Եթե ղեկավարը կարևորում է լսելիությունը, ճանաչելիությունը, հաղորդակցությունը և տաղանդի արժևորումը, ապա մենք գործ ունենք բարեկիրթ առաջնորդության (Kind Leadership) հետ: Այս մոտեցումը զարգացնում է մարդկանց մասնագիտական հմտությունները՝ օգնելով նրանց օգտագործելու սեփական ներուժը՝ ստեղծելով համապատասխան տարածք և հնարավորություն: «Ժեստ,

---

[11] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորումի 2023 թ. զեկույցը, https://www.weforum.org/events/world-economic-forum-annual-meeting-2023/

[12] Տե՛ս Արդյունավետ առաջնորդությունը՝ կազմակերպությունների կառավարման հաջողության գրավական, https://mercuri.it/insights/leadership-efficace/

որը ինչ-որ բան փոխում է քո ներսում». այդ ժեստը բարի է, հասանելի նրանց, ովքեր որոշել են դրականորեն ազդել՝ դիմացինի բարեկեցությունը առաջադասելով: Սա առաջնորդության նոր տեսակ է՝ «ստիպել մարդկանց ցանկանալ անել», այլ ոչ թե պարզապես «անել»: Առաջնորդության այս մեթոդը ներառում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են լավ կրթությունը, քաղաքավարությունը, կառավարչական հմտությունները, բարեվարքությունը և այլն: Բարեկրթությունը կարող է դառնալ ամենահզոր գործիքը՝ մեղմելու այն հավանական խնդիրները կազմակերպության ներսում, որոնք լուծելը երբեմն թվում է անհնար: Այս նոր առաջնորդության գրավականն է ստեղծել «միջավայր, որին մարդիկ ցանկանում են պատկանել»[13]: Թեպետ առաջնորդության այս մեթոդը վերջին տարիներին է առավելապես կիրառվում, դրա մասին խոսվել է անհիշելի ժամանակներից: Այսպես՝ Կոնֆուցիուսը պնդում էր, որ նրանք, ովքեր իշխանություն են իրականացնում, պետք է օրինակ ծառայեն[14]:

Բարեկիրթ առաջնորդները աշխատում են ամուր հարաբերություններ հաստատել իրենց թիմի անդամների հետ և ոգեշնչել նրանց ճանաչման ու դրական խրախուսման միջոցով: Նրանք գնահատում են բաց հաղորդակցությունը, համագործակցությունը և ներառականությունը: Առաջնորդության այս տեսակը մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդ է, որն ավելի ու ավելի է ընդունվում առաջատար հասարակություններում: Մեր իրականության մեջ այս մեթոդի կիրառումը կարելի է համարել նախնական՝ չնայած որոշ կազմակերպություններում դրա առաջնային լինելուն: Սա մի հայեցակարգ է, որն առաջին անգամ վերլուծել է գրող Ջեյմս Հանթերը իր հայտնի «Ծառայող առաջնորդը (The Servant Leader)» գրքում: Համաձայն այս մոտեցման՝ նրանք, ովքեր ձգտում են լինել իսկական առաջնորդ, պետք է «իրենց դնեն իրենց ղեկավարած անձնակազմի տեղը»: Այլ կերպ ասած՝ սա սպասարկող առաջնորդության էվոլյուցիա է, որի նպատակը այն է, որ առաջնորդը հանդես գա որպես կարևոր մի կերպար, ով պատրաստ է այնպես աջակցել աշխատակիցներին, որպեսզի նրանք իրենց լավագույն կարողությունները ներդնեն կազմակերպության համար[15]: Առաջնորդության այս ոճը ղեկավար սուբյեկտների համար հիմնարար հմտություն է կյանքում և աշխատանքի մեջ: Այն նպաստում է փոխըմբռնմանը, կարեկցանքին, ինչն էլ ենթադրում է աշխատանքային խումբը ղեկավարել բարությամբ, հասկացողությամբ և հարգանքով[16]:

Կորպորատիվ միջավայրում այն թույլ է տալիս ստեղծել դրական և խթանող մթնոլորտ, որտեղ աշխատակիցներն իրենց գնահատված և կարևորված են

---

[13] Տե՛ս Բարեկիրթ առաջնորդության վերաբերյալ վերլուծություն. մարտահրավերներ, արդյունավետություն, https://www.manageritalia.it/it/management/leadership-gentile

[14] Տե՛ս **Schuman M.,** Confucius: And the World He Created, Basic Books, USA, 2015, էջ 98-102:

[15] Տե՛ս **Hunter C. J.,** The servant: a simple story about the true essence of leadership hardcover, USA, 1998, էջ 88-95:

[16] Տե՛ս Կազմակերպություններում կիրառվող ղեկավարների բարեկիրթ առաջնորդության դրսևորումներ, https://www.serviziproimpresa.it/wp-content/uploads/2022/04/La-leadership-GentileMP.pdf

զգում: Բարեկիրթ առաջնորդ ունեցող աշխատողներն ավելի ինքնավստահ են, քանի որ կարծում են, որ կարող են արտահայտել իրենց մտքերն ու մտահոգությունները առանց պախարակվելու: Բարեվարքության շնորհիվ մեծանում են հաղորդակցությունն ու համագործակցությունը. բարի առաջնորդը ուշադիր լսում և հարգում է ուրիշների գաղափարները: Այսպիսի առաջնորդության մեջ բարությունը օգնում է բացահայտելու և զարգացնելու տաղանդը կազմակերպության ներսում. Ճանաչելով և գնահատելով թիմի անդամների ուժեղ կողմերն ու ներուժը՝ այսպիսի ոճ կիրառող առաջնորդները աջակցում են խմբի անհատական աճին և մասնագիտական զարգացմանը[17]:

Այն ղեկավարները, որոնք կարևորում են բարեկիրթ առաջնորդության ոճերը կազմակերպության արդյունավետ կառավարման համար, պետք է օժտված լինեն հետևյալ հատկանիշներով.

1. դիմացինին լսելու ունակություն. սա ենթադրում է մյուսներին առավելագույն ուշադրություն դարձնելը, զրույցի ընթացքում աչքի կոնտակտ պահպանելը և զրուցակցի խոսքերին անկեղծորեն պատասխանելը՝ կարեկցանքի և ըմբռնման դրսևորմամբ,
2. նպաստել դրական միջավայրի ստեղծմանը. ձևավորել ընկերային միություն, որը կմեծացնի վստահությունը, հարգանքը և համագործակցությունը՝ ընդգծելով արժեքների տարբերությունները,
3. օրինակ ծառայել. բարության, խոնարհության և ազնվության դրսևորումն իր գործողություններում և որոշումներում առաջնորդի համար առաջին քայլն է, սակայն դրան պետք է հետևեն նաև աշխատանքային խմբի հանդեպ երախտագիտության դրսևորումները,
4. խթանել բաց հաղորդակցությունը. երկխոսության խրախուսում, հետադարձ կապի և առաջարկների հնարավորություն, ինչի շնորհիվ աշխատողները արտահայտվում են հանգիստ և ազատ,
5. պատվիրակել պատասխանատվությունը. աշխատողների պարտականությունների պատվիրակում և ինքնավարության խրախուսում (անհրաժեշտության դեպքում՝ առաջնորդի աջակցությամբ և ղեկավարությամբ): Ինչո՞ւ է անհրաժեշտ կազմակերպությունների կառավարման համակարգում օգտագործել առաջնորդության այս մոդելը: Կիրառումը ունի բազում դրական կողմեր, որոնք կբարելավեն միջանձնային հարաբերությունները աշխատողների միջև՝ դրական ազդելով արտադրողականության և արդյունավետության վրա:

Բարեկիրթ առաջնորդության կիրառումը կազմակերպություններում հանգում է հետևյալ առավելություններին.

1. աշխատավայրում բարոյահոգեբանական մթնոլորտի աճ, անձնակազմի՝ իր աշխատանքից բավարարվածության զգացում, որը ուղիղ համեմատական է շրջանառության (երբ խոսքը վերաբերում է արտադրությամբ զբաղվող

[17] Տե՛ս Մասնավոր կազմակերպություններում կիրառվող բարեկիրթ առաջնորդության ոճերը, բնութագրիչները և արդյունավետությունը, https://www.adecco.it/servizi-per-le-aziende/leadership-gentile##

կազմակերպություններին) և հավատարմության աճին,

2. կազմակերպությունում համերաշխ մթնոլորտի ստեղծում. աշխատողներն իրենց պաշտպանված և պարտավորված են զգում, նրանք գիտակցում են ղեկավարի դրական վերաբերմունքը իրենց բարեկեցության խնդրին, և միմյանց հանդեպ դրսևորում են նմանատիպ վարք: Սա նվազեցնում և կանխում է աշխատողների միջև կոնֆլիկտներն ու լարվածությունը,

3. ստեղծարար մտքի խթանում. այստեղ խրախուսվում է նախաձեռնողականությունը, աշխատող տաղանդները իրենց լավագույն կարողությունները ներդնում են կազմակերպության համար: Նրանք առաջարկում են նորարարական լուծումներ բարդ խնդիրների համար, օգնում են ընկերությանը զարգանալ, կոլեկտիվի շահը գերադասել անհատականից,

4. կատարողականի և աշխատանքի արտադրողականության բարելավում. բարեկիրթ առաջնորդությունը պատասխանատվությունները պատվիրակում է թիմին, խթանում նրանց ստեղծագործական միտքը, խրախուսում համագործակցությունը՝ նպաստելով արդյունավետության բարձրացմանը,

5. թիմի զգացողության ստեղծում. այսինքն՝ ներառականության, վստահության և հաղորդակցության շնորհիվ համագործակցային աշխատանքային միջավայրի ստեղծում, որտեղ խնդիրներն ավելի հեշտ են լուծվում, իսկ որոշումները ընդունվում են համատեղ,

6. աշխատակիցների ավելի մեծ նվիրվածության և ներգրավվածության ապահովում, որտեղ ընկերության յուրաքանչյուր աշխատակից իրեն զգում է ապահով և լսելի, հետևաբար հակված չի լինի լքել ընկերությունը:

Առաջնորդության այս մոտեցումները կարող են կանխել կազմակերպության թուլացումը և կործանումը: Ավելին, կիրառելով նմանատիպ մեթոդներ, կազմակերպությունը կարելի է դարձնել ավելի երիտասարդ տաղանդների փնտրտուքի վայր: Այս նոր մոտեցումները կարող են բերել միայն օգուտներ, որոնք անհնար է անտեսել:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել նաև, որ կազմակերպությունների կառավարման մեջ բարեկրթությունը համարժեք չէ տկարությանը, թուլությանը, կրավորականությանը: Ավելին՝ բարեկիրթ առաջնորդը պարտավոր է ընդունել և կայացնել բարդ որոշումներ, երբ աշխատանքային խմբի առջև դրված են դժվարին խնդիրներ, և չի հաջողվում հասնել դրանց լուծմանը: Նրա ուժը իշխանությունը և կարեկցանքը հավասարակշռելն է՝ ըմբռնումով հարթելով կոնֆլիկտները: Այսօր շատ է խոսվում իսկական առաջնորդի որակական հատկանիշներից. բարեկիրթ մոտեցումը հիմնական հատկանիշ կարելի է համարել, որը իրական էներգիա է ստեղծում թիմի շրջանակներում՝ օժտելով կազմակերպությանը արդյունավետ կառավարմամբ: Յուրաքանչյուրի ներուժն աճում է իր գիտելիքներով և ճանաչելիությամբ, ինչն էլ կարող է երաշխավորել արդյունարար ազդակը:

**ЭДГАР КАЛАНТАРЯН – *Продуктивный импульс управления организациями: вежливое лидерство*.** – Руководители групп в ведущих организациях начинают восстанавливать свои навыки с помощью методологии обучения, которая может обеспечить беспрецедентный прогресс для любой организации. Когда лидер уделяет особое внимание слушанию, признанию, общению и оценке талантов, в этом случае мы имеем дело с вежливым лидерством. Это новый подход, который развивает профессиональные навыки людей, помогая им использовать собственный потенциал, создавая подходящее пространство и возможности.

В корпоративной среде это позволяет создать позитивную и стимулирующую среду, в которой сотрудники чувствуют себя ценными и важными. Сотрудники под руководством хорошо воспитанного лидера чувствуют себя более уверенно, потому что чувствуют, что могут выражать свои мысли не подвергаясь осуждению. Доброта увеличивает общение и сотрудничество, хороший лидер внимательно слушает и уважает идеи других.

Этот метод лидерства включает в себя такие качества, как образованность, вежливость, управленческие навыки, доброжелательность и т. д.. Также важно отметить, что в управлении организациями доброта не эквивалентна слабости, бессилию, страсти, более того, ее сила состоит в том, чтобы уравновешивать силу и сострадание, встречая конфликты с пониманием.

**Ключевые слова:** *вежливое лидерство, эффективность, новые методы управления, продуктивный импульс, доброжелательность, работа в команде, лидерство, влияние, управление, позитивное окружение, профессиональные навыки*

**EDGAR KALANTARYAN – *The Productive Impulse of Management of Organization: Kind Leadership.*** – Team leaders at leading organizations are beginning to rebuild their skills with a training methodology that can deliver unprecedented progress for any organization. When a leader emphasizes listening, recognition, communication and talent appreciation, in this case we are dealing with Kind Leadership. It is a new approach, which develops people's professional skills, helping them to use their own potential by creating the right space and opportunity. In a corporate environment, it allows you to create a positive and stimulating environment where employees feel valued and important. Employees with a well-mannered leader feel more confident because they feel they can express their thoughts and concerns without being judged. Goodness increases communication and cooperation, a good leader listens carefully and respects the ideas of others.

This method of leadership includes qualities such as good education, politeness, management skills, benevolence, etc. It is also important to note that in the management of organizations, kindness is not equivalent to weakness, weakness, passion, moreover, its strength is to balance power and compassion, facing conflicts with understanding.

**Key words:** *kind leadership, efficiency, new management methods, productive impulse, benevolence, teamwork, leadership, influence, management, positive environment, professional skills*

Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն
2024, Vol. 15, No. 1(43), ապրիլ, 93-107
https://doi.org/10.46991/BYSU:D/2024.15.1.093

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՄԱՐԻԱՄ ԳԶՈՂՅԱՆ *
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ*

Արդի միջազգային հարաբերություններում պետությունները մեծ կարևորություն են տալիս տեղեկատվական անվտանգության մեխանիզմների արդիականացման և պահպանման հիմնախնդիրներին: Հարկ է նկատել, որ տեղեկատվության դերի ու ծավալի աճին զուգահեռ՝ ավելացել են նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, ուստի տեղեկատվության պաշտպանությունը դարձել է մի շարք պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը:
Մեր երկրի քաղաքական զարգացման բազմակողմ խնդիրների լուծումը և դրանց հետ կապված քաղաքական գործընթացների կանխատեսման կոնկրետ տեխնոլոգիաների և ընդհանուր մեթոդաբանության կատարելագործման գործուն միջոցների որոնումների արդիական հարցերն այսօր ակադեմիական և իշխանական շրջանականերում շատ են կարևորվում:
Գիտության ու քաղաքականության մեջ ներկայումս առավելապես ուշադրություն է դարձվում անվտանգության ոչ ռազմական կողմին: Այս պարագայում պետությունների ու միջազգային կազմակերպությունների համար հրամայական է դառնում համալիր անվտանգության ապահովումը բոլոր՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ռազմական ուղղություններում: Ընդ որում, երկրները, ըստ իրենց ռեժիմի բնույթի, խնդիրը լուծում են տարբեր կերպ. մի մասը տեղեկատվական դաշտը փակում է՝ արգելելով նույնիսկ սոցիալական ցանցերի օգտագործումը, մյուսներն ավելի լիբերալ մեթոդներ են կիրառում[1]:

* **Մարիամ Գզողյան** – ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ» բաժնի հայցորդ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի օգնական
**Мариам Гзогян** – Института Философии, социологии и права Национальной академии наук Армении, Соискатель кафедры Политических процессов и институтов, Заместитель директора Института Философии, социологии и права НАН РА
**Mariam Gzoghyan** – Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of Armenia, Applicant at the Chair of Political Processes and Institutions, Deputy Director of the Institute of Philosophy, Sociology and Law of the NAS of the RA.
Էլ. փոստ՝ mariam.gzoxyan.1998@gmail.com. ORCID: https://orcid.org/0009-0005-1655-9516.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 26.01.2024
Գրախոսվել է՝ 18.03.2024
Հաստատվել է՝ 08.04.2024
© The Author(s) 2024

[1] Տե՛ս **Հայկուհի Մկրտչյան**, «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության զարգացումը, Եր., 2018, էջ 55, https://razmavaraget.files.wordpress.com/2018/03/haykuhi-mkrtchyan.pdf

Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը և հեռահաղորդակցության միջոցների ժամանակակից ձեռքբերումները միջազգային անցուդարձերում սեփական շահերը և նպատակներն առաջ մղելու կարևոր գործիք են դարձել, ուստի պետությունները ջանք ու եռանդ չեն խնայում ունենալու արհեստավարժ «տեղեկատվական բանակ» և տեղեկատվական պաշտպանված ենթակառուցվածքներ: Վերջին տարիների համաշխարհային փորձը վկայում է, որ հակառակորդի դեմ գործողությունների իրականացման համար տեղեկատվական հոսքերի ազդեցությունը կարող է պետությունների ձեռքում հզոր զենք լինել, իսկ այդ զենքին դիմագրավելու ներուժ չունեցող պետությունները կարող են հայտնվել պարտվողների շարքերում:
Հաշվի առնելով Հայաստանում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման բարձր տեմպերը՝ հոդվածում վերլուծության է ենթարկվում այնպիսի արդիական խնդիր, ինչպիսին ենթակառուցվածքների պաշտպանությունն է, որն առանցքային նշանակություն ունի տնտեսության և պետության տարբեր բնագավառների կենսագործունեության համար:

**Բանալի բառեր** – *միջազգային հարաբերություններ, տեղեկատվական անվտանգություն, արդիականացում, հեռահաղորդակցություն, լիբերալ մեթոդներ, ազգային շահ*

**Տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդիրները**

Անդրադառնալով տեղեկատվական անվտանգությանը ՀՀ-ում՝ հարկ է նշել, որ հասարակության ներկայիս զարգացումները բնութագրվում են տեղեկատվական ոլորտի աճող դերակատարությունով: Տեղեկատվական ոլորտը տեղեկություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջությունն է, ինչպես նաև այդ գործընթացների ժամանակ առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ: Վերոնշյալ ոլորտը, ունենալով հասարակական կյանքի համակարգման և կարգավորման կարևոր դեր, լրջորեն ազդում է ՀՀ անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա:

Գիտության, տեխնիկայի, արտադրության ոլորտներում արմատական փոփոխություններով բնութագրվող հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակության ներկայիս դարաշրջանում պետությունները բախվել են ժամանակակից գլոբալ խնդիրների լուծման անհրաժեշտությանը: Դրանցում առանցքայիններից է տեղեկատվական անվտանգության խնդիրը, որը ներթափանցում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները:

Անհատի շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են մարդու և քաղաքացու՝ օրենքով չարգելված գործունեություն իրականացնելու, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման համար օգտագործվող տեղեկատվության հասանելիության սահմանադրական իրավունքի իրագործումը, ինչպես նաև շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության

հասանելիությունը և անձնական անվտանգությունն ապահովող տեղեկատվության պաշտպանությունը:

Հարկ է նկատել, որ տեղեկատվական հասարակությունը սահմանվում է որպես հասարակական և արտադրական հարաբերությունների զարգացման վիճակ, որտեղ արտադրանքի հիմնական մասը ոչ թե արդյունք է նյութական արտադրության, այլ բարձր տեխնոլոգիաների՝ տեղեկատվական արտադրանք ստանալու և վաճառելու նպատակով ստեղծված մտավոր աշխատանքի արդյունք[2]:

Հասարակության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են անձի շահերի ապահովումը, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական-սոցիալական պետության կառուցումը, հասարակական համաձայնության և հանդուրժողականության հաստատումը, ինչպես նաև հասարակության տարբեր հատվածների հոգևոր ու պատմամշակութային ժառանգության պահպանումը, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրությունն ու զարգացումը, ազգային ինքնության հիմնասյուների՝ բարոյահոգեբանական կերտվածքի, լեզվի և ազգային եկեղեցու դերի ամրապնդումը, պետության, սփյուռքի միասնության տեղեկատվական կապի ապահովումը: Այս համատեքստում հետաքրքիր է հոգեբան Կ. Նալչաջյանի կարծիքը, ըստ որի՝ ազգային հոգեբանության նվազման և ինքնագիտակցության թուլացման հետևանքով այսօր Հայաստանը կանգնած է ազգային ինքնության վերացման սպառնալիքի առջև, որը նաև պատճառ է արտագաղթի, մշակութային, կրթական արժեքների թուլացման:

Ազգային շահերի հիմքով պետական քաղաքականությունը խնդիր ունի ապահովել պետության և հանրության անվտանգությունն ու զարգացումը: Կարևոր են ոչ միայն այդ շահերի ողջամիտ ու հստակ արժևորումը, այլ նաև ռեսուրսների այն հանրագումարի առկայությունն ու հավաքագրումը, որոնք ազգային շահերի իրականացման հնարավորություն կընձեռեն:

Ժամանակակից աշխարհում պետության հզորության ներուժն անկասկած մեծ դեր է խաղում, սակայն ազգային շահերի իրացման գործում նշանակալի դերակատարում ունեն մի շարք կարևոր գործոններ, որոնցից են՝ միջազգային հանրության դիրքորոշումը և շահերը, պետության ժողովրդավարացման աստիճանը, պետության և ազգի քաղաքակրթական զարգացվածության մակարդակը և այլն[3]:

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում, ներքաշված է տեղեկատվական ակտիվ ներազդեցությունների և հոսքերի մեջ: Այսօր մեր առջև ծառացած են այնպիսի խնդիրներ,

---

[2] Տե՛ս **Емельянов Г. В., Стрельцов А. А.** Проблемы обеспечения безопасности информационного общества // Распределенная конференция «Технологии информационного общества 98 – Россия», http://www.iis.ru/events/19981130/streltsov.ru.html

[3] Տե՛ս **Ա. Ղևոնդյան**, Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնային միջավայրում, Եր., 2011, էջ 19:

ինչպիսիք են՝ նվազագույնի հասցնել տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերին սպառնացող վտանգների բացասական ազդեցությունը և ազգային, պետական նպատակների անվտանգ իրականացման գործընթացներում հանդես գալ նոր և ժամանակակից պահանջները բավարարող նախաձեռնություններով, ստեղծել արդի տեղեկատվական գործընթացներին համապատասխան տեղեկատվական քաղաքականության ռազմավարություն, ապահովել ՀՀ տեղեկատվական անվտանգությունը և՛ ներպետական, և՛ միջազգային հարթակներում:

Ներկայումս ՀՀ առջև ծառացած են նաև տեղեկատվական անվտանգային մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ կեղծ և խեղաթյուրված տեղեկատվության տարածումը, միջազգային ահաբեկչական գործունեությունը տեղեկատվական դաշտում, միջազգային տեղեկատվական աղբյուրներով հակահայկական կեղծ տեղեկատվության տարածումը, ՀՀ տեղեկատվական և հեռահաղորդակցային համակարգերի բնականոն գործունեությունը խաթարելը, տեղեկատվական միջոցների պահպանման անարդյունավետությունը:

Հատկանշական է, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում առկա են ոլորտին առնչվող հետևյալ իրավական փաստաթղթերը՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»[4], «Տեղեկատվության ազատության մասին»[5], «Արխիվային գործի մասին»[6], «Անձնական տվյալների մասին»[7], «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»[8], «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»[9], «Ահաբեկչության դեմ պայքարի» ազգային ռազմավարությունը[10], «Էլեկտրոնային հասարակության ձևավորման» հայեցակարգը[11], «Զանգվածային լրատվության մասին»[12] Հայաստանի Հանրապետության օրենքները:

Կարող ենք ասել, որ ՀՀ տեղեկատվական անվտանգության ներկայիս մակարդակը դեռևս չի համապատասխանում հասարակության ու պետության

---

[4] Տե՛ս «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docID=26193

[5] Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1372

[6] Տե՛ս «Արխիվային գործի մասին» օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1644

[7] Տե՛ս «Անձնական տվյալների մասին» օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=98338

[8] Տե՛ս «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=1547

[9] Տե՛ս «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենք, 2005, https://www.arlis.am/documentview.aspx?docid=1547

[10] Տե՛ս «Ահաբեկչության դեմ պայքարի» ազգային ռազմավարությունը, 2012, https://www.arlis.am/documentview.aspx?docid=75353

[11] Տե՛ս «Էլեկտրոնային հասարակության ձևավորման» հայեցակարգը, Նախագիծ, 2010, http://www.irtek.am/views/act.aspx?aid=52982

[12] Տե՛ս «Զանգվածային լրատվության մասին» օրենք, 2003, http://www.irtek.am/views/act.aspx?aid=23491

արդի պահանջներին, և կարծում ենք, որ անհրաժեշտ է ունենալ այնպիսի իրավակարգավորող օրենքներ, ակտեր, որոնք կունենան հստակ ուղղվածություն և կնպաստեն ոլորտի կայուն զարգացմանն ու անվտանգ ապագայի երաշխիք կդառնան:

Նշենք, որ Հայաստանում բացակայում է ընդհանուր, բազային օրենքը, որը կսահմաներ տեղեկատվության հասանելիության, գաղտնիության և տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ ընդհանուր դրույթները:

Այսպես, տեղեկատվական անվտանգային խնդիրները ՀՀ ամենավտանգավոր մարտահրավերներից են թե՛ տեխնիկական, թե՛ բովանդակային առումով: Գտնում ենք, որ մեր հանրապետությունը տեղեկատվական անվտանգության պաշտպանության գործընթացների համար պետք է ձևավորի առավել հստակ տեսլական և ռազմավարություն:

Հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման արդի պայմանները սրում են հակասությունները հասարակության տեղեկատվության ազատ փոխանակման պահանջմունքների ընդլայնման և տեղեկատվության տարածման առանձին կանոնակարգված սահմանափակումները պահպանելու անհրաժեշտության միջև:

Տեղեկատվության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման թույլ զարգացած և հակասական վիճակը հանգեցնում է բացասական լուրջ հետևանքների: Սահմանադրական կարգի հիմքերի, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, երկրի պաշտպանունակության և պետության անվտանգության ապահովման նպատակով կիրառվող զանգվածային տեղեկատվության ազատության՝ սահմանադրական հնարավոր սահմանափակումների բնագավառում հարաբերությունների անբավարար իրավական-նորմատիվային կարգավորումն էապես դժվարացնում է տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության շահերի անհրաժեշտ հավասարակշռության ապահովումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում հայկական տեղեկատվական մրցունակ գործակալությունների և զանգվածային լրատվամիջոցների ձևավորումը[13]:

Անհրաժեշտ է իրականացնել տեղեկատվության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական զարգացմանն ու հակասական վիճակի կայունացմանն ուղղված աշխատանքներ, մշակել տեղեկատվական անվտանգության ապահովման պետական հստակ ծրագրեր, տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգերի և միջոցների արդյունավետության գնահատման չափանիշներ ու մեթոդներ, ապահովել և զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգությունը:

Այսպիսով, ամփոփելով վերն ասվածը, նշենք, որ «տեղեկատվական անվտանգություն» հասկացության հիմնական էությունը տեղեկատվական

---

[13] Տե՛ս ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=52559

փոխազդեցության սուբյեկտների պաշտպանվածությունը բացասական ազդեցությունից ապահովելն ու սոցիալական սուբյեկտների տեղեկատվական պահանջմունքները բավարարելն է: Այդ ամենին հասնել հնարավոր է նախ և առաջ հասարակության ու դրա սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում բացասական ազդեցության ուսումնասիրմամբ, որը կնպաստի դրանց վնասակար ազդեցության հաղթահարմանը և ապահով տեղեկատվական միջավայրի ձևավորմանը:

### Տեղեկատվական հակամարտության տեխնոլոգիաները

Ինչպես նշում է ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Հենրի Քիսինջերը, սովորական են դարձել տեղեկատվական դարաշրջանի՝ որպես պատմության մեծ, նույնիսկ մեծագույն մտավոր հեղափոխության մասին խոսակցությունները և նրա սոցիալական, տնտեսական ու քաղաքական կողմերի վրա սևեռվելը: Հազվադեպ, սակայն, քննարկվում է նաև նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա, բացառությամբ թերևս ժամանակակից հաղորդակցության միջոցների գլոբալ հնարավորությունների մասին վավերագրումների: Ընդ որում՝ այստեղ նկատի են առնվում միայն թվերը և տեղեկատվության փոխանցման արագությունը: Միջազգային հարաբերությունները, հետևաբար նաև պատմության ընթացքը, կախված չեն միայն տեղեկատվություն ունեցող մարդկանց թվաքանակից. առավել կարևոր են ընկալման եղանակները: Քանի որ հասանելի տեղեկատվության ծավալը սովորաբար գերազանցում է դրանց մշակման հնարավորությունները, բնականաբար խորանում է տեղեկատվության ու գիտելիքի, առավել ևս՝ գիտելիքի և իմացության միջև խզումը:

«Տեղեկատվական պատերազմներ» հասկացությունը, ի հայտ գալով 20-րդ դարի վերջին քառորդում, կարճ ժամանակամիջոցում բազում հեղինակների ուշադրության կենտրոնում է հայտնվել: Առանձնացնենք մի քանիսը՝ Մ. Լիբիկիի «Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը», Գ. Պոչեպցովի «Տեղեկատվական պատերազմներ, ռազմական-հաղորդակցական հետազոտությունների հիմունքներ», Գ. Հարությունյանի «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում» և այլն:

1976 թ. Թոմաս Ռոնան իր զեկույցում «Բոինգ» ընկերության համար օգտագործեց «Սպառազինությունների համակարգը և տեղեկատվական պատերազմը»[14] (Weapon Systems and information war) բնորոշումը, որի հիմնական թիրախ էին հաղորդակցության համակարգերը: Թոմաս Ռոնան կարևորում էր, որ ռազմական ոլորտում հաղորդակցության միջոցների նոր ձեռքբերում-

---

[14] Տե՛ս **Thomas P. Rona**, Weapon Systems and Information War. Boeing Aerospace Co., Seattle, WA, 1976, p.15, https://www.esd.whs.mil/Portals/54/Documents/FOID/Reading%20Room/Science_and_ Technology/09-F-0070-Weapon-Systems-and-Information-War.pdf

ները պահանջում են ինտեգրացիոն նոր որակ: Տեղեկատվական արտահոսքերի բացառման միջոցով հակառակորդին չպետք է հասու լինեն հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված հաջողությունները: Նա գտնում էր, որ տեղեկատվական պատերազմը հակառակորդի վտանգավոր տեղեկատվական արտահոսքերից պաշտպանվածությունն է, միաժամանակ՝ հակառակորդի դեմ ուղղված տեղեկատվական հոսքերի ապահովումը:

Տեղեկատվական պատերազմների մասնագետները «տեղեկատվական պատերազմ» ասելով նկատի ունեն գործողությունների համակարգ, որն ուղղված է հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական ենթակառուցվածքների վրա ազդեցություն գործելուն, սեփական տեղեկատվությունն ու տեղեկատվական համակարգերը պաշտպանելուն: Այս սահմանումից երևում է, որ տեղեկատվական պատերազմները ներառում են ոչ միայն տեղեկատվական հարձակումներ, այլև տեղեկատվական պաշտպանություն և անվտանգություն: «Տեղեկատվական պատերազմներ» և «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունները սերտորեն փոխկապված են: Տեղեկատվական պատերազմը սուբյեկտն է, որի խնդիրն է խանգարել, շարքից հանել կամ ոչնչացնել տեղեկատվական անվտանգությունը (օբյեկտը): Տեղեկատվական անվտանգությունը կարելի է բնորոշել որպես հասարակության և ղեկավար մարմինների, պետության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածություն: Անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվական անվտանգությունը ներառում է ինչպես հասարակության և պետության տեղեկատվական միջավայրի անվտանգության պաշտպանվածությունը, այնպես էլ տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության հիմնախնդիրները:

Ինչպես նշում է տեղեկատվական անվտանգության հայտնի փորձագետ Ի. Պանարինը, մարդկության պատմության ամբողջ ընթացքում տեղեկատվական պատերազմը եղել է համաշխարհային քաղաքականության հիմնական գործիքը, աշխարհում հզոր, քաղաքական, ֆինանսական և տնտեսական իշխանության հասնելու գերակայող միջոցը:

**Տեղեկատվական զենք:** Լայն իմաստով այս եզրույթի տակ հասկացվում են հակառակորդին ուղղված տեղեկատվական ներգործության և այդպիսով նրան կառավարելու միջոցները, որոնց նպատակն է հակառակորդի ռազմավարական և մարտավարական մտահղացումները ներգործողի համար բարենպաստ ուղղությամբ փոխելը: Ավելի նեղ իմաստով՝ տեղեկատվական զենք ասելով հասկացվում է մեթոդների, տեխնիկական և տեխնոլոգիական միջոցների այն համալիրը, որը նախատեսված է պոտենցիալ հակառակորդի տեղեկատվական ռեսուրսների հանդեպ վերահսկողություն սահմանելու և նրա տեղեկատվական համակարգերի աշխատանքին միջամտելու համար՝ դրանք շարքից դուրս բերելու, դրանցում պարունակվող տվյալները ստանալու կամ փոխելու, ինչպես նաև ներազդողի համար շահավետ տեղեկատվությունը (կամ ապատեղեկատվությունը) նպատակաուղղված ներմուծելու նպատակով:

Ներկայումս տեղեկատվական զենքի տեսակները և դրանց կիրառման մեթոդները շարունակ կատարելագործվում են: Ակնհայտ է, որ այդ գործընթացն անմիջականորեն փոխկապակցված է տեղեկատվական պատերազմների նոր հայեցակարգերի մշակման և իրականացման խնդիրների հետ:

Տեղեկատվական զենքի կիրառումը ենթադրում է ոչ միայն հնարավորինս լավ իմանալ հակառակորդի տեխնիկական միջոցների բնութագրերը, այլ նաև խորը իմացություն ունենալ թիրախ հանդիսացող անձի և զանգվածների էթնոհոգեբանության, մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ, քանի որ դրանք են պայմանավորում մարդու՝ տեղեկատվությունն ընկալելու և վերծանելու ու ըստ այդմ որոշում ընդունելու, այն իրականացնելու գործընթացը:

Տեղեկատվական պատերազմներում կարևոր դերակատարություն ունեն զանգվածային լրատվամիջոցները: Տարբեր երկրներ, ունենալով զարգացած և նորագույն տեխնիկական հնարավորություններով հագեցած, հեղինակություն վայելող և աշխարհի տարբեր երկրներում հեռարձակվող լրատվամիջոցներ, միջազգային զանազան անցուդարձերում ձևավորում են իրենց նպատակահարմար տեղեկատվական մթնոլորտ: Սրանք իրականացնում են տեղեկատվության հավաքում, մշակում, վերլուծում, որից հետո լուրերը հաղորդում են հասցեատիրոջը՝ ունենալով որոշակի ուղղվածություն: Մեթոդներն ու հնարավորությունները, որոնք կիրառվում են տեղեկատվական հակամարտություններում, կարող են ուղղորդել մարդկանց, հասարակության, պետությունների քայլերը:

Խոսելով «տեղեկատվական պատերազմների» մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն ոչ թե քարացած, այլև փոփոխվող, զարգացող գործողությունների համախումբ է: Տեղեկատվական պատերազմների գործընթացում սկսվում, շարունակվում են համակարգի բաղադրիչների փոփոխություններ, այդ իսկ պատճառով բարդ է հստակորեն կանխատեսել, թե գործընթացն իր բազմաքանակ տարրերով ինչպիսի վերջնական տեսք կունենա:

Ռազմական հնարքների և անուղղակի գործողությունների (որոնցում կարևոր դերակատարում ունեն տեղեկատվական գործողությունները) տեսական հիմունքներն ու փիլիսոփայությունը հնարավորինս բազմակողմանիորեն մշակել է չինացի խոշոր մտածող Սուն Ցզին (մ.թ.ա. IV դար, ըստ որոշ աղբյուրների՝ մ.թ.ա. VI դար):

Նրա հանրահայտ «Տրակտատ ռազմարվեստի մասին» աշխատությունն առ այսօր հիմք է տեսական տարաբնույթ հետազոտությունների, իսկ այնտեղ ներկայացված հիմնադրույթները լայնորեն օգտագործվում են կիրառական նշանակություն ունեցող մշակումներում: Չինացի փիլիսոփան համարում էր, որ պատերազմել կարելի է միայն այն պարագայում, երբ արդեն սպառվել են հակառակորդին հաղթելու մնացած միջոցները: Իդեալական հաղթանակը, ըստ Սուն Ցզիի, առանց ռազմական գործողություններ կատարելու մրցակից

պետություններին դիվանագիտական մեթոդներով ենթարկեցնելն է: Այդ նպատակով անհրաժեշտ է վարել ակտիվ դիվանագիտություն, քայքայել հակառակորդի դաշինքները և խաթարել նրա ռազմավարությունը (այսօր նման քաղաքականությունը հաճախ բնութագրվում է որպես «փափուկ ուժի» կիրառում):

### Տեղեկատվածին (ինֆոզեն) սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության միջոցները

Բոլոր ժամանակներում յուրաքանչյուր պետության գլխավոր հիմնախնդիրներից է եղել պաշտպանել երկրի անվտանգությունը: Երբ ինֆոզեն գործողություններն ուղղված են մրցակիցների կամ պայմանական հակառակորդների շահերի դեմ, դրանք պետք է ընդունել որպես մարտահրավերներ: Վերջիններս հիմնականում լինում են երկու տիպի.

1. **Հոգևոր-գաղափարախոսական բնույթի ինֆոզեն սպառնալիքներ**, որոնք ուղղված են ազգի, հասարակության ու անհատի դեմ, և որոնք ներազդողի շահերի համատեքստում ենթադրում են՝

- խաթարել հանրության գիտակցությունը (երբեմն անգամ ենթագիտակցության մակարդակով), հոգևոր և ազգային արժեհամակարգը,
- փոխել հասարակության և առանձին անհատների (այդպիսով՝ պետության) քաղաքական ու քաղաքակրթական կողմնորոշումները (այսպես կոչված՝ «քաղաքակրթական կոդը»),
- նվազեցնել հասարակության և պետության ընդհանրական մտավոր-գիտելիքային ռեսուրսները և այդպիսով սահմանափակել տվյալ հանրության զարգացման հնարավորությունները:

2. **Տեխնոզեն բնույթի ինֆոզեն սպառնալիքներ**, որոնք ուղղված են անհատի, հասարակության, ազգի և պետության գործունեությունը կազմակերպող և համակարգող տեղեկատվական-տեխնոլոգիական համակարգերի դեմ:

Ինֆոզեն սպառնալիքների աղբյուրները կարող են լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին: Արտաքին ինֆոզեն սպառնալիքների աղբյուր հայ հանրության պարագայում կարող են լինել՝

- պետությունների և հանրության մրցակից կամ հակառակորդ երկրներն ու կազմակերպությունները,
- գլոբալ տեղեկատվական դաշտում շրջանառվող, բայց ոչ հատուկ հայ հանրության դեմ ուղղված քաոտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք բացասական ներգործություն են ունենում հանրային և անհատական գիտակցության վրա:

Ինֆոզեն ներքին սպառնալիքների աղբյուր կարող են լինել՝

- Հայաստանում տեղակայված, սակայն օտարերկրյա աղբյուրներից սնվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները և զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ), որոնց գործունեությունը չի համապատասխանում հայ հանրության շահերին,

- մասնավոր և պետական ներքին ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները, ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ն, որոնց պատկերացումները հայ հանրության ազգային շահերի վերաբերյալ հստակեցված չեն: Որպես հետեվանք՝ նման կառույցները կարող են ակամա կամ քաղաքական-գաղափարախոսական սխալ կողմնորոշումների հետևանքով ինֆոգեն վտանգի աղբյուր լինել հայ հանրության համար: Գործողությունների որոշ դրսևորումները երբեմն որակվում են որպես «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ»:
- Իրենց հերթին ինֆոգեն մարտահրավերների բացահայտումը, համապատասխանաբար համակարգումը և վերլուծությունը թույլ են տալիս հասկանալ պայմանական հակառակորդի կամ մրցակցի ռազմավարությունը և դրա իրագործման մեթոդաբանությունը: Ի լրումն նշենք, որ ինֆոգեն սպառնալիքները համապատասխան մեկնություններով և «տեղեկատվական ուղեկցությամբ» հանրությանը ներկայացնելը մոբիլիզացնում է հասարակությունն ու պետությունը, ինչը նպաստում է, որ նետված մարտահրավերներին տրվեն համարժեք պատասխաններ:

Պետության անվտանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում՝

- ռազմաքաղաքական անվտանգությունը,
- սոցիալ-տնտեսական անվտանգությունը,
- տեղեկատվական անվտանգությունը:

Այս բաղադրամասերը փոխկապակցված են, իսկ նրանց միջև սահմանները շատ պայմանական են: Այս երեք տարրերից որևէ մեկի անտեսումը կարող է թերի դարձնել պետության անվտանգությունը: Ավանդաբար ընդունված է համարել, որ անվտանգության համակարգի գագաթում է ռազմական ոլորտը (ռազմական անվտանգության հետ է հիմնականում նույնացվում «անվտանգություն» հասկացությունը), որից ածանցվում են մյուս ոլորտները: Ժամանակակից զարգացումները ստիպում են տեսաբաններին հրաժարվել ավանդական մոտեցումներից և անվտանգության ապահովման գործում ընդունել հասարակության՝ ոչ ռազմական ոլորտների կենսագործունեության կարևորությունը, որի պայմաններում անվտանգության համակարգը ներկայանում է ոչ թե բուրգի, այլ ցանցի տեսքով, որի կենտրոնում (այլ ոչ գագաթին) գտնվող տեղեկատվական անվտանգությունը փոխկապակցվում է անվտանգության համակարգի մյուս բաղադրատարրերի հետ[15]:

Տեղեկատվական հասարակության պայմաններում, երբ փոփոխության են ենթարկվել և մեծացել են տեղեկատվության ծավալները, նոր իրադրություն է ստեղծվել դիվանագիտական գործընթացներում: Իհարկե, դիվանագիտական

---

[15] Տե՛ս Գ. **Հարությունյան**, *ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում*, Եր., Նորավանք ԳԿՀ, 2002, էջ 5-10, http://www.noravank.am/upload/pdf/71_am.pdf

գործունեության ավանդական միջոցները պահպանում են իրենց արդիականությունը, սակայն նոր մեթոդներին տիրապետելը դառնում է հրամայական: Եթե նախկինում միայն դիվանագետներն էին քաջատեղյակ աշխարհի այս կամ այն հատվածում տեղի ունեցող անցուդարձերին, ապա ներկա պայմաններում յուրաքանչյուր քաղաքացի համացանցի միջոցով հնարավորություն է ստացել ձեռք բերելու համապատասխան տեղեկատվություն:

Տեղեկատվական դիվանագիտությունը միջազգային լայն ճանաչման հասնելու կարևորագույն նուրբ գործիք է: Այն զանգվածային հաղորդակցության միջոցներով առաջ է տանում արտաքին քաղաքական շահերը և տեղեկատվությունը հասցնում է հասարակությանը և քաղաքական վերնախավին: Յուրաքանչյուր պետության արտաքին քաղաքականության մարմնի ներկայացուցիչ կիրառում է տեղեկատվական դիվանագիտության գործիքները:

### Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության առկա իրավիճակը

Վերջին շրջանում իրականացվել են մի շարք միջոցառումներ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական քաղաքականության և տեղեկատվական անվտանգության ապահովման բարելավման ուղղությամբ: Սկսվել է տեղեկատվական անվտանգության իրավական-նորմատիվային դաշտի ձևավորումը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացրել է «Կիբեռհանցագործությունների մասին» Եվրախորհրդի կոնվենցիան և դրա «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրությունը, որոշակի աշխատանք է տարվում տեղեկատվական ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական հիմքերի մշակման, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ[16]:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա մակարդակը դեռևս չի համապատասխանում հասարակության և պետության ներկայիս պահանջներին:

Հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման արդի պայմանները հակասությունների սրում են առաջացնում հասարակության տեղեկատվության ազատ փոխանակման պահանջմունքների ընդլայնման և տեղեկատվության տարածման առանձին կանոնակարգված սահմանափակումների պահպանման անհրաժեշտության միջև:

---

[16] Տե՛ս ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=52559

Տեղեկատվության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման թույլ զարգացած և հակասական վիճակը հանգեցնում է բացասական լուրջ հետևանքների: Սահմանադրական կարգի հիմքերի, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պահպանության, երկրի պաշտպանունակության և պետության անվտանգության ապահովման նպատակով կիրառվող զանգվածային տեղեկատվության ազատության սահմանադրական հնարավոր սահմանափակումների բնագավառում հարաբերությունների անբավարար իրավական-նորմատիվային կարգավորումն էապես դժվարացնում է տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության շահերի անհրաժեշտ հավասարակշռության ապահովումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում մրցունակ հայկական տեղեկատվական գործակալությունների և զանգվածային լրատվամիջոցների ձևավորումը:

Քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոչ լիարժեք ապահովումը, նրանց մատուցվող տեղեկատվության միտումնավոր խեղաթյուրումն առաջացնում են բնակչության դժգոհությունը, ինչն առանձին դեպքերում հասարակության մեջ հանգեցնում է սոցիալ-քաղաքական իրավիճակի անկայունության:

Քաղաքացիների մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան գաղտնիքի, նամակագրության գաղտնիության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները դեռևս չունեն իրավական, կազմակերպական և տեխնիկական անհրաժեշտ ապահովվածություն: Բարելավման և արդիականացման կարիք ունի նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզիկական անձանց մասին հավաքվող տվյալների (անձնական տվյալների) պաշտպանությունը:

Որակյալ մասնագետների զանգվածային արտահոսքի հետևանքով զգալիորեն նվազել է տեղեկատվության, հեռահաղորդակցության և կապի բնագավառի կադրային ներուժը:

### Տեղեկատվական տարածքի վերահսկման օրենսդրական և վարչական միջոցները

ԶԼՄ-ի կողմից մարդկանց մտածելակերպի, հոգեվիճակի և վարվելաձևի վրա ազդելու հնարավորությունները մարտահրավեր են ցանկացած հասարակության համար: Այդ մարտահրավերները որոշ դեպքերում վերածվում են լուրջ սպառնալիքների այս կամ այն պետության ազգային և տեղեկատվական անվտանգության տեսանկյունից: Արդարացի են նրանք, ովքեր կարծում են, որ նման տեղեկատվության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներն են համապատասխան հակաքարոզչությունը և տեղեկատվական հնարքների բացահայտումը: Հատուկ ուշադրության են արժանի այն իրավիճակները, երբ սպառնալիք ներկայացնող տեղեկատվական հոսքերն իրականացվում են ոչ

բարեկամ պետությունների և կազմակերպությունների կողմից ու հետապնդում են տվյալ հասարակությունն ապակայունացնելու, խարխլելու նպատակ: Հայտնի է նաև, որ մեր դարաշրջանում ոչ բարեկամական ԶԼՄ-ի բովանդակության ձևավորումն ընթանում է տարաբնույթ ՀԿ-ների և ոչ պետական կառույցների անմիջական մասնակցությամբ: Արդյունքում երբեմն ստեղծվում է վիճակ, երբ նման սպառնալիքներից հնարավոր է պաշտպանվել միայն վարչական և օրենսդրական միջոցներով:

Մեր օրերի քարոզչական մեքենաներից մեկը համարվում է համացանցը, որը դարձել է հակամարտության մի մասնիկը: Ադրբեջանական պետական քարոզչամեքենան, նախագահի՝ Ի. Ալիևի գլխավորությամբ և հովանավորությամբ, չի խնայում ո՛չ նյութական, ո՛չ մարդկային ռեսուրսներ համացանցում հակահայկական քարոզչություն իրականացնելու համար: Ադրբեջանն այսօր ավելացնում է իր ներկայությունը համացանցում՝ ի հաշիվ անընդհատ ավելացող լրատվական կայքերի, որոնք ակտիվորեն ապատեղեկատվություն և քարոզչական բնույթի նյութեր են տարածում Հայաստանի դեմ:

Ներկայումս ՀՀ-ի առջև ծառացած են մի շարք տեղեկատվական անվտանգային խնդիրներ, ինչպիսիք են՝ կեղծ և խեղաթյուրված տեղեկատվության տարածումը, միջազգային ահաբեկչական գործունեությունը տեղեկատվական դաշտում, միջազգային տեղեկատվական աղբյուրներով հակահայկական կեղծ տեղեկատվության տարածումը, հայ ազգային և մշակութային ինքնության դեմ ուղղված քայքայիչ գործողությունները, արտաքին սուբյեկտների հետախուզական գործունեությունը, ՀՀ տեղեկատվական և հեռահաղորդակցային համակարգերի բնականոն գործունեությունը խաթարելը, տեղեկատվական միջոցների պահպանման անարդյունավետությունը:

Ի մի բերելով նշենք, որ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության բաղկացուցիչ մասն է և իր ազդեցությունն է թողնում երկրի ազգային շահերի պաշտպանվածության վրա հասարակության և պետության կենսագործունեության տարբեր բնագավառներում: Սպառնալիքները ՀՀ տեղեկատվական անվտանգության նկատմամբ և անվտանգության ապահովման ձևերն ընդհանուր են բոլոր բնագավառների համար:

## Եզրակացություն

Ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

- Տեղեկատվական հասարակությունում տեղեկատվությունը ձեռք է բերել նոր որակներ՝ գերակշռող արժեք, ռազմավարական ռեսուրս, քանի որ տեղեկատվության ստեղծումը, մշակումը, փոխանցումը արտադրողականության, իշխանության, կառավարման վճռորոշ աղբյուր են: Տեղեկատվությունը հասարակական և քաղաքական զարգացումները կառավարող որոշիչ գործոն է:

➢ 21-րդ դարը յուրահատուկ է ցանցայնացման և վիրտուալացման գլոբալ գործընթացներով, որոնք ի սկզբանե ակնառու էին իրենց բացասական կողմերով: Նրջագույն վտանգներից է կիբեռհանցավորության և կիբեռսպառնալիքների աճը, ինչը սպառնում է պետությունների, հասարակությունների և անհատների կայուն կենսագործունեությանն ու բնականոն զարգացմանը:

➢ Արդի գլոբալ անորոշությունները լուրջ մարտահրավերներ են նետել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների անվտանգային և քաղաքական համակարգերին: Ներկայիս ձևավորվող աշխարհակարգը կոչված է փոփոխության ենթարկելու տեղային, տարածաշրջանային, գլոբալ առկա սպառնալիքները: Գործընթացի առավել վտանգավոր դրսևորումներից են տեղեկատվական պատերազմները, որոնք ընթանում են ազգամիջյան բախումների, միջպետական հարաբերությունների սրման, ներքաղաքական անհանդուրժողականության դրսևորումներով՝ հանգեցնելով աշխարհաքաղաքական քաոսի, կաթվածահար անելով քաղաքական և հասարակական կյանքը:

➢ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման վերահսկողությունն իրականացվում է իրավական, ինստիտուցիոնալ, տեխնոլոգիական ապահովման և համակողմանի համագործակցության միջոցներով՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների սահմաններում:

**МАРИАМ ГЗОГЯН – *Проблемы модернизации информационной безопасности Республики Армения.*** – В современных международных отношениях государства уделяют значительное внимание вопросам модернизации и поддержанию механизмов информационной безопасности. Важно подчеркнуть, что с увеличением роли и объема информации соответственно выросли и угрозы информационной безопасности. Следовательно, защита информации стала важнейшим вопросом внутренней и внешней политики многих государств.

Анализируя различные научные работы, считаю необходимым подчеркнуть, что если раньше безопасность была связана прежде всего с военными аспектами как в научном, так и в политическом контексте, то сегодня наблюдается возрастающее внимание к невоенным измерениям безопасности. В результате перед государствами и международными организациями теперь стоит задача обеспечения коллективной безопасности в различных областях, включая политику, экономику, общество, экологию и армию. Более того, в зависимости от характера своего режима страны решают проблему по-разному. Одни закрывают информационное поле, запрещая даже использование социальных сетей, другие ищут более либеральные методы (Мкртчян Г., 2018, с. 55).

Достижения в области информационных технологий и телекоммуникаций стали важным инструментом продвижения собственных интересов и целей в международных обменах, поэтому государства не жалеют усилий для создания профессиональных «информационных армий» и безопасных информационных инфраструктур. Мировой опыт последнего времени показывает, что влияние информационных потоков может стать мощным оружием для государств, ведущих действия против своих противников. Государства, не имеющие возможности противостоять этому оружию, могут оказаться в невыгодном положении.

С точки зрения политологии, здесь подчеркивается необходимость сотрудничества частного сектора и государственных институтов в противодействии различным угрозам в сфере информационной безопасности.

**Ключевые слова:** *международные отношения, информационная безопасность, модернизация, телекоммуникации, либеральные методы, национальные интересы*

**MARIAM GZOGHYAN – *Problems of Modernization of Information Security of the Republic of Armenia.*** – In contemporary international relations, states place significant emphasis on the matters of modernization and the upkeep of information security mechanisms. It is important to highlight that with the increasing role and volume of information, the threats to information security have correspondingly grown. Consequently, safeguarding information has emerged as a foremost focal point within the domestic and foreign policies of numerous states.
Analyzing various scientific works, I consider it necessary to emphasize that in the past, security was primarily associated with military aspects in both scientific and political contexts, today, there is a growing focus on the non-military dimensions of security. As a result, states and international organizations are now tasked with ensuring collective security across various domains, including politics, economics, society, ecology, and the military. Moreover, according to the nature of their regime, countries solve the problem in different ways. Some close the information field, banning even the use of social networks, others are looking for more liberal methods (Mkrtchyan H., 2018, p. 55).
Advancements in information technology and telecommunications have become an important tool for promoting their own interests and goals in international exchanges, so states spare no effort in establishing professional 'information armies' and secure information infrastructures. Recent global experience demonstrates that the influence of information flows can be a powerful weapon for states conducting actions against their adversaries. States lacking the capacity to counter this weapon may find themselves at a disadvantage.
From a political science perspective, it emphasizes the necessity of the private sector and state institutions to collaborate in countering various threats in the field of information security.

**Key words:** *international relations, information security, modernization, telecommunications, liberal methods, national interest*

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218

| | |
|---|---|
| Հրատարակչական խմբագիր՝<br>Издательский редактор<br>Publishing Editor | Արմեն Հովակիմյան<br>Армен Овакимян<br>Armen Hovakimyan |
| Վերստուգող սրբագրիչ՝<br>Контрольный корректор<br>Proofreader | Գայանե Գրիգորյան<br>Гаяне Григорян<br>Gayane Grigoryan |
| Թողարկման պատասխանատու՝<br>Ответственный выпуска<br>Issued by | Հասմիկ Եսայան<br>Асмик Есаян<br>Hasmik Yesayan |

Ստորագրված է տպագրության 08. 04. 2024: